



Զիաց Մեր Հանապազորդ

ԱՊՐԻԼ • ՄԱՅԻՍ • ՀՈՒՆԻՍ 2020



Իմ հոգին հնազանդ է միայն Աստծուն,
քանզի նրանից է իմ համբերությունը:
ՍԱՐՄՈՍ 62. 6

Հարգելի՛ բարեկամ,

Սույն գրքույկում Աստվածաշունչ գրքի Հին Կտակարանի բաժնի մեջբերումներն արվել են Աստվածաշնչի՝ Մայր Աթոռ Ս. Էջմիածնի – Հայաստանի Աստվածաշնչային ընկերության հրատարակած ար-ելահայերեն թարգմանությունից (2007), իսկ Նոր Կտակարանի մեջբերումները՝ Հայաստանի Ավետարանական եկեղեցիների միության – Հայաստանի Աստվածաշնչային ընկերության հրատարակած Նոր Կտակարանից (2003):

Առուձավանքը Արագած լեռան արևմտյան լանջի ստորոտում է, Արագածոտնի մարզի Արուճ գյուղում: Գլխավոր վանական համալիրը Սուրբ Գրիգոր եկեղեցին է, որը հայկական հոգևոր և ճարտարապետական նշանավոր կոթողներից է: Ըստ շինարարական արձանագրության Արուճի եկեղեցին կառուցել է Գրիգոր Ա. Մամիկոնյանը VII դ. 60-ական թթ: Տաճարը թեև կանգուն, բայց կիսավեր վիճակում է: Պահպանվել են բրոնզի դարի դամբարանների, հին ամրոցի, քարավանատան (XIII դ.) և այլ հուշարձանների ավերակներ: Մատենագրական աղբյուրներում հիշատակված պալատը, որ նույնպես կառուցել է Գրիգոր Մամիկոնյանը տաճարի հարավարևելյան կողմում, բացվել է 1948-1951 թվականների պեղումների ժամանակ: Արուճի եկեղեցին մեծապես վնասվել է երկրաշարժերի և 16-17-րդ դարերում հավանաբար որպես ամրոց գործածելու հետևանքով: Այն, բացի գմբեթից ու գավիթից, վերականգնվել է 1946-1948թթ: Իր չափերով Արուճի եկեղեցին վաղ միջնադարյան Հայաստանի ամենամեծ պատմամշակութային կոթողներից է:

(www.wikipedia.org).

Լուսանկարը՝ Լարա Գայսերեանի
Փենսիլվեյնիա, Միացեալ Նահանգներ
Lara Kaiserian, PA, USA



Ձեռք մեր հանապազորդ

ԱՊՐԻԼ, ՄԱՅԻՍ, ՀՈՒՆԻՍ 2020

Աստվածաշնչի ամենօրյա անձնական և ընտանեկան
ընթերցումներ և հոգևոր խորհրդածուծություններ

ԼԱ ՏԱՐԻ

Բ ԵՌԱՄՍՅԱԿ

Մեր խորին շնորհակալությունն ենք հայտնում Our Daily
Bread ընկերությունը, որի թույլտվությամբ Our Daily Bread
գրքույկից թարգմանել ենք հաջորդ էջերի
խորհրդածուծությունները:

Ամերիկայի Հայ Ավետարանչական ընկերակցություն
AMAA

31 West Century Road

Paramus, New Jersey 07652, USA

E-mail: amaa@amaa.org, Website: www.amaa.org

Ամերիկայի Հայ Ավետարանչական Ընկերակցության
Հայաստանի մասնաճյուղ

0019, Երևան, Մարշալ Բաղրամյան 18

Հեռ.՝ (010) 54-35-76; (010) 54-35-78

Էլվոստ՝ amaa.armenia@amaa.am

Կայքէջ՝ www.amaa.am

Հիսուսի նման աղոթել

Յուրաքանչյուր մետաղադրամ ունի երկու երես կամ կողմ: Ճակատը կոչվում է «գլուխներ», որովհետև հին հռոմեական ժամանակներում այդ կողմում պատկերվում էր երկրի զեկավարի նկարը: Ետևը կոչվում է «պոչեր»: Այս արտահայտությունը ծագել է բրիտանական տասը դահեկանից, որի վրա պատկերված էր պոչը բարձրացրած հաղթական առյուծ:

Նույնկերպ էլ Գեթսեմանի պարտեզում Քրիստոսի մատուցած աղոթքը երկու կողմ ունի: Իր կյանքի ամենադժվարին ու մռայլ պահին՝ խաչվելուց մեկ օր առաջ Հիսուսն աղոթեց. «Հայր, եթե ցանկանում ես, այս բաժակն անցկացրո՛ւ ինձանից. սակայն ոչ թե իմ, այլ Քո կամքը թող լինի» (Դուկ. 22.42): Երբ Քրիստոսն ասում է . «Այս բաժակն անցկացրո՛ւ ինձանից», անկեղծորեն իր անձնական ցանկությունն է արտահայտում. «Իմ ուզածն ա՛յս է»: Ապա շրջում է մետաղադրամն ու աղոթելով ասում՝ «Ոչ թե իմ կամքը»: Այդ կողմը հրաժարվելու կողմն է: Մեր անձերից հրաժարվելն ու Աստծուն հանձնվելն սկսվում է այն ժամանակ, երբ մենք ասում ենք. «Սակայն թող լինի այն, ինչ Դու՛ կուզես, ո՛վ Աստված»: Այս երկկողմ աղոթքին հանդիպում ենք նաև Մատթեոսի 26, Մարկոսի 14, ինչպես նաև Հովհաննու 18 գլուխներում: Հիսուսը աղոթքի երկու կողմը շեշտեց՝ ասելով. «Այս բաժակն անցկացրո՛ւ ինձանից (ինչ որ ե՛ս եմ ուզում, ո՛վ Աստված), բայց ոչ թե իմ, այլ Քո կամքը թող լինի (ինչ որ Դո՛ւ ես ուզում, ո՛վ Աստված)»: Նա տարբերակեց այդ երկու կողմերը: Հիսուսի երկու կողմերը աղոթքի երկու կողմերն են:

Կարդա՛ր
Դուկաս 22. 39-44

«Հայր, եթե ցանկանում ես, այս բաժակն անցկացրո՛ւ ինձանից. սակայն ոչ թե իմ, այլ Քո կամքը թող լինի» Դուկ. 22.42

Աղոթք – Հայր, օգնի՛ր՝ կարողանամ հետևել Քո՝ Որդու օրինակին, որն ամեն բան հանձն առավ, որպեսզի կարողանամ Քեզ հետ մտերմիկ աղոթքի փորձառությունն ունենալ: Ամեն:

Անկեղծորեն աղոթի՛ր՝ հանձնվելով Աստծուն ու հետևելով Տեր Հիսուսի օրինակին:

Յոժարութեան տվողները

Տարիներ առաջ կինս իր գնած ապրանքներից մեկի համար Տանապասելիորեն զեղչի գումար ստացավ: Այն ուղարկվել էր ծրարով: Այդ նույն օրերին մեր բարեկամներից մեկը պատմեց մեկ այլ երկրում օգնություն կարիք ունեցող կանանց մասին, որոնք նոր գործ են ուզում ձեռնարկել և համապատասխան ուսում ստանալու համար նյութական դժվարություն ունեն:

Կինս իր ստացած զեղչի գումարը տրամադրեց այդ կանանց օգնելուն: Երբ պարտքը վերադարձվեց, նա այդ գումարը դարձյալ պարտքով տվեց, և մինչև օրս քսանյոթ հոգու է օգնել:

Կինս շատ բաներից կարող է ուրախանալ, բայց նրա դեմքին իսկական հրճվանք է երևում, երբ նա նոր լուրեր է ստանում իրեն անձանոթ այն կանանց հաջողությունների մասին:

Մենք ընդհանրապես չեջտում ենք «Աստված սիրում է հոժարութեամբ տվողին» (Բ. Կորնթ. 9.7): Որովհետև տալը իր մեջ ունի բազում ձևեր. պետք է խնայելով, տրամաբանորեն կամ հարկադրանքով տալ (Հմ.6,7):

Այլ խոսքով՝ մեր տալը «հոժարութեամբ» պետք է լինի: Եվ քանի որ մեզանից յուրաքանչյուրը տարբեր ձևով է տալիս, մեր դեմքերին պետք է երևա մեր ուրախությունը:

Աղոթք – Հայր, շնորհակալ եմ այն ուրախության համար, որով լցվում եմք, երբ հոժարութեամբ տալիս ենք: Նաև այն միջոցների համար, որոնցով հոգում ես մեր կարիքները: Ամեն:

Կարդա՛ր
Բ Կորնթ. 9.6-9

«Աստված սիրում է հոժարութեամբ տվողին» Բ. Կորնթ. 9.7

Միշտ հիշի՛ր, որ Աստված սիրում է հոժարութեամբ տվողին:

Ի՞նչ է հաջորդը

1968 թ. ապրիլի 3-ին դոկտոր Մարտին Լյութեր Քինգը վերջին անգամ արտասանեց «Ես եղել եմ լեռան գագաթին» խորագրով ճառը: Դրանում նա ակնարկեց, թե զգում է, որ երկար չի ապրելու՝ ասելով. «Մեզ դժվար օրեր են սպասում: Բայց դա ինձ համար կարևոր չէ, որովհետև ես եղել եմ լեռան գագաթին, նայել եմ մյուս կողմն ու տեսել եմ խոստացյալ երկիրը: Հնարավոր է, որ ձեզ հետ այնտեղ չգնամ: Սակայն ուրախ եմ այս երեկո և չունեմ որևէ մտահոգություն: Որևէ մեկից չեմ վախենում, որովհետև աչքերս տեսել են Տիրոջ գալուստը»:

Հաջորդ օրը նա սպանվեց:

Պողոս առաքյալն էլ մահից քիչ առաջ գրեց իր հովանավորյալ Տիմոթեոսին. «Ես արդեն զոհ եմ դառնում, և իմ բաժանվելու ժամանակը հասել է:

...Այսուհետև մնում է ինձ արդարություն պահել, որ Տերը՝ արդար դատավորը, կտա ինձ այն օրը» (Բ.Տիմ. 4. 6,8): Պողոսը, ինչպես և դոկտոր Քինգը, գիտեր, որ իր ժամանակը այս կյանքում լրացել է: Երկուսն էլ անհավատալիորեն նշանակալից կյանք ապրեցին՝ երբեք չկորցնելով իրենց առաջնորդող ճշմարիտ կյանքի տեսությունը: Երկուսն էլ ողջունեցին հաջորդ գալիքը:

Նրանց նման մենք էլ «նայենք ոչ թե երևացող բաներին, այլ աներևույթներին, որովհետև երևացողները ժամանակավոր են, իսկ աներևույթները՝ հավիտենական» (Բ. Կորնթ. 4.18):

Աղոթք - Երկնավոր Հայր, օգնի՛ր, որ մեր աչքերը Քե՛զ վրա պահենք, այլ ոչ թե կյանքում առկա հարցերի ու նեղությունների: Ամեն:

Հոգ չէ, որ այս կյանքում նեղություններ ու ցավեր ենք կրում: Վստահ լինենք, որ գալիք կյանքում օրհնություններ են լինելու:

Կարդա՛ Բ Տիմոթեոս 4.1-8

Այսուհետև մնում է ինձ արդարության պահել, որ Տերը՝ արդար դատավորը, կտա ինձ այն օրը: Բ.Տիմ.4.8

Մեր խորագույն փափագները

Դուռնկանը, վախենալով, որ բավարար միջոցներ չի ունենա Երիտասարդ տարիքում վայելելու Միլիկոնային հովտի հաճույքները, սկսեց իր ապագան կառուցել փառասիրությամբ: Նա հսկայական հարստություն դիզեց, բանկում մեծ հաշիվ կուտակեց, գնեց շքեղ ավտոմեքենա և միլիոն դոլար արժեցող տուն կալիֆոռնիայում: Իր բոլոր փափագներին հասել էր, սակայն ուրախ չէր: «Ես անհանգիստ էի ու դժգոհ: Իրականում հարստությունը կյանքն ավելի վատ է դարձնում», -ասում էր նա: Հսկայական գումարը նրան ոչ թե ուրախություն ու բարեկամական շրջանակ տվեց, այլ ավելի շատ սրտի ցավ:

Կարդա՛
ժողովող 5. 10-12

Արծաթ սիրողը չի կշտանա արծաթից: Ժող. 5.10

Շատերն են ուժերը վատնում՝ իրենց կյանքն ապահովելու համար հարստություն դիզելով: Դա անմտություն է: Աստծո խոսքը շեշտում է. «Արծաթ սիրողը չի կշտանա արծաթից» (Ժող. 5.9): Ոմանք, իրենց ունեցածը համեմատելով ուրիշների ունեցածի հետ, ձգտում են հասնել տնտեսական բարվոք վիճակի: Բայց եթե նույնիսկ շահեն ենթադրյալ նյութական ազատությունը, դարձյալ գոհացում չեն ունենա, որովհետև ինչպես Ժողովողի հեղինակն է գրում: «Դա ևս ունայնություն է» (Հմ.9):

Ճշմարտությունն այն է, որ Աստծուց զատ այլ տեղերում ապահովություն որոնելը ապարդյուն է: Աստվածաշունչը մեզ կոչ է անում, որ մեր ունեցած շնորհներն օգտագործենք երկրի բարիքի համար, որովհետև մենք չենք կարողանա բավարար չափով նյութական դիզել՝ գոհացնելու մեր խորագույն փափագները: Հիսուսն առաջարկում է իսկական ու գոհացնող կյանք (Հովհ. 10.10): Այն հիմնված է սիրո հարաբերության վրա, որն իրապես բավարար է:

Աղոթք - Շնորհքի՛ Հայր, թույլ տուր, որ իմ գոհացումն ու ուրախությունը Քո՛ մեջ գտնեմ: Դեռու՛ պահիր ինձ գործի և նյութական բաների մասին սխալ տեսակետներից: Ամեն:

Մեր ունեցած հարստությունը չի գոհացնելու և երջանիկ կյանք չի ապահովելու:

Նա, ով փրկում է

Տրան քաջ մարդ էին համարում, սակայն նա այն չէր, ինչ սպասում էին: Դեսմոնդն այն զինվորն էր, որը մերժեց զենք կրել: Որպես բժիշկ՝ միայն ինքը յոթանասունհինգ զինվորի կյանք փրկեց ճակատամարտի ժամանակ, բայց զինվորները նրան ծաղրում էին ու վախկոտ անվանում: Իսկ ինքը, սոսկալի կրակոցների միջով հասնելով վիրավորներին, անընդհատ աղոթում էր. «Տե՛ր, օգնի՛ր, որ ևս մեկին էլ փրկեմ»: Իր խիզախությունն ու հերոսությունն համար նա արժանացավ բարձր պարգևի: Աստվածաշունչը մեզ ասում է, որ Հիսուսը հաճախ է սխալ հասկացվել: Ինչպես Զաքարիա մարգարեն է ասել (9.9), Հիսուսը էջի վրա նստած մտավ Երուսաղեմ և ժողովուրդը Օվսաննա՛ բացականչեց (փառաբանություն բացականչություն, որը նշանակում է «Փրկի՛ր»): Մեջբերելով Սաղմոսների 118-ի 26-ը՝ նրանք բացականչեցին «Օրհնյա՛լ է նա, ով Տիրոջ անունով է գալիս, Իսրայելի թագավորը» (Հովհ. 12.13): Բայց նույն սաղմոսի հաջորդ համարում խոսում է զոհ մատուցելու մասին և ասում. «Մատաղները կապեցե՛ք չվաններով» (Սաղմ. 118. 27): Հովհաննու 12-ում բազմությունը սպասում էր երկնային թագավորին, որն իրենց կազատեր Հռոմից, բայց Հիսուսը շատ ավելին էր: Նա թագավորների թագավորն էր, մեծ զոհն ու մարդեղացած Աստվածը, որ պատրաստ էր խաչվելու՝ մեզ մեր մեղքերից ազատելու համար: Հովհաննեսը գրում է. «Նրա աշակերտներն սկզբում այս բաները չիմացան, բայց երբ Հիսուսը փառավորվեց, այն ժամանակ հիշեցին, որ դա նրա մասին էր գրված, և այդ բանը նրա համար արեցին» (Հմ.16): Նա մեզ այնքան է սիրում, որ Իր հզոր Որդուն աշխարհ ուղարկեց:

Աղոթք - Հարուցյալ Տե՛ր, փառավորում եմ Քեզ, որ խաչի վրա զոհվեցիր հանուն մեզ: Օգնի՛ր, որ ծառայեմ ու փառավորեմ Քեզ՝ իմ հավիտենական թագավոր: Ամեն:

Հիսուսն եկավ մեզ փրկելու:
Ուստի փառավորենք Իրեն:

Կարդա՛ր
Հովհաննես 12. 12-18

Արմավենու ճյուղեր վերցրեց, նրան ընդառաջ դուրս եկավ և աղաղակում էր.

«Օվսաննա՛»:

Հովհ.12.13

Լալ է

1948-ին Հարլան Պոպոլը, որը գաղտնի հովվում էր մի եկեղեցում, «մի փոքր հարցաքննություն» պատրվակով ձեռք բերեց: Երկու շաբաթ անց, տասն օր շարունակ քաղցած մնալուց հետո նրան հարցաքննեցին: Ամեն անգամ, երբ ժխտում էր, որ ինքը լրտես է, ծեծում էին: Պոպոլը ոչ միայն ինքը դիմացավ այդ ծանր չարհարանքներին, այլև բանտարկյալներին առաջնորդեց դեպի Հիսուսը: Վերջապես, տասնմեկ տարի անց բանտից ազատվելով, նա թույլտվություն ստացավ իր հավատքը բաժնեկցելու և երկու տարի անց էլ թողնելու այդ երկիրը և միանալու իր ընտանիքին: Նա շարունակում էր քարոզել և նույնիսկ դրամ հանգանակեց, որպեսզի «փակ երկրներում» Աստվածաշունչ բաժաներ:

Կարդա՛ր Մատթեոս 5. 1-12

Երանի՛ նրանց, ովքեր արդարության համար են հալածվում: Մատթ. 5.10

Տարիների ընթացքում Պոպոլը բազում հավատացյալների նման հալածվում էր իր հավատքի համար: Քրիստոսը իր տառապանքներից ու մահից և իր հետևորդների կրեյիք հալածանքներից շատ առաջ ասել էր: «Երանի՛ նրանց, ովքեր արդարության համար են հալածվում, որովհետև երկնքի արքայությունը նրանցն է» (Մատթ. 5.10): Եվ շարունակել. «Երանի է ձեզ, երբ ձեզ կնախատեն ու կհալածեն, իմ պատճառով ամեն չար բան սուտ տեղը կասեն ձեր մասին» (Հմ.11):

Հիսուսը Երանի՛ ասելով ակնարկում էր իր հետ եղած ուրախության ու մխիթարության մասին (Հմ. 4.8-10): Պոպոլը կարողացավ դիմանալ, որովհետև տեսավ իր մեջ Աստծո ներկայությունը ներարկող զորությունը: Երբ Աստծո հետ քայլենք, անկախ հանգամանքներից, մենք կարող ենք իր խաղաղության փորձառությունն ունենալ:

Աղոթք - Սիրո՛ Չայր, շնորհակալ եմք, որ նույնիսկ մեր ամենամոռայլ պահերին մեզ բնավ չես լքում: Ամեն:

Նեղություններ, տառապանքներ ու հալածանքներ կարող ենք ունենալ, բայց վստահ լինենք, որ Աստված մեզ հետ է ու մեզ չի լքում:

Ամբողջական հայտնությունը

«Մերի Փոփինսը վերադառնում է» կինոնկարի հերոսուհի Էմիլի Բլանթը գեղեցիկ ձայնով հրաշալի երգում է: Իրենց ամուսնությունից միայն չորս տարի հետո է նրա ամուսինը հայտնաբերել կնոջ երգելու շնորհքը և պատմում է, որ շատ է զարմացել, երբ առաջին անգամ լսել է նրա երգելը ու մտածել, թե երբ էր ասելու իրեն այդ մասին:

Մեր հարաբերություններում հաճախ ենք նոր ու անսպասելի բաներ իմանում, մանրամասներ, որոնք մեզ զարմացնում են: Մարկոսի Ավետարանում Հիսուսի աշակերտները ամբողջական պատկերացում չունեին նրա մասին և ձգտում էին լիովին ճանաչել նրան: Գալիլեայի ծովի վրա Հիսուսը մի քիչ ավելին հայտնեց իր մասին. ցույց տվեց, որ Ինքը կարող է իշխել բնության ուժերին:

Հինգ հազարից ավելի բազմությունը կերակրելուց հետո Հիսուսն աշակերտներին ստիպեց մտնել նավն ու իրենից առաջ անցնել ծովի մյուս ափը: Երբ նրանք ծովի մեջտեղում էին, սաստիկ փոթորիկ բարձրացավ: Արշալույսից առաջ նրանք սարսափեցին, երբ տեսան ծովի վրայով քայլող մեկին: Բայց Հիսուսի ծանոթ ձայնը հանգստացրեց նրանց. «Քա՛ջ եղեք, ես եմ, մի՛ վախեցեք» (Մարկոս 6.50): Հետո նա հանդարտեցրեց մոլեգնած ծովը: Տեսնելով այդպիսի մեծ զորություն՝ աշակերտները «չափազանց ապշել էին» (6.51):

Մենք էլ մեր կյանքի հորձանուտներում ունենում ենք Հիսուսի զորություն փորձառությունը և հիանում ենք՝ իր ով լինելու մասին ամբողջական պատկերացում ունենալով:

Աղոթք - Տե՛ր Հիսուս, մեզ հիացնում ես Քո զորությամբ: Բա՛ց մեր աչքերը և ավելի՛ն հայտնի Քո ով լինելու մասին, որպեսզի պաշտենք Քեզ: Ամեն:

Քրիստոսի զորության մասին ավելի՛ն սովորելով՝ կարող ես ավելի լավ պատկերացում ունենալ իր մասին:

Կարդա՛
Մարկոս 6. 45-56

Եվ իսկույն նրանց հետ խոսեց ու ասաց. «Քա՛ջ եղեք, ես եմ, մի՛ վախեցեք»:
Մարկոս 6.50

Աստված ավելին արժե

Վիրավորված լինելով հավատացյալներից՝ մայրս բարկացած ասաց հեռախոսով. «Ուրեմն հիմա դու է՞լ ես ինձ քննադատելու, չեմ հասկանում», - և ընդհատեց խոսակցությունը: Մի ամբողջ տարի չէր խոսում ինձ հետ: Ես վշտացա, բայց ընդունեցի, որ Աստծո հետ հարաբերությունն ավելի կարևոր է, քան ինձ համար արժեքավոր որևէ այլ հարաբերություն: Ամեն անգամ, երբ մայրս մերժում էր հաշտության իմ առաջարկը, ես աղոթում էի նրա համար և Աստծուց խնդրում, որ կարողանամ նրան ավելի սիրել: Վերջապես մենք հաշտվեցինք և մի քանի ամիս անց նա ասաց. «Դու փոխված ես: Կարծում եմ, որ պատրաստ եմ լսել Հիսուսի մասին»: Շուտով նա ընդունեց Հիսուսին և մնացած տարիներն ապրեց Աստծուն և ուրիշներին սիրելով:

Կարդա՛
Մարկոս 6. 45-56
 Ահա մենք ամեն ինչ թողեցինք ու քո հետևից եկանք:
 Մարկոս 10. 28

Այն մարդու նման, որ վազելով մոտեցավ Հիսուսին ու խնդրեց, թե ինչպես կարելի է հավիտենական կյանք ժառանգել, բայց նեղսրտած հեռացավ, որովհետև չէր ուզում իր հարստությունից հրաժարվել, (Մարկոս 10. 17-22) ես էլ պայքարեցի Հիսուսին հետևելու համար ամեն բանից հրաժարվելու գաղափարով:

Դյուրին չէ հրաժարվել այն բաներից կամ մարդկանցից, որոնց մեր կարծիքով Աստծուց ավելի ենք վստահում (Հմ.23-25): Սակայն մեր հրաժարվածների արժեքը չպիտի անցնի Հիսուսի հետ լինելիք հավիտենական կյանքի արժեքից: Մեր սիրելի Աստված կամեցավ ինքն իրեն զոհել մեզ փրկելու համար: Նա մեզ խաղաղություն է պարգևում և մեզ տալիս է արժեքավոր ու մնայուն սեր:

Աղոթք - Հայր, շնորհակալ եմք, որ սիրում ես մեզ ավելի, քան արժանի եմք ու հիշեցնում ես, որ Դու ավելի մեծ արժեք ունես, քան որևէ անձ կամ որևէ բան: Ամեն:

Թեև դյուրին է աշխարհի տված հանգստությանը, նյութական հարստությանն ու մարդկանց վստահելը, բայց Աստծոն վստահելն ավելի լավ կլինի մեզ համար:

Ճանապարհի վրա մնա՛

Մթնում էր, երբ Կենտրոնական Չինաստանի լեռներում գնում էի Լի Բաոյի ետևից: Մինչ այդ երբեք նման վիճակում չէի եղել: Չէր երևում մեկ քայլ այս կամ այն կողմ ձորի եզերքը: Ես քայլում էի Լիի հետևից և չգիտեի՝ ուր ենք գնում, դեռ որքա՞ն ենք քայլելու: Բայց ես վստահում էի ընկերոջս:

Ես Թովմասի ու իր աշակերտների վիճակում էի, որոնք միշտ վստահության կարիք ունեին: Հիսուսը նրանց ասաց, որ գնալու է իրենց համար տեղ պատրաստելու: «Եվ ես ուր որ գնում եմ, գիտեք, ճանապարհն էլ գիտեք (Հովհաննու 14.4): Թովմասը նրան ասաց. «Տե՛ր, մենք չգիտենք, թե ուր ես գնում, և ճանապարհն ինչպե՞ս կարող ենք իմանալ» (Հմ.5):

Կարդա՛ Զովհաննես 14.1-7

Տե՛ր, մենք չգիտենք, թե ուր ես գնում, և ճանապարհն ինչպե՞ս կարող ենք իմանալ: Զովհ. 14.5

Հիսուսը Թովմասին բացատրելու համար ուղղակի չպատասխանեց, այլ պարզապես վստահեցրեց նրան, որ Ինքն է ճանապարհը, ու այդ մեկը բավարար է:

Մենք էլ մեր ապագայի մասին հարցեր ունենք: Մեզանից ոչ մեկը չգիտե սպասվող օրերի ու անորոշ ապագայի մանրամասները: Կյանքը լի է շրջադարձերով ու անակնկալներով: Սակայն բավարար է ճանաչել Տեր Հիսուսին, որ է «ճանապարհը, ճշմարտությունն ու կյանքը» (Հմ.6):

Հիսուսը գիտե, թե ինչ կա առաջիկայում: Նա միայն խնդրում է, որ իր կողքով քայլենք:

Աղոթք - Հայր, օգնի՛ր՝ տեսնել, որ ճամփորդությունը մեր նպատակակետն է, իսկ ճամփան՝ Քո Որդին: Ամեն:

Ապագայի հանդեպ վախեր ու կասկածներ կարող ենք ունենալ, սակայն բավարար է հետևել Տեր Հիսուսին:

Հաստատուն մնալ

Հիսուսի հանդեպ ունեցած հավատքի համար Ազրիանն ու իր ընտանիքը իրենց ապրած երկրում ծանր հալածանքներ կրեցին: Այնուամենայնիվ նրանք շարունակում էին առաջնորդվել Քրիստոսի սիրով: Նրջափակված եկեղեցում, որը ժամանակին ահաբեկիչների մարզման վայր էր եղել, և այդ պատճառով պատերին փամփուշտների հետքեր կային, Ազրիանն ասաց. «Այսօր ավագ ուրբաթ է: Հիշե՛ք, որ Հիսուսը մեզ համար խաչի վրա չարչարվեց»: Հավատացյալները չարչարանքի իմաստը հասկանում են, և նրա ընտանիքը որոշել էր այդտեղ մնալ: Նա շարունակում է. «Մենք այստեղ ենք ու հաստատուն ենք մնում»:

Այս հավատացյալները հետևում էին խաչի մոտ կանգնած այն կանանց օրինակին, որոնք դիտում էին Հիսուսի տառապանքն ու մահը (Մարկ. 15.40): Նրանց մեջ էին Մարիամ Մագդաղենացին, կրտսեր Հակոբոսի ու Հովսեփի մայրը՝ Մարիամը և Սաղովմեն, որոնք քաջալերում էին տառապող Տեր Հիսուսի ընտանիքի անդամներին ու բարեկամներին: Այդ կանայք այդտեղ մնալով՝ ցույց տվին Քրիստոսի հանդեպ իրենց ունեցած սերը: Նույնիսկ երբ Նա Գալիլեայում էր, նրա հետևից գնում ու ծառայում էին նրան (Հմ.41) և հիմա նրա խավարագույն պահին դարձյալ նրա մոտ կանգնած էին: Այսօր, երբ հիշում ենք Փրկչի մեծագույն պարգևն ու իր մահը խաչի վրա, մի պահ կանգ առնենք ու խորհենք, թե ինչպես կարող ենք հաստատուն մնալ Հիսուսի հանդեպ մեր հավատքին՝ զանազան փորձություններ դիմագրավելիս (տե՛ս Հակ. 1.1-4): Եվ մտածենք ողջ աշխարհում գտնվող այն հավատացյալների մասին, որոնք չարչարվում են իրենց հավատքի համար: Ազրիանի նման եկեք միասին աղոթենք:

Աղոթք - Սիրո՛ղ Փրկիչ, Դու կամովին մեռար՝ մեզ մեր մեղքերից ազատելու համար: Այս հիշատակի օրվա մեջ տու՛ր մեզ հաստատակամության խոր զգացում: Ամեն:

Աղոթենք բոլոր հալածվողների համար, որոնք տառապում են Հիսուսի հանդեպ իրենց ունեցած հավատքի պատճառով:

Կարդա՛
Մարկոս 15. 33-41

Հաստատուն եղեք,
անշարժ կացեք:
Ա. Կորնթ.15. 58

Վարագույրը բացված

Թոփչքը սկսվեց, և ուղևորների միջև վարագույր քաշվեց, որը բաժանեց առաջին կարգի ճամփորդներին, որոնք օգտվում էին ավելի հանգստավետ աթոռներից ու անձնական հյուրասիրություններից: Այդ փակ վարագույրը խոնարհեցնող հիշեցում էր այդ հպարտ ուղևորներից բաժանվողիս համար: Մարդկանց մեջ այդպիսի զանազանություն գոյություն ունեցել է պատմության մեջ և նույնիսկ՝ Աստծո տաճարում:

Ոչ հրեաները Աստծուն պաշտելու իրավունք ունեին միայն տաճարի դռսի գավթում: Ապա գալիս էր կանանց, ավելի մոտ՝ տղամարդկանց սրահը և վերջապես «Սրբությունների սրբությունը»՝ վարագույրով ծածկված այն խորանը, որտեղ Աստված հայտնում էր իր մասին: Այդտեղ տարեկան մեկ անգամ մտնելու իրավունք ուներ քահանայապետը (Եբր. 9. 1-10):

Սակայն այս բաժանումը այլևս գոյություն չունի: Տեր Հիսուսը վերացրել է այն բոլոր արգելքները, որոնք խանգարում են մոտենալ Աստծուն, նույնիսկ մեր մեղքերը (10.17): Այնպես, ինչպես տաճարի վարագույրը պատուվեց Հիսուսի մահվան պահին (Մատթ. 27.50-51), Նրա խաչված մարմինը վերացրել է բոլոր արգելքները, որոնք քողարկում են Աստծո ներկայությունը: Չկա՛ որևէ արգելք, որը հավատացյալին կբաժանի կենդանի Աստծո փառքից ու Նրա սերը վայելելուց:

Աղոթք - Տե՛ր, շնորհակալ եմ, որ պատրաստ եղար մեռնելու և լայն բանալու դեպի Քեզ բերող ճանապարհը այն մարդկանց համար, ովքեր ուզում են Քեզ մոտենալ: Ամեն:

Հիսուսը մեռավ՝ մեզ վստահություն տալու համար, որ մեր և Դոր միջև եղած բոլոր արգելքները վերացված են:

Կարդա՛
Եբր. 10. 19-25

Արդ, եղբայրներ, քանի որ համարձակություն ունենք սրբարան մտնելու... նոր ու կենդանի ճանապարհով... Նրան մոտենանք ճշմարիտ սրտով: Եբր.10. 19-22

Վիշտը տապալված

Վինոարտադրող Ջիմ և Ջեյմի Դաչընները, որոնք հայտնի են շիների մասին իրենց իմացություններով, ասում են, թե այդ կենդանիները ուրախ պահերին շարժում են պոչն ու ցատկոտում: Իրենց ոհմակից որևէ մեկի մահն էլ շաբաթներով կարող են սգալ: Նույնիսկ գնում են իրենց ընկերոջ մահացած տեղն ու պոչերը ներքև ձգած՝ ողբում:

Վիշտը ծանր զգացում է, որ բոլորն էլ ունեցել ենք, հատկապես սիրելիի կորստյան կամ հուսահատության պահերին: Հիսուսին հետևողների խմբից Մարիամ Մագդաղենացին նման փորձառություն ունեցավ (Ղուկ. 8. 1-3): Հիսուսի դաժան մահը խաչի վրա նրանց բաժանեց իրարից: Մարիամին մնում էր ավարտել Նրա անշնչացած մարմնի օժուժը թաղման համար, որը շաբաթ օրը արգելված էր կատարել: Սակայն պատկերացրեք Մարիամի զգացումները, երբ կոտրված ու անշնչացած դիակի փոխարեն նա տեսավ կենդանի Փրկչին: Սկզբում նա չճանաչեց, բայց երբ լսեց իր անունը, և ծանոթ ձայնն ասաց, որ ինքը Հիսուսն է, կնոջ վիշտը ուրախության վերածվեց: Հիմա Մարիամն ուրախ լուր ունեք հայտնելու ուրիշներին, որ տեսել է Տիրոջը (Հովհ. 20. 18):

Տեր Հիսուսը մեր խավար աշխարհը մտավ ազատություն ու կյանք տալու համար: Նրա հարությունը իր պարտականությունը ամբողջացրած լինելու իրողության հոչակումն ու հաստատումն է: Մարիամի նման մենք էլ կարող ենք հոչակել Հիսուսի հարությունը և իր ողջ լինելու բարի լուրը հայտնել ուրիշներին: Ալելուիա:

Աղոթք - Տեր Հիսուս, հոչակում եմ Քո հրաշափառ հարությունը և այն կյանքը, որ կարող եմ վայելել Քո մեջ: Ամեն:

Կարդա՛
Յովհաննես 20.11-18

Ինքը տեսել է Տիրոջը
Յովհ. 20. 18

Տեր Հիսուսը հարություն է առել, և մեր վիշտը ուրախության է վերածվել: Ուստի այսօր տոն հոչակենք ու այս լուրը բոլորին բաշխենք:

Աստծու՛ն խնդրել

Հետաքրքիր է դիտել մարդկանց ջանքերը, սերն ու նվիրումը խրենց երազանքին հասնելու ճանապարհին: Ծանոթներդիցս մեկը վերջերս հաջողությամբ ավարտեց քոլեջը: Բարեկամս ավտոմեքենա էր ուզում ունենալ, ուստի լծվել էր կարկանդակ թխելու և վաճառելու գործին՝ մինչև հասավ նպատակին: Անշուշտ, լավ է ջանասիրաբար աշխատել աշխարհիկ արժեքներ ձեռք բերելու համար, սակայն հարկավոր է նկատի առնել, որ կա ավելի կարևոր մի բան, որի համար ևս ջանքեր են անհրաժեշտ: Անապատում հուսահատ վիճակում պայքարող Դավիթ թագավորը գրեց. «Աստված, Աստված իմ, ես առավոտից քեզ եմ դիմում» (Սաղմ. 62.2): Երբ նա դիմեց Աստծուն, Աստված մոտեցավ հոգնած թագավորին: Դավիթ հոգևոր մեծ ծարավը կարող էր հագեցվել միայն Նրա՛ ներկայությամբ: Թագավորը հիշեց Աստծո հետ իր ունեցած հանդիպումը սրբարանում (Հմ.3), որտեղ նա ամեն օր Աստծո կարեկցության փորձառություն էր ունեցել (Հմ.4), ցնծությամբ օրհնաբանել, «Ասես պարարտ ճարպով պիտի հագենա իմ հոգին, և բերանս ցնծալից շրթունքներով քեզ պիտի օրհնի : Երբ քեզ հիշում էի իմ անկողնում, առավոտյան կանուխ խոսում էի քե հետ: Քանի որ դո՛ւ եղար իմ օգնականը, քո թևերի հովանու տակ ես պիտի ցնծամ» (Հմ. 6,7,8):

Այսօր Սուրբ Հոգին մղում է, որ լրջորեն դիմենք Աստծուն, որովհետև երբ Իրեն ենք դիմում, զորությամբ ու սիրով մեզ Իր աջ ձեռքով վերև է բարձրացնում: Սուրբ Հոգու առաջնորդությամբ թող որ ավելի մոտենանք ամեն բարիքի Ստեղծողին:

Աղոթք - Հա՛յր, շնորհակալ եմ, որ ինձ Քեզ մոտ ես ձգում, որպեսզի ավելի լավ ճանաչեմ Քեզ ու տեսնեմ մեծությունդ: Երախտապարտ եմ իմ կյանքում Քո ներկայության համար: Ամեն:

Տերը միշտ մոտ է մեզ: Ուստի խնդրենք Իր օգնությունն ու պաշտպանությունը:

Կարդա՛
Սաղմոս 62. 1-8

Աստված, Աստված իմ, ես առավոտից քեզ եմ դիմում.
Սաղմ. 62.2

Բուժիչ խոսքեր

Ուսումնասիրությունները ցույց են տվել, որ բժշկի քաջալերական խոսքերը շատ են օգնում հիվանդի ապաքինմանը: Շատ պարզ մի փորձ անցկացվեց մաշկի քորը անցկացնող դեղամիջոցի գործածությունն ժամանակ: Կամավորների մի խումբը բժշկից ստացել էր քաջալերական խոսք, մյուսը՝ ոչ: Արդյունքում այն հիվանդները, որոնց բժիշկները բացի դեղամիջոցից նաև ամոքիչ խոսքեր էին ասել, պակաս անհանգիստ էին ու ավելի քիչ քոր էին զգում:

Առականների դրքի հեղինակը գիտեր, թե որքան կարևոր են քաջալերական խոսքերը, երբ գրում էր. «Բարի խոսքը մեղրի խորիսխ է, և հոգու բժշկություն է նրա քաղցրությունը» (Առ. 16. 24):

Խոսքերի դրական ազդեցությունը չի սահմանափակվում միայն մեր ֆիզիկական առողջությանը: Երբ ուշադրություն դարձնենք այդ ցուցմունքների իմաստին, մենք ամենայն հավանականությամբ գործի մեջ ևս բարիքներ կգտնենք (Հմ.20): Նույն կերպ էլ քաջալերական խոսքերը խրախուսում են մեզ ներկայի ու ապագայի մարտահրավերները դիմազրավելիս:

Կարող է պատահել, որ նույնիսկ չհասկանանք, թե այդ խոսքերը ինչպիսի բուժիչ ազդեցություն են գործում մեր ամենօրյա կյանքում: Ինչպես մեր ծնողների, մարդիչների ու գործընկերների խորհուրդներն ու առաջնորդությունն են օգնում մեզ դժվարությունները հաղթահարելիս, այնպես էլ Աստվածաշունչն է մեզ քաջալերում փորձություններին դիմանալու համար:

Աղոթք - Սիրելի՛ Յայր, շնորհակալ եմ Քո բուժիչ ու հուսադրող խոսքերի համար: Օգնի՛ր մեզ, որ կարողանանք զորանալ Քո իմաստությամբ և մեր հերթին կարողանանք ուրիշներին փոխանցել այդ նույն «բարի» խոսքերը: Ամեն:

Եթե Աստված քաջալերում ու խրախուսում է քեզ, դու էլ նույնը ուրիշներին արա՛:

Կարդա՛
Առականներ 16. 20-24

Բարի խոսքը մեղրի խորիսխ է, և հոգու բժշկություն է նրա քաղցրությունը:

Առ. 16. 24

Ափսոսանքից փառաբանություն

Երեխաներին վերարկուներ էին նվիրում, և խանդավառ մանուկները իրենց չափսին ու նախասիրած գույներին համապատասխան ընտրում էին: Ծրագրի կազմակերպիչներից մեկն ասաց, որ այս նոր վերարկուները ոչ միայն երեխաներին կպատասխարեն ցրտից, այլև կբարձրացնեն նրանց ինքնազնահատականը և կսերտացնեն կապը ընկերների հետ:

Պողոս առաքյալը նույնպես վերարկուի կարիք ուներ, երբ Տիմոթեոսին գրում էր. «Վերարկուն, որ Տրոփազայում Կարպոսի մոտ թողեցի, գալիս բե՛ր» (Բ. Տիմ. 4. 13): Բանտարկված լինելով հռոմեական ցուրտ բանտում՝ Պո-

ղոսը կարիք ուներ ոչ միայն ջերմության, այլև ընկերակիցների: Եվ գնալով դատավորի մոտ՝ նա ասաց ողբալով. «Ոչ մեկը չեկավ ինձ հետ, բոլորն ինձ լքեցին» (Հմ. 16): Սակայն Պողոսի նամակում գրված վերջին խոսքերը, որոնք իր եզրափակիչ խորհուրդներն են իր հիանալի ծառայություն ավարտին, ավստոսանքից փոխվում են փառաբանություն: Նա ավելացնում է. «Իսկ Տերն ինձ մոտ կանգնեց ու զորացրեց ինձ» (Հմ.17) և այդ խոսքերը թափանցում են մեր սրտերը: Պողոսը հայտարարեց. «Իսկ Տերն ինձ մոտ կանգնեց ու զորացրեց ինձ, որ իմ միջոցով քարոզությունը հաստատվի, ու բոլոր հեթանոսները լսեն. և ես առյուծի բերանից ազատվեցի» (Հմ.17):

Եթե որևէ ճգնաժամ ես հաղթահարում, ու եթե նույնիսկ չունես մարմինդ տաքացնող վերարկու կամ մտերիմ բարեկամ, հիշի՛ր Տիրոջը: Նա հավատարիմ է քեզ պահպանելու, փրկելու և բոլոր կարիքներդ հոգալու հարցում:

Աղոթք - Մեր հզոր Աստված, երբ կյանքի հանգամանքները ճնշում են մեզ, մնա՛ մեր կողքին, պարզևի՛ր Քո զորությունը և մղի՛ր, որ փառաբանենք Քեզ: Ամեն:

Կյանքի պայմանները սպառնում են ձմռան ցրտի նման, բայց Տերն իր ջերմությամբ կմնա մեզ մոտ ու կզորացնի մեզ:

Կարդա՛ր
Բ Տիմոթեոս 4. 9-18

Իսկ Տերն ինձ մոտ կանգնեց ու զորացրեց ինձ Բ.Տիմ. 4.17

Աստծո խոսքի ծարավ

Մի նորահավատ բուռն կերպով ուզում էր կարդալ Աստվածաշունչը, սակայն պայթյունի հետևանքով կորցրել էր տեսողությունն ու երկու ձեռքը: Երբ իմացավ մի կնոջ մասին, որը կարող էր բայբայան այբուբենը (կուրերի տառերը) կարդալ, ինքն էլ փորձեց նույնը անել: Բայց պարզվեց, որ շրթունքների նյարդերն էլ են վնասվել: Հետո ուրախացավ, երբ իմացավ, որ այդ տառերը կարելի է նաև լեզվով գգալ: Փաստորեն նա գտել էր կարդալու և Աստվածաշունչը վայելելու միջոցը: Երեմիայի փորձառությունը ուրախություն ու բերկրանք պարգևեց նրան, երբ ստացավ Աստծո խոսքը: Նա ասաց. «Քո խոսքն ինձ ուրախություն և իմ սրտի համար ցնծություն կլինի, ո՛վ Ամենակալ Տեր Աստված» (Եր. 15. 16): Ոչ թե Հուդայի ժողովրդի նման, որոնք անարգեցին Նրա խոսքը (Հմ. 8.9): Երեմիան հնազանդվեց Խոսքին ու նրանով ուրախացավ: Սակայն իր հնազանդության պատճառով մերժվեց իր ժողովրդից ու հալածվեց (15.17): Մեղանից ոմանք էլ կարող են նման փորձառություն ունենալ: Մենք ուրախությամբ ենք կարդում Աստվածաշունչը, բայց Աստծոն հնազանդվելը կարող է նաև մեզ արժանացնել տառապանքի ու մերժման: Երեմիայի նման մենք էլ կարող ենք մեր շփոթմունքը Աստծուն ներկայացնել: Երբ առաջին անգամ նա դիմեց տիրոջը, Նա Երեմիային առաջարկեց մարգարե դառնալ (Հմ. 19-21): Աստված Երեմիային հիշեցրեց, որ ինքը բնավ ժողովրդին հուսախաբ չի անում: Մենք էլ այդ նույն վստահությունը կարող ենք ունենալ: Նա հավատարիմ է մեզ ու երբեք չի լքի մեզ:

Կարդա՛
Երեմիա 15. 15-21
 Քո խոսքն ինձ ուրախություն և իմ սրտի համար ցնծություն կլինի: Եր. 15.16

Աղոթք - Հավատարիմ Աստված, շնորհակալ եմ, որ ինձ հետ խոսում ես Քո խոսքի միջոցով: Օգնի՛ր, որ անձկությամբ փնտրեմ Քեզ ու հավատարմորեն հնազանդվեմ: Ամեն:

Ծարավի ես Աստծո խոսքի՞ն: Կարդա՛ և ուրախությամբ կլցվես:

Օգնելու ընդունակ

Նյու Յորքի եկեղեցիներից մեկի շտապ օգնությունն աշխատակից Ջոյի ութ շաբաթվա «գործի չգալու» պատճառը արձակուրդը չէր: Իր խոսքով՝ այդ օրերին նա դարձյալ եղել է անտուն մարդկանց մոտ, դարձել նրանցից մեկը և հիշել, թե ինչ է նշանակում լինել քաղցած, հոգնած ու լքված: Փողոցում ապրելու առաջին փորձը Ջոյն ունեցավ տարիներ առաջ, երբ չունենալով տուն ու աշխատանք՝ հասավ Պիտսբուրգ և տասներեք տարի ապրեց փողոցում: Աստված նրան այդպես պատրաստեց տասնյակ տարիներ կարոտյալներին ծառայելու համար:

**Կարդա՛
Երբայեցիներ 2.14-18**

Որովհետև ինքը որ չարչարվեց ու փորձվեց, կարող է փորձվողներին էլ օգնել: Եբ. 2.18

Երբ Հիսուս աշխարհ եկավ, Նա նույնպես ընտրեց այն մարդկանց նման ապրելու փորձառությունը, որոնց փրկություն համար եկել էր: «Որովհետև մանուկներն արյան ու մարմնի մասնակից եղան, ինքն էլ միևնույն կերպով մասնակից եղավ նրանց, որպեսզի իր մահով խափանի մահվան իշխանությունն ունեցողին, այսինքն՝ սատանային» (Եբր. 2.14): Ծնունդից մինչև մահ Քրիստոսը փորձված է ամեն բանով, բացի մեղքից (4. 15):

Հիսուսը կարիք չունի ծանոթանալու մեր երկրային հոգսերին: Նա, որ փրկում է մեզ, կապված է մեզ հետ և խորապես հետաքրքրված է մեզանով: Կյանքը ինչ էլ մատուցի մեզ, մենք կարող ենք վստահ լինել, որ մեզ մեծագույն չարագործից՝ սատանայից փրկողը (2.14) պատրաստ է մեզ օգնելու մեր բոլոր կարիքների ժամանակ:

Աղոթք - Հայր, հիշեցրու՛, որ պատրաստ ես օգնել բոլոր կարիքներիս մեջ: Ամեն:

**Ցավերի ու տագնապների միջով անցնելով՝ վստահենք
Նրան, որ մեզ հետ է ու կարող է օգնել ու փրկել մեզ:**

Յոգատարություն ստանալ

Տնային մաքրություն իրականացնող ընկերություններից մեկի տնօրեն Դեբին միշտ շահագրգռված էր, որ շատ հաճախորդներ ունենա: Սակայն հեռախոսային մի պատվերի ժամանակ նրա ստացած պատասխանը բեկումնային եղավ: Մի կին ասաց, որ չի կարող վճարել պահանջված գումարը, որովհետև ինքը քաղցկեղի դեմ բուժում է ընդունում: Այդ պահին Դեբին վճռեց, որ այդ հիվանդությամբ տառապող ոչ մի կին չպետք է զրկվի մաքրության ծառայությունից: Ավելին, նրանց հարկավոր է անվճար սպասարկել: Այդպես 2005-ին նա բացեց բարեգործական մի ընկերակցություն, որը ձրի մաքրում էր այն կանանց տները, որոնք տառապում էին այդ հիվանդությամբ: Կանանցից մեկը, մտնելով իր մաքրված տունը, ասաց. «Առաջին անգամ հավատում եմ, որ հաղթելու եմ այս հիվանդությանը»:

Կարդա՛ր
Սաղմոս 46
Զորությունների
Տերը մեզ հետ է:
Սաղմ. 46.11

Հոգածություն ու սրտացավության զգացումը կարող է օգնել մեզ դժվարություններ հաղթահարելիս: Աստծո ներկայության ու հոգատարության արտահայտությունը կարող է իրապես հույս տալ ու քաջալերել մարդուն: 46-րդ սաղմոսում ասվում է. «Աստված ապավեն ու զորություն է մեզ համար, նա արագահաս օգնական է եղել նեղությունների մեջ» և «Հանդարտ մնացե՛ք և ճանաչե՛ք, որ ես եմ Աստվածը, ես եմ իշխում ազգերի վրա: Զորությունների Տերը մեզ հետ է» (Հմ.1. 10-11):

Աստծո խոստումներն ու Իր ներկայության մասին հիշելը կարող է նորոգել մեր սրտերը, վստահություն ներշնչել, որ կկարողանանք հաղթահարել դժվարությունները:

Աղոթք - Տե՛ր, շնորհակալ եմ ներկայությանդ ու տվածդ խոստումի համար: Թող որ վստահություն ունենամ զորությանդ ու կարողությանդ հանդեպ, որոնցով ինձ պահում ես: Ամեն:

Փորձություններն ու նեղություններն անպակաս են, իսկ մենք ու՞մ ենք վստահում , որ կհոգա մեր մասին:

Կանխատեսողի սխալը

1 938-ի սեպտեմբերի 21-ի կեսօրին երիտասարդ օդերևույթաբան Ջորջ Փիրսը Միացյալ Նահանգների օդերևույթաբանական գրասենյակին հայտնեց, որ Նյու Ինգլանդի հյուսիսում ուժեղ փոթորիկ է կանխատեսվում: Բայց գլխավոր օդերևույթաբանը վտանգավոր փոթորիկի մասին այդ ծանուցումը հեղինակելով ընդունեց՝ ասելով, որ արևադարձային քամիները չեն կարող հասնել հյուսիսային շրջան:

Երկու ժամ անց փոթորիկը հասավ Լոնգ Այլընդ, կեսօրից հետո հասնելով Նյու Ինգլանդ: Նավեր նետեց ցամաք, տներ ավերեց, ավելի քան 600 մարդ զոհվեց: Եթե ժամանակին չանտեսվեր Փիրսի հայտարարությունը, այդ մարդիկ կփրկվեին:

Երեմիա մարգարեի ժամանակ Աստված հորդորեց սուտ մարգարեներին չլսել, ասելով. «Մի՛ լսեք այն մարգարեների խոսքերը, որ ձեզ համար մարգարեություն են անում. դրանք փուչ բաներ են ասում ձեզ, իրենց սրտի ցնորքներից են խօսում և ոչ թե Տիրոջ բերանից» (Եր. 23. 16): Աստված նրանց մասին ասաց. «Եթե իմ խորհրդին հավատարիմ մնային, ապա իմ խոսքերը լսելի կդարձնեին իմ ժողովրդին, հետ կպահեին նրան իր չար ճանապարհներից, իր չար վարքից» (Հմ. 22):

«Սուտ մարգարեներ» մեր կյանքում էլ կան: Նրանք «մասնագետի» նման խորհուրդներ են տալիս: Սակայն Աստված իր Խոսքի ու Հոգու միջոցով մեզ տվել է այն, ինչի կարիքն ունենք բարին չարից զանազանելու ճանապարհին:

Աղոթք - Երկնավոր Հայր, շատերն այս օրերին հայտարարում են, թե Քո անունից են խոսում: Օգնիր մեզ, որ հնազանդ լինենք Քո Հոգուն և ոչ թե այս աշխարհի հոգուն: Ամեն:

Ձգույշ լինենք ու մեր ուշադրությունը միայն Աստծուն դարձնենք:

Կարդա՛ր
Երեմիա 23. 16-22

Ով որ իմ խոսքն ունի, թող հայտնի իմ խոսքը ճշմարտությանմբ: Եր. 23.28

Երգող հեղափոխությունը

Ի՞նչ է պետք հեղափոխություն հրահրելու համար: Զենքե՞ր, ռումբե՞ր, պատերազմանե՞ր: 1980-ականների վերջերին հեղափոխությունն էստոնիայում երգերով եղավ: Տասնամյակներ շարունակ ապրելով խորհրդային իշխանության ծանր լծի ներքո՝ ժողովուրդը ազգային երգերի շարքով մի շարժում սկսեց: Այդպես ձևավորվեց «Երգող հեղափոխությունը», որն էլ շատ կարևոր դեր խաղաց էստոնիայի անկախացման ճանապարհին:

Համացանցային կայք-էջերից մեկը այդ շարժումն այսպես է նկարագրում. «Այդ հեղափոխությունը ոչ բռնի ուժով տապալեց բռնի իշխանությունը: Իսկ երգը էստոնիայի համար միշտ էլ հիմնական միավորող ուժ է եղել, որով նրանք դիմացան խորհրդային հիսնամյա ծանր իշխանությանը»:

Երաժշտությունը կարող է կարևոր դեր ունենալ մեր կյանքի դժվարությունները հաղթահարելիս: Իր հոգու մուժ ու խավար պահերին էր, որ սաղմոսերգուն երգեց. «Արդ, ինչո՞ւ ես տրամում, հոգի՛ իմ, կամ ինչո՞ւ ես խռովեցնում ինձ. հույսդ դի՛ր Աստծու վրա, օրհնեղգի՛ր նրան, իմ անձը փրկողն Աստված է» (Սաղմ. 41. 6):

Գլխավոր երաժիշտ Ասափը հիասթափության մեջ էր, երբ հիշեց. «Որքա՞ն բարի է Աստված Իսրայելի համար և սրտով շիտակների համար» (72.1): Մարտահրավերներով լի ժամանակներում թող որ միանանք սաղմոսերգուին և մեր սրտերի համար հեղափոխության երգեր երգենք:

Աղոթք - Սիրելի՛ Հայր, շնորհակալ եմ, որ ամեն առավոտ նորացնում ես Քո ողորմությունը և մեծ է Քո հավատարմությունը: Ձորացրու՛ ինձ, որ կարողանամ երգել Քո մեծ սիրո երգը, նույնիսկ եթե արտասովոր երգեմ: Ամեն:

Կյանքը լի է ճնշումներով, բայց դրանք կարելի է հաղթահարել փառաբանության երգեր երգելով:

Կարդա՛
Սաղմոս 41. 1-5

«Արդ, ինչո՞ւ ես տրամում, հոգի՛ իմ, կամ ինչո՞ւ ես խռովեցնում ինձ. հույսդ դի՛ր Աստծու վրա, օրհնեղգի՛ր նրան, իմ անձը փրկողն Աստված է»:(Սաղմ. 41. 6):

Դարձյալ բարեկամներ

Մի օր մայրն ու իր փոքրիկ աղջնակը նստած էին եկեղեցում: Պաշտամունքի ժամանակ առիթ տրվեց, որ ներկաները հրապարակավ ընդունեն Աստծո շնորհած ներումը: Յուրաքանչյուր անգամ, որ մեկը առաջ էր գալիս, աղջնակը ծափ էր տալիս: Մայրը ստիպված եղավ առաջնորդին բացատրել. «Դստերս ասացի, որ ապաշխարությունը հաշտեցնում է մեզ և բարեկամացնում Աստծո հետ: Դրա համար էլ նա ուզում է բոլորի հետ ուրախանալ»:

Մանկան համար հասկանալի այս բացատրությունը Ավետարանի լավագույն մեկնաբանությունն է: Աստծո հետ թշնամացած ժամանակ հաշտվեցինք իր հետ Որդու մահով ու հարուժվեցինք (Հռոմ. 5. 9-10): Հիմա մենք իսկապես Աստծո բարեկամներն ենք, որովհետև մենք էինք, որ բարեկամությունը խզեցինք (Հմ.8), հետևաբար ապաշխարությունը մեր բաժինն է, որպեսզի կարողանանք հաշտություն հասնել: Ամբողջ երկնքում ուրախություն է լինում մեկ ապաշխարած մեղավորի համար (Ղուկ. 15.10), իսկ այդ փոքրիկն էլ անգիտակցորեն արձագանքում էր այդ ուրախությանը: Հիսուսն էլ իր հաշտության գործը նկարագրեց նման պայմաններով: «Ոչ ոք ավելի մեծ սեր չունի նրանից, քան այս, եթե մեկն իր կյանքն է տալիս իր բարեկամների համար» (Հովհ. 15. 13): Որպես մեր հանդեպ բարեկամության ու զոհաբերության արդյունք՝ հիմա մենք իր բարեկամները կարող ենք դառնալ: «Ձեզ այլևս «ծառա» չեմ կոչում...բայց «բարեկամ» կոչեցի» (15. 15):

Կարդա՛

Յոռմ. 5. 6-11

Որքա՞ն առավել, երբ հաշտվել ենք, նրա կյանքով կապրենք: Յոռմ. 5.10

Աղոթք - Սիրելի՛ Յայր, շնորհակալ եմ, որ ինձ սիրեցիր, երբ դեռ Քո թշնամին էի: Ապաշխարում եմ այն ամենի համար, ինչ հուսախաբ է անում Ձեզ և ուրախանում Քո բարեկամը լինելով: Ամեն:

Մեր մեղքերի պատճառով կարող ենք թշնամանալ Աստծո հետ: Բայց Հիսուսով հնարավոր է հաշտությունը:

Նախատեսության աշխարհ

Նաղյան, որ ծովային վարունգ անցնելու գործով էր զբաղվում, գիշերվա ժ. 2-ին մտնում է Մաղազասկար կղզու իր գյուղի մոտակա օվկիանոսի ծանծաղ մասը «բերք» հավաքելու: Վաղ ժամից նա չի նեղվում, որովհետև որպես ծովային պաշտպանության ծրագրի անդամ՝ հիմա ինքն ունի կայուն եկամուտ: Իսկ մինչ այդ եկամտի որևէ աղբյուր չուներ, և հիմա շնորհակալ է Աստծուն այդ հնարավորության համար: Աստծո ստեղծագործությունը փաստորեն դառնում է ծրագրի իրականացման կարևոր բաղադրիչ: Մեզ պետք եղածը հայթայթող Աստծուն փառաբանելու համար Սաղմոսերգուն գրում է. «Մարդկանց կարիքների համար լեռներում խոտ անեցրիր ու բանջար, և հողից հաց հանեցիր»

Կարդա՛ Սաղմոս
103. 10-18, 24-26

Ահա ծովը՝ մեծ և լայնատարած, որի մեջ վխտացող կենդանիներին թիվ չկա. այնտեղ կան մեծամեծ ու փոքր գազաններ: Սաղմ. 103. 25

(Սաղմ.103.14): Նաև ծովը կա: «Ահա ծովը՝ մեծ և լայնատարած, որի մեջ վխտացող կենդանիներին թիվ չկա . այնտեղ կան մեծամեծ ու փոքր գազաններ» (Հմ.25): Իսկապես հրաշք է, որ Աստծո հրաշալի ստեղծագործությունը ծառայում է մեր կարիքներին: Օրինակ ծովային սովորական վարունգը դառնում է առողջ աննդի գործ ձեռնարկելու առիթ: Այդ գործի շնորհիվ Նաղյան ու իր հարևաններն էլ կայուն եկամտի աղբյուր են ունենում: Աստծո ստեղծագործության մեջ ոչ մի բան պատահական չէ: Նա ամեն բան օգտագործում է իր փառքի և մեր բարիքի համար: Իրա համար էլ սաղմոսերգուն ասում է. «Պիտի օրհնեմ Տիրոջն իմ կյանքում, սաղմոս պիտի երգեմ իմ Աստծուն՝ քանի դեռ կամ» (Հմ.33): Մենք էլ այսօր փառաբանենք Աստծուն՝ մտաբերելով այն բաները, որ մեզ է տվել նախատեսության մեր այս աշխարհում:

Աղոթք - Արարիչ Աստված, հիանում եմք քո վիթխարի ստեղծագործությամբ և գոհանում մեզ տվածդ բոլոր բաներով: Ամեն:

Աստված իր հիանալի ստեղծագործությամբ հոգում է մեր բոլոր կարիքները: Փա՛ռք տանք Իրեն:

Ամենատխուր սագը

Մոտենում էի կանգառին, երբ ինձ թվաց, թե կանգառասրահում ֆուտբոլի գնդակ է ընկած: Զարմացած մոտեցա ու տեսա, որ այդ մոխրագույն զանգվածը գնդակ չէր, այլ կանաչական մի տխուր սագ: Սագերն առհասարակ դարնանն ու աշնանը հավաքվում են իմ աշխատավայրի մոտի մարգագետնում: Իսկ այսօրվանը միայն մեկ սագ էր, որը թեքել էր վիզն ու գլուխը պահել թևի տակ: «Ո՞ւր են քո ընկերները», մտովի հարցրեցի և ուզեցի գրկել միայնակ թռչունին (չփորձե՛ք անել): Երբեք չէի տեսել միայնակ սագ: Այդ թռչուններն ընդհանրապես խմբով են լինում ու միասին էլ թռչում են՝ դասավորվելով անգլերեն V տառի ձևով, որպեսզի հանդիպակաց քամու ուժը ավելի մեղմ լինի:

Մենք՝ մարդիկս էլ ստեղծված ենք հավաքականություն կազմելու համար (տե՛ս Ծն. 2.18): Ժողովողի 4. 10-ում Սողոմոնը նկարագրում է, թե մենք որքան խոցելի ենք, երբ մենակ ենք: «Վա՛յ մենակին, որ ընկնի, երբ ուրիշ մեկը չկա, որ բարձրացնի նրան»: Եվ ավելացնում է, որ այդ թվերի մեջ մեծ գորուծություն կա. «Եթե մեկի վրա բռնանան, երկուսը դեմ կկանգնեն. չէ՞ որ երեքտակ թելն էլ հեշտ չի կտրվում» (Հմ.12):

Մենք էլ միմյանց հետ հաղորդակցվելու, քաջալերվելու, թարմանալու և աճելու կարիք ունենք (տե՛ս նաև Ա. Կորնթ. 12. 21): Միասին մենք կարող ենք դիմազրավել, երբ կյանքի հողմերը փչեն մեր ճանապարհին: Միասին:

Աղոթք - Սիրո՛ղ Հայր, օգնի՛ր՝ հիշել, որ մենք ստեղծվել ենք ոչ թե միայնակ, այլ մեր քույրերի ու եղբայրների հետ թռչելու համար: Թող որ այսօր օգնենք մեկին, ով դրա կարիքն ունի: Ամեն:

Հանգամանքները կարող են մեզ միայնության մղել, սակայն Աստված մեզ տվել է բարեկամներ, որ միասին քայլենք:

Կարդա՛ր ժողովող 4. 9-12

Եթե մեկի վրա բռնանան, երկուսը դեմ կկանգնեն. չէ՞ որ երեքտակ թելն էլ հեշտ չի կտրվում:

Ժող.4.12

Աստված ասաց՝ ոչ

Շատ ազգեր ունեն նահատակների հիշատակության օրեր: Շատերն են ունեցել կոտորածներ, որոնք տարբեր են իրենց ընդլթով, ռազմավարական արժեքով ու միջազգային հետևանքներով: Մերը Մեծ Եղեռնն է: Այդպես ենք անվանում, որովհետև այն ընդգրկում էր ամբողջ ազգը: Դրա միջազգային հետևանքն այն եղավ, որ քսաներորդ դարում ցեղասպանության գործողություններ կրկնվեցին նաև այլ երկրներում: Պատմական իրողությունն է, որ Օսմանյան պետության ղեկավարները վճռել էին ջնջել հայի ներկայությունն իր սահմաններում և կազմակերպեցին ծրագրված սպանդ:

Կարդա՛

Բ Կորնթ. 4. 8-18

Յալածված, բայց երեսից չընկած, վայր ընկած, բայց չկորած: Բ. Կորնթ. 4. 9

Սակայն Աստված ասաց՝ ո՛չ: Միջազգային թատերաբեմում, մեծ տերությունների աչքի առաջ հայոց ցեղասպանությունը շարունակվեց ավելի քան հինգ տարի: Թուրքերի զինակիցները, բնականաբար, քաջալերում էին նրան, իսկ դաշնակից պետությունները քաղաքականություն էին խաղում: Սա՛ էր մարդկանց վերաբերմունքը դարի առաջին ցեղասպանության հանդեպ: **Սակայն Աստված ասաց՝ ո՛չ:** Եվ մենք այսօր ողջ ենք այդ ոչ-ի շնորհիվ: Իսկ ի՞նչ ենք մենք ասում այդ ոչ-ին ի պատասխան: Եթե այդ ոչ-ին ենք պարտական մեր այսօրվա կյանքով, ուրեմն պետք է հարցնենք, թե Նա ինչու՞ ապրեցրեց և ապրեցնում է մեզ: Պարզապես ընտանիք կազմելու, տուն շինելու, եկեղեցի, դպրոց, ակումբ կառուցելու, անուն ու դրամ վաստակելու համար: Աստծո ոչ-ին մենք պատասխանելու ենք՝ այո՛: Այո պետք է ասենք Աստծո ծրագրերին, հրավերին, պատվիրաններին: Այո՛ պետք է ասենք՝ ծառայելով Նրան և մեր անձը, մեր տաղանդները, ամբողջ ունեցածը դնելով Նրա տրամադրության տակ: Դա կլինի մեզ համար օրհնյալ ու իմաստալից կյանք:

Աղոթք - Արդար Աստված, Քո ոչ-ին այսօր մենք այո՛ ենք ասում: Ամեն:

Պատրաստ ես: Որոշումը քոնն է:

Վազել դեպի մարտահրավեր

Թոմը հետապնդեց այն երիտասարդներին, որոնք փորձում էին գողանալ ընկերոջ հեծանիվը: Նա որևէ ծրագիր չուներ, բայց գիտեր, որ պետք է ետ բերեր: Եվ շատ զարմացավ, երբ երեք գողերը, նայելով իրեն, թողեցին հեծանիվն ու փախան: Թոմը և՛ հանգստացավ, և՛ տպավորվեց իր քայլով: Վերջրեց հեծանիվն ու ետ դարձավ և հենց այդ պահին տեսավ, որ հետևից գալիս էր իր ամբակագմ ու մկանուտ ընկերը՝ Զեֆը: Եղիսեեի սպասարկուն խուճապի մատնվեց, երբ իր քաղաքը տեսավ թշնամիներով շրջապատված: Վազեց Եղիսեեի մոտ և ասաց. «Տե՛ր, ի՞նչ պիտի անենք»: Եղիսեեն հանգստացրեց նրան՝ ասելով. «Մի՛ վախեցիր, քանզի մեզ հետ եղողները նրանց հետ եղողներից շատ են»: Հետո Աստված սպասարկուի աչքերը բացեց և «նա տեսավ, որ Եղիսեեի շուրջը լեռը լի էր ձիերով ու հրեղեն մարտակառքերով, որոնք եկան նրա մոտ» (Հմ. 15-17): Եթե փորձես Հիսուսին հետևել, կարող ես հայտնվել զժվարին իրավիճակներում: Կարող ես փտանգել համբավը ու ապահովությունը, որովհետև որոշել ես անել այն, ինչ ճիշտ է: Այդ ճանապարհին կարող ես քուն ու հանգիստ էլ կորցնել: Բայց հիշի՛ր, որ դու մենակ չես: Կարիք չկա ավելի զորավոր ու խելացի լինել, քան առկա մարտահրավերը: Որովհետև Հիսուսը քեզ հետ է, իսկ Նրա զորությունը բոլոր թշնամիներից ավելի մեծ է: Պողոսի հա՛րցն ուղղիր ինքդ քեզ. « Եթե Աստված մեր կողմն է, ո՞վ է մեզ հակառակ» (Հռոմ. 8.31): Իսկապես, ո՞վ: Ոչ մեկը: Աստծո հետ վազի՛ր դեպի քեզ սպասող մարտահրավերը:

Աղոթք - Տե՛ր, օգնի՛ր՝ տեսնեմ, որ Դու ավելի մեծ ես, քան իմ դիմագրաված որևէ հարց: Շնորհակալ եմ Քո հավիտենական ներկայության համար: Ամեն:

Մտահոգություններն ու մտավախությունները փախցնու՞մ են քունդ: Գանձակի՛ր Տիրոջը և վստահի՛ր Իրեն:

Կարդա՛

Դ. Թագ. 6. 8-17

Տեսավ, որ Եղիսեեի շուրջը լեռը լի էր ձիերով ու հրեղեն մարտակառքերով, որոնք եկան նրա մոտ: Դ.Թագ. 6.17

Մեր հայրը երգում է

Դենդին սիրում է մարդկանց երգով քաջալերել: Մի օր, երբ ստփորականի նման մեր սիրած ճաշարոնում ճաշում էինք, նա նկատեց, որ մատուցողուհին տխուր է: Մի քանի հարցեր տալուց հետո նա սկսեց մի գրավիչ երգ երգել՝ նրան ուրախացնելու համար: Եվ օրիորդը, որ մեր պատվերներն էր գրի առնում, թեթևակի ժպտալով ասաց.

«Այո՛, ազնիվ պարոն, տրամադրությունս փոխեցիր և օրս լավացրիր: Շատ շնորհակալ եմ»: Երբ Սոփոնիայի գիրքը բացենք, կնկատենք, որ Աստված սիրում է երգել: Մարգարեն մեծ հմտությամբ նկարագրում է Աստծուն՝ որպես երաժիշտ, որը սիրում է երգել Իր գավակների ու Իր համար: Նա գրում է.

«Տեր Աստված քո մեջ է և կփրկի քեզ, ուրախություն կբերի քեզ, կնորոգի քեզ իր սիրով և ուրախ կլինի քո մեջ զվարճությամբ, ինչպես տոնի օրը» (Սոփ.3. 17): Աստված խոստացել է հավիտյան լինել նրանց հետ, ովքեր փոխակերպվել են Իր ողորմածությամբ: Բայց դրանով չի ավարտվում ամեն բան: Նա հրավիրում ու միանում է Իր ժողովրդի հետ, որ «ուրախանան ու զվարճանան ամբողջ սրտով» (Հմ.14): Մենք միայն կարող ենք պատկերացնել այն օրը, երբ բոլորս Աստծո և բոլոր նրանց հետ ենք լինելու, որոնք Հիսուսին վստահում են՝ որպես իրենց անձնական Տերն ու Փրկիչը: Ի՛նչ հիանալի կլինի լսել մեր երկնավոր Հոր երգելը մեզ հետ ու մեզ համար և վայելել Նրա սերը, հաստատումն ու ընդունումը:

Աղոթք - Երկնավոր Հայր, գիտենք, որ Հիսուսին Քո հավատարմության շնորհիվ Դու ոչ միայն ընդունում ես մեզ, այլև մեզ հետ ուրախանում ես: Շնորհակալ եմ Քո սիրո համար: Ամեն:

Դժվարության մեջ ես: Աստված քեզ համար ու քեզ հետ երգում է:

Կարդա՛
Սոփոնիա 3. 14-20

Աստված ուրախություն կբերի քեզ, կնորոգի քեզ իր սիրով և ուրախ կլինի քո մեջ զվարճությամբ: Սոփ. 3.17

Ջրերի միջով

«Ջոնսի ազատ նահանգը» խորագրով կինոնկարը պատմում է ԱՄՆ քաղաքացիական պատերազմի մասնակից Նյուտոն Նայթի և մի քանի այլ դասալիքների ու գերիների մասին, որոնք օգնում էին միացյալ բանակին, սակայն բռնվեցին և պատերազմից հետո ստիպված էին պայքարել իրենց բռնողների դեմ: Շատերը Նայթի՛ն հերոս հռչակեցին:

Իսկ նրա կյանքը դասալքուլթյունից հետո փրկել էին երկու գերիներ: Նրանք Նայթին տարան մի մեկուսի վայր, որտեղ բուժեցին փախուստի ժամանակ վնասված ոտքը: Եթե այդ մարդիկ լքեին նրան, նա կմեռներ:

Կարդա՛ր
Եսայի 43. 1-7

Եթե ջրերի միջով
անցնես՝ քեզ հետ
կլինես: Ես. 43.2

Հուդայի ժողովուրդը նույնպես վիրավոր, հուսահատ ու անօգնական վիճակում դիմագրավում էր թշնամուն: Ասորիները զբաղվել էին Իսրայելը: Եսային մարգարեացավ՝ ասելով, թե մի օր մեկ այլ թշնամի՝ Բաբելոնը կհաղթի նրանց: Հուդան նրանց ազատելու և ոչ թե լքելու համար Աստծո կարիքն ուներ: Պատկերացրեք նրանց տրված աճող հույսը, երբ ժողովուրդը լսեց Աստծո տված երաշխիքը. «Մի՛ վախեցիր, որովհետև քեզ հետ եմ» (Ես. 43.5): Ինչպիսի նեղություն կամ արհավիրք էլ դիմագրավելու լինեին նրանք, Աստված խոստացել էր իրենց հետ լինել, նրանց հետ «անցնել ջրերի միջով»՝ առաջնորդելով դեպի ապահովություն (Հմ.2): Նա կքայլեր նրանց հետ, և «եթէ կրակի միջով անցնեին՝ չէին այրվի» (Հմ.2):

Նույնիսկ եթե շատ դժվարին կացություն մեջ հայտնվես, Աստված խոստացել է քեզ հետ լինել: Նա կօգնի, որ դու ջրերի միջով անվնաս անցնես:

Աղոթք - Հայր, ջուրը խորն է, ու չգիտեմ՝ ինչպես փրկվեմ: Շնորհակալ եմ, որ խոստանում ես ինձ հետ լինել ու ինձ ապահով անցկացնել: Ամեն:

Միշտ կարիք կլինի խոր ջրերով անցնել: Վստահ լինենք, որ մեր ամենակարող Աստվածը մեզ հետ է:

Եկե՛ք փառավորենք

Ամեն օր, երբ հետմիջօրեին՝ նույն ժամին լսվում է Շեյլիի հեռախոսի հիշեցնող զանգը, նա մի պահ դադար է առնում ու շնորհակալություն հայտնում Աստծուն՝ իր տված բարություն համար: Թեև նա օրվա ընթացքում միշտ էլ հաղորդակցվում էր Աստծո հետ, սակայն սիրում էր դադարի այդ պահը, որովհետև դա օգնում էր ուրախանալ Աստծո հետ իր մտերմությունը:

Ներշնչված Շեյլիի նվիրումից՝ ես էլ որոշեցի օրվա մի պահը տրամադրել Քրիստոսին իր անձնագոհության համար շնորհակալություն հայտնելուն և այն մարդկանց համար աղոթելուն, որոնք դեռ փրկության կարիք ունեն:

Խորհում եմ, թե ինչ կկատարվի, եթե Հիսուսին բոլոր հավատացողները ամեն օր նման պահ ունենան. փառաբանեն իրեն և աղոթեն այլոց համար: Մինչև աշխարհի ծայրը տարածվող պաշտամունքի այդ գեղեցիկ ալիքի պատկերն է արտացոլված 66-րդ սաղմոսում: Սաղմոսերգուն աղերսում է Աստծո շնորհքի համար՝ հայտարարելով իր փափագը՝ «գոհություն պիտի մատուցեն քեզ բոլոր ժողովուրդները» (Հմ.4): Նա երգում է. «Թող ժողովուրդները քեզ օրհնաբանեն, Աստված, թող գոհություն մատուցեն քեզ բոլոր ժողովուրդները (Հմ.6): Նա հռչակում է Նրա գերիշխանությունն ու հավատարիմ առաջնորդությունը և որպես Աստծո մեծ սիրո ու անսահման օրհնության կենդանի վկայություն՝ Աստծո ժողովրդին ուղեկցում դեպի փառաբանություն. «Պիտի ուրախանան ու ցնծան ազգերը, քանզի դու արդարություն բերեցի քեզ և քեզ համար» (Հմ.5): Աստծո հավատարմությունը իր սիրելի զավակների հանդեպ ներշնչում է մեզ, որ ճանաչենք իրեն: Երբ անենք այդ բանը, ուրիշներն էլ կմիանան մեզ՝ իրեն վստահելու, իրեն հետևելու և իրեն որպես Տեր դավանելու հարցում:

Կարդա՛ր
Սաղմոս 66

Պիտի ուրախանան ու ցնծան ազգերը
Սաղմ. 66. 5

Աղոթք - Սուրբ Աստված, արժանի ես ամեն փառաբանության: Ամեն:

**Հիշի՛ր Աստծո տված բարիքները և մի պահ հատկացրու՝
Նրան պաշտելու համար:**

Յենց քո կողքին

Երուսաղեմի փոստատան աշխատակիցներն ամեն օր տարբերակում են նամակների տրցակները, որպեսզի դրանք ուղարկեն հասցեատերերին: Բայց դրանցից շատերը դասավորվում են «Աստծոն ուղարկված նամակներ» բաժնում: Ամեն տարի շուրջ հազար այդպիսի նամակ է հավաքվում: Աշխատողներից մեկը որոշեց այդ նամակները տանել ու դնել Երուսաղեմի Արևմտյան պատի քարերի մեջ, որտեղ մարդիկ սովորաբար իրենց գրած աղոթքներ են դնում: Այդ նամակների հեղինակները Աստծուն են դիմում ամենատարբեր խնդրանքներով՝ առողջության, աշխատանքի, ներումի, կամ էլ պարզապես շնորհակալություն են հայտնում: Եվ յուրաքանչյուր նամակագիր հավատում է, որ Աստված կլսի իրեն, եթե նամակը հասնի իրեն:

Կարդա՛ր
Բ Օր. 4. 5-8

Այդ ո՞ր մեծ ազգն է, որի Աստվածն իր մոտ, իր մեջ է, ինչպիսին մեր բոլորի Տեր Աստվածն է, որին կարող ենք դիմել: Բ Օր. 4.7

Իսրայելացիները անապատում ճանապարհորդելով շատ բան սովորեցին: Այդ դասերից մեկն այն էր, որ Աստված այդ օրերին հայտնի այլ աստվածների նման անհասանելի, հեռու, խուլ չէ, նրան հասնելու համար երկար ուխտագնացություններ պետք չեն: Ոչ: «Որովհետև այդ ո՞ր մեծ ազգն է, որի Աստվածն իր մոտ, իր մեջ է, ինչպիսին մեր բոլորի Տեր Աստվածն է, որին կարող ենք դիմել» (Բ. Օրինաց. 4. 7): Աստված Երուսաղեմում՝ մ չի ապրում: Նա մեզ մոտ է: Որտեղ որ մենք ենք, այնտեղ էլ Նա է, հենց մեր կողքին: Եթե միայն հնարավոր լիներ այդ նամակներին այս պատասխանը գրել. «Աստված հենց քո կողքին է: Պարզապես խոսի՛ր Իր հետ»:

Աղոթք - Հայր, Դու մեծ ես տիեզերքից, բայց մեզ ավելի մոտ ես, քան մեր շունչը: Շնորհակալ ենք, որ հետաքրքրված ես մեզանով և պատասխանում ես մեր յուրաքանչյուր աղոթքին: Ամեն:

Կարիքներ միշտ էլ կունենանք: Պարզապես խոսենք Աստծո հետ, Նա կլսի մեզ, որովհետև մեզ մոտ է:

Իրապես ազատ

«Ամիսթադ» ֆիլմը պատմում է 1839-ին Արևմտյան Աֆրիկայից փոխադրվող գերինների կողմից նալը գրավելու, նավապետին և մի քանի նավաստիներին սպանելու մասին: Ի վերջո այդ գերիները դարձյալ ձերբակալվում ու դատարան են տարվում: Դատավարուլթյան տեսարանում գերիների առաջնորդի՝ Սինիքի խոսքը շատ տպավորիչ է: Աստիճանաբար բարձրացող ձայնով իր բավական անվարժ անգլերենով նա արտասանում է երեք բառ. «Մեզ ազատություն տու՛ր»: Արդարությունը հաղթեց, և այդ մարդիկ ազատ արձակվեցին: Մարդկության մեծամասնությունը այսօր ֆիզիկապես կապված լինելու վտանգի մեջ է, սակայն մեղքի կապանքներից իրապես ազատվելը անհրաժեշտ է: Հովհաննու 8. 36-ում արձանագրված Հիսուսի խոսքերը մեզ քաղցր թեթևություն են տալիս. «Ուրեմն եթե Որդին ձեզ ազատի, հիրավի ազատ կլինեք» (Հովհ. 8.36): Որպես ճշմարիտ ազատություն աղբյուր՝ Հիսուս իր անձը մատնանչեց: Նա ներում է առաջարկում բոլոր իրեն հավատացողներին: Թեև իրեն հետևողների խմբից ոմանք իրենց համախոհ հայտարարեցին (Հմ.33), սակայն նրանց հետագա խոսքերը, պահվածքն ու Հիսուսի հանդեպ արարքները հակասում էին իրենց ասածներին: Հիսուսը ուզում է լսել նրանց, ովքեր պիտի արձագանքեն Սինիքի աղերսին և ասեն. «Ինձ ազատություն տու՛ր»: Նա սիրով սպասում է նրանց աղաղակին, որոնք չղթայված են անհավատությունամբ, վախով կամ ձախողմամբ: Ազատությունը սրտի հարց է: Այդպիսի ազատությունը վերապահված է նրանց համար, ովքեր հավատում են, որ Հիսուսը Աստծո որդին է, որը աշխարհ է ուղարկվել մեր մեղքերի զորությունը իր մահով ու հարությունամբ քանդելու:

Աղոթք - Տե՛ր Հիսուս, օգնի՛ր ինձ, որ հավատամ, թե Դու կարող ես ինձ ազատ արձակել: Ամեն:

Եթե մեղքերով ծանրաբեռնված ես քեզ զգում, դիմի՛ր Հիսուսին և Նա քեզ իրապես կազատի:

Կարդա՛
Յուվ. 8. 31-36

Եթե Որդին ձեզ ազատի, հիրավի ազատ կլինեք: Յուվ. 8. 36

Ճյուղերի վրա ապրել

Տանը շաբաթ անցկացնելուց հետո խորհրդականիս պատմում էի ապրումներիս ու զգացմունքային վայրիվերումներիս մասին: Նա առաջարկեց պատուհանից դուրս նայել՝ հատկապես ուշադրութիւն դարձնելով, թե աշնանային գույնզգույն տերևներով լի ծառերն ինչպես են քամուց օրորվում: Ցույց տալով, որ այդ նույն ժամանակ ծառերի բները անշարժ են, նա բացատրեց. «Մենք մի քիչ նման ենք այդ ծառերին: Երբ կյանքի քամիները ամեն կողմից փչում են, բնականաբար, մեր զգացումները տակնուվրա են լինում: Եվ մենք այնպես ենք ապրում, ասես միայն ճյուղեր ունենք: Բայց հարկավոր է գտնել մեր բունը, արմատը: Եվ երբ կյանքը ամեն կողմից քաշի մեզ, ոչ թե պետք է կառչենք միայն ճյուղերից, այլ ամուր ու հաստատուն մնանք ծառի բնի նման»:

Կարդա՛
Եփես. 4. 14-24

Որպեսզի Քրիստոսը ձեր սրտերում հավատով բնակվի, եվ դուք սիրո մեջ արմատ գցած ու հաստատված լինեք: Որպեսզի ճանաչեք Քրիստոսի սերը: Եփ.3.17-19

Նկարագրված պատկերը նման է Եփեսոսի եկեղեցու հավատացյալներին Պողոսի առաջարկած պատկերին: Հիշեցնելով Աստծո հիանալի պարգևը, որը հիանալի նպատակներով ու արժեքով նոր կյանք ունենալն է (Եփ.2. 6-10), Պողոսը հաստատեց, որ նրանք խորապես Քրիստոսի «սիրո մեջ արմատ գցած ու հաստատված» (3.18) էին, որպեսզի «վարդապետութեան ամեն քամուց երեքված ու տատանված չլինեն» (4.14): Պարզ է, որ մեզ անապահով ու դյուրբարեկ ենք զգում, վախերով լի: Բայց երբ աճում ենք Քրիստոսով մեր իսկական ինքնութեան մեջ (Հմ. 22-24), կարող ենք ունենալ Աստծո և միմյանց հետ հիմնավոր խաղաղութիւն (Հմ.3):

Աղոթք - Տե՛ր, շնորհակալ եմ, որ կյանքի մարտահրավերները դիմագրավելու զորութիւն ես տալիս մեզ: Օգնի՛ր, որ խոր արմատներ աճեմ Քո սիրո մեջ: Ամեն:

Կյանքի փոթորիկները սաստիկ կփչեն, բայց դու վստահ եղի՛ր, որ Տերը զորացնում ու քաջալերում է քեզ:

Համայնքի հիշատակ

Աստվածաբան Ռիչարդ Մաուն իր «Անհանգիստ հավատք» խորագրով գրքում կարևորում է անցյալի դասերը: Նա մասնավորապես մեջբերում է հոգեբան Ռոբերտ Բելլայի ասածը այն մասին, թե «առողջ ազգերը պետք է հիշատակի համայնքներ լինեն»: Բելլան այդ սկզբունքը կապում էր սոցիալական տարբեր խմբերի, ինչպես օրինակ ընտանիքների

հետ և ընդգծում, որ հիշելն ու հիշատակելը ապրող համայնքի կարևոր մասն են: Աստվածաշունչը նույնպես սովորեցնում է համայնքի հիշատակի կարևորությունը: Պասեքի տոնախմբությունը խորայնցիներին տրված էր հիշեցնելու, թե Աստված ինչ էր արել իրենց Եգիպտոսի գերությունից փրկելու համար (տե՛ս Ելից 12. 1-30): Մինչև այժմ էլ հրեա ժողովուրդը ամեն գարնան վերհիշում է իր

հարուստ համայնքի հիշատակը: Պասեքը Հիսուսի հետևորդների համար նույնպես մեծ նշանակություն ունի, որովհետև այն ցույց է տալիս Փրկչի կատարածը խաչի վրա: Հենց այդ տոնի ժամանակ էր՝ խաչելությունից մեկ օր առաջ, որ Հիսուսը հաստատեց իր հիշատակի սեղանը: Ղուկաս 22.19-ում կարդում ենք. «Եվ հացը վերցրեց, գոհացավ, կտրեց ու նրանց տվեց և ասաց. «Այս է իմ մարմինը, որ ձեզ համար տրվում է. այս արե՛ք իմ հիշատակի համար»: Երբ հաղորդության համար հավաքվում ենք Տիրոջ սեղանի շուրջ, հիշում ենք, որ Քրիստոսը մեզ ազատեց մեղքի գերությունից ու մեզ շնորհեց հավիտենական կյանք: Թո՛ղ որ Հիսուսի փրկարար սերը հիշեցնի մեզ, որ արժե իր խաչն էլ հիշատակել:

Աղոթք - Հայր, շնորհակալ եմ Որդուդ պարգևի համար: Նա մեզ տվել է շոշափելի միջոց իր զոհողությունը հիշելու համար ամեն անգամ, երբ հավաքվում ենք իր սեղանի շուրջ: Ամեն:

Ամեն անգամ Տիրոջ սեղանին մոտենալիս հիշի՛ր իրեն ու իր կատարած մեծ զոհողությունը:

Կարդա՛ր Ղուկաս 22. 14-23

Եվ հացը վերցրեց, գոհացավ, կտրեց ու նրանց տվեց և ասաց. «Այս է իմ մարմինը, որ ձեզ համար տրվում է. այս արե՛ք իմ հիշատակի համար: Ղուկ. 22.19

Նա, որ տեսնում է

Մտնելով խոհանոց ու տեսնելով դուրս սուրացող Մեքսին՝ կինս ճչաց. «Օ՛, ոչ»: Սակայն շունն արդեն հասցրել էր ուտել սեղանին դրված դառան ազդրամիսը: Նա փորձեց թաքնվել մահճակալի տակ, բայց միայն գլուխն ու ուսերն էին այնտեղ տեղավորվում, մարմինն ու պոչը երևում էին: Ես ցածրաձայն ասացի. «Օ՛հ Մեքս, մեղքերդ քեզ կդավաճանեն»: Այս խոսքը վերցված էր Մովսեսից, երբ նա հորդորում էր Իսրայելի երկու ցեղերին, որ հնազանդվեն Աստծուն ու հարգեն իրենց տված խոստումները: Նա ասում էր. «Իսկ եթե այդպես չվարվեք, մեղավոր կհամարվեք Տիրոջ առջև և ձեր մեղքերը կճանաչեք, երբ չարիքը հասնի ձեզ» (Թվեր 32.23):

Կարդա՛ր
Թվեր 32. 16-24

Ձեր մեղքերը կճանաչեք, երբ չարիքը հասնի ձեզ:
Թվեր 32.23

Մի պահ մեղքը հաճելի է թվում, սակայն այն պատճառ կարող է դառնալ Աստծուց հեռանալու ցավին: Մովսեսը ժողովրդին հիշեցնում է, որ Աստծուց ոչինչ չի կարելի թաքցնել: Ինչպես Աստվածաշնչի հեղինակներից մեկն է գրում. «Նրա երեսից աներևույթ մի արարած չկա, այլ ամեն բան մերկ է ու բաց նրա աչքերի առաջ. նրան պիտի հաշիվ տանք» (Եբր. 4.13):

Մեր սիրո սուրբ Աստվածը թեև տեսնում է ամեն բան, բայց կանչում է իր մոտ, որ խոստովանենք մեր մեղքերը և ապաշխարենք, որպեսզի արդարությամբ քայլենք Իր հետ (Ա. Հովհ. 1.9): Թող որ մենք սիրով հետևենք Իրեն:

Աղոթք - Շնորհակալ եմ, որ «ի՛նձ տեսնող Աստվածն ես» (Ծննդ. 16.13): Փառք եմ տալիս Քեզ, որ թեև տեսնում ես չարն ու բարին, բայց ուղարկեցիր Որդուդ, որ փրկի ի՛նձ ու ազատի: Օգնի՛ր, որ սիրո հնազանդությամբ քայլեմ: Ամեն:

**Աստված մեր արած ամեն բանը՝ չար, թե բարի, տեսնում է:
Բայց սիրում է և ներում:**

Խավարում

Հատուկ ակնոցները պատրաստած՝ ընտանիքիս անդամների ու ԱՄՆ միլիոնավոր բնակիչների հետ լավագույն տեղում կանգնած էի՝ դիտելու հազվադեպ պատահելիք արևի խավարումը: Ամառային պայծառ կեսօրից հետո խավարումը անսովոր մթնոթյուն բերեց: Թեև այդ օրվա խավարումը մեզ համար զվարճալի մի բան էր ու Աստծո անիմանալի գորություն հաստատում (Սաղմ. 133. 6-7), սակայն պատմություն ընթացքում կեսօրին արևի խավարումը անսովոր ու սարսափազդու բան էր (Ելից 10.21, Մատթ. 27.45), մինչև, որը ցույց էր տալիս, թե ամեն բան այնպես էլ, ինչպես պետք է լինի: Իսրայելի թագավորությունն օրերին Աստծո անունով խոսող Ամոս մարգարեն Հյուսիսային թագավորությանն ազդարարեց, որ եթե շարունակեն հեռանալ Աստծուց, կործանում կլինի: Որպես նշան՝ «այդ օրը արեգակը մայր պիտի մտնի միջօրերին, և երկրում լույսը պիտի խավարի ցերեկով» (Ամոս. 8.9): Սակայն Աստծո գերազույն նպատակն էր և է՛ ամեն բան ճիշտ անել: Նույնիսկ այն ժամանակ, երբ ժողովուրդը աքսորի մեջ էր, Աստված խոստացավ մի օր մնացողներին ետ բերել Երուսաղեմ և ասաց. «Այդ օրը պիտի կանգնեցնեմ Դավթի խորանը, պիտի վերականգնեմ նրա ավերակները, գետնին հավասարված նրա տեղերը վերստին պիտի կանգնեցնեմ եւ պիտի վերաշինեմ այն հին օրերի նման» (9-11): Նույնիսկ երբ կյանքն իր խավարագույն պահի մեջ լինի, Իսրայելի նման մենք էլ կարող ենք մխիթարվել՝ իմանալով, որ Աստված է գործի հեղինակը:

Աղոթք - Տեր Դիսուս, ինչպես կարդում եմք Հայտնության 21.23-ում, շնորհակալ եմ, որ Դու արևից ավելի պայծառ ես ու ծածկում ես խավարը: Ամեն:

Խավար ու մութ օրեր կունենանք և պիտի ունենանք, սակայն վստահենք Նրան, որ մեր խավարը լույսի է վերածում:

Կարդա՛

Ամոս 8. 9-12, 9. 11-12

Այդ օրը պիտի կանգնեցնեմ Դավթի խորանը, պիտի վերականգնեմ նրա ավերակները, գետնին հավասարված նրա տեղերը վերստին պիտի կանգնեցնեմ եւ պիտի վերաշինեմ այն հին օրերի նման Ամոս.9.11

Ուժ՝ ճանապարհի գնալու համար

Կարճ ժամանակում բավական բարդ գրավոր ծրագիր կազմելու գործ էի ստանձնել: Սակայն օրեցօր զգում էի, որ չափազանց հոգնած ու սպառված եմ, չեմ կարողանալու այն գլուխ բերել: Հենց այդ ժամանակ բարեկամներիցս մեկն ասաց. «Ե՛րբ ես վերջին անգամ հանգստացել: Թերևս կարիք ունես մի լավ թարմանալաու և սնվելու»:

Ընդունելով, որ նրա ասածը ճիշտ էր, ես մտաբերեցի Եղիային ու Յեզաբելից նրա ստացած սպառնալիքը (Գ. Թագ 19. 2), թեև իմ ձեռնարկած գործը այնքան էլ նման չէր մարգարեի փորձառու թյանը:

Եղիան Կարմելոս լեռան վրա սուտ մարգարեներին պարտության մատնելուց հետո ստացավ Յեզաբելի սպառնալիքը, թե պիտի սպանի իրեն: Եղիան հուսահատվեց և ուզում էր մեռնել: Բայց հետո քնեց, հանգստացավ, ու հրեշտակը երկու անգամ այցելեց նրան և ուտելիք տվեց: Աստված վերականգնեց Եղիայի ֆիզիկական ուժը, և նա կարողացավ շարունակել իր ճամփան:

Երբ ճանապարհը «չատ երկար է» (Հմ.7), մենք էլ հանգստանալու և օգտակար սննդի կարիք ենք ունենում: Հոգնած ու քաղցած վիճակում հուսահատության ու վախի մատնվելը հեշտ է: Բայց երբ Աստված Իր միջոցներով հասնի մեր ֆիզիկական կարիքներին, ինչքան որ հնարավոր է այս աշխարհում, մենք կկարողանանք հաջորդ քայլն անել իրեն ծառայելու համար:

Աղոթք - Հայր Աստված, մեզ ստեղծել ես՝ որպես Քո ժողովուրդ: Շնորհակալ ենք մեր սահմանափակումների համար, որոնք հիշեցնում են, որ Դու ես Աստվածը: Օգնիր, որ կարողանանք Քեզ ծառայել ուրախությամբ: Ամեն:

Միշտ էլ կարող ենք ունենալ հոգնության ու սպառումի պահեր: Դիմենք Աստծուն, որ կազդուրի ու զորացնի մեզ:

Կարդա՛ր
Գ. Թագ. 19. 1-9

Եվ ահա մեկը նրան մոտենալով՝ ասաց. «Ելիր ու կե՛ր»:
Գ.Թագ. 19.5

Անկարելի ներում

Ռավենսբրուք համակենտրոնացման ճամբարի փլատակներում, որտեղ նացիստները սպանել էին շուրջ 50 հազար կանանց, ազատարարները դտան այսպիսի բովանդակություններ աղոթք. «Ո՛վ Տեր, հիշի՛ր ոչ միայն բարի, այլև չարակամ մարդկանց: Բայց մի՛ հիշիր մեզ նրանց տված տառապանքն ու նեղությունները: Հիշի՛ր այն պտուղները, որոնք մեր տառապանքի արդյունքն են. մեր ընկերասիրությունը, հավատարմությունը, մեր խոնարհությունն ու քաջությունը, առատաձեռնությունն ու մեր սրտի մեծությունը, որոնք աճել են մեր կրած նեղությունների մեջ: Եվ երբ նրանք կզան մեզ դատապարտելու, թող որ մեր ունեցած այդ բոլոր պտուղները դառնան ներում նրանց համար»: Անհնար է պատկերացնել այն կնոջ սարսափն ու ցավը, որ գրել է այս աղոթքը: Անհնար է պատկերացնել, թե այդ աղոթքի բառերն ասողը ի՛նչ անբացատրելի սիրտ է ունեցել: Նա արել էր աներևակայելին. Աստծուց ներում էր խնդրել իրեն տանջողների համար: Սա Հիսուսի աղոթքի արձագանքն է: Ամբաստանումից. ծաղրվելուց, ծեծվելուց ու մարդկանց առաջ խայտառակվելուց հետո Հիսուսը «խաչվեց երկու չարագործների հետ» (Ղուկ. 23.33): Սպասվում էր, որ արյունը վա, կոպիտ խաչի վրա կախված, շնչակտուր Հիսուսը պիտի դատապարտեր իրեն տանջողներին՝ խնդրելով հատուցում ու երկնային արդարություն: Սակայն Հիսուսը արտասանեց մի աղոթք՝ հակասելով մարդկային ամեն տրամաբանության: «Հա՛յր, ների՛ր նրանց, որովհետև չգիտեն, թե ի՛նչ են անում» (23.34), -ասաց նա: Հիսուսի երկնային շնորհի մեջ անկարելի համարվող ներումը ճրի է տրվում:

Կարդա՛ր
Ղուկաս 23. 32-43
Յայր, ների՛ր նրանց:
Ղուկ. 23.34

Աղոթք - Յայր, Քո տված ներումը տարօրինակ ու անհնարին է: Մեր ցավի մեջ դժվար է պատկերացնել դրա կարելիությունը: Օգնի՛ր մեզ և սովորեցրու՛ Քո սերը: Ամեն:

Թեև Աստծո տված ներումը անկարելի է թվում, բայց Նա այն շնորհում է բոլորին:

Միջանկյալ աղոթքներ

Շարաթ երեկոյան ընտանիքով գնացինք մի խորտկարան՝ **Ճաշելու**: Երբ մատուցողը համեղ, փխրուն գետնախնձորի ու բուրգերի պնակը դրեց սեղանին, ամուսինս հարցրեց նրա անունը և ասաց, որ մենք ճաշից առաջ, սովորության համաձայն, աղոթում ենք: Արդյոք ունի՞ր ինքը մի կարիք, որի համար կարող ենք աղոթել: Ալենը զարմացած նայեց մեզ ու մի պահ լռելուց հետո ասաց, որ ինքը ամեն գիշեր իր ընկերոջ տանն է մնում, որի մեքենան խափանվել է, և նա փող չունի նորոգելու:

Կարդա՛ր
 Զոռմ. 8. 26-34

Յոզիմ Աստծուն վայել կերպով բարեխոսում է սրբերի համար Զոռմ. 8.27.

Մինչ ամուսինս մեղմ ձայնով Աստծուց խնդրում էր, որ Ալենի կարիքները հոգա ու իր սերը ցույց տա, ես մտածեցի, որ մեր միջանկյալ աղոթքները նման են այն պահերին, երբ Սուրբ Հոգին լսում է մեր հարցերը և մեզ կապում Աստծո հետ: Մեր կարիքների ժամանակ, երբ զգում ենք, որ չենք կարող դիմագրավել կյանքի դժվարություններին ու չգիտենք՝ ինչ ասել Աստծուն, «Սրտերը քննողը գիտե, թե Հոգու խորհուրդն ի՞նչ է, որովհետև Աստծուն վայել կերպով բարեխոսում է սրբերի համար» (Հոռմ. 8.27): Հոգու ասածը խորհրդավոր է, այն մեզ վստահություն է տալիս, որ Աստծո կամքը մեր կյանքի հանդեպ համեմատելի է:

Հաջորդ անգամ երբ աղոթես ուրիշի համար՝ խնդրելով Աստծո առաջնորդությունն ու պաշտպանությունը, թող այդ ազնիվ վարմունքը քեզ հիշեցնի, որ Քո հոգևոր կարիքներն էլ դրված են Աստծո առջև, որը գիտե քո անունը և հոգում է քո մասին:

Աղոթք - Տե՛ր, շնորհակալ եմ, որ փորձությունը ինձ չի կարող Քեզանից հեռացնել: Խնդրում եմ՝ ինձ հաղթանակ տուր Քո հարության գորությունից: Ամեն:

Այսօր աղոթի՛ր մեկ ուրիշի համար՝ հիշելով, որ Սուրբ Զոզիմ էլ բարեխոսում է քեզ համար:

Խոսել չկարողացող մարդը

Բելիզի ծերանոցում անվասայլակին նստած մարդը ուրախուլթյամբ լսեց աշակերտների երգը Հիսուսի մասին: Հետո, երբ այդ երեխաներից մի քանիսը փորձեցին իր հետ շփվել, տեսան, որ նա անկարող էր խոսել: Կաթվածից հետո կորցրել էր խոսելու կարողությունը:

Քանի որ չէին կարող հաղորդակցվել, պատանիները որոշեցին երգել նրա համար: Եվ երբ նրանք սկսեցին երգել, հրաշք կատարվեց: Խոսել չկարողացող մարդն սկսեց երգել: Նա իր նորահայտ բարեկամների հետ մեծ խանդավառությամբ երգեց «Ի՛նչ Մեծ ես Դու» երգը:

Ուշագրավ պահ էր բոլորի համար: Այդ մարդու՝ Աստծո հանդեպ ունեցած սերը խորտակեց բոլոր արգելքները և ուրախ փառաբանություն վերածվեց: Բոլորս էլ ժամանակ առ ժամանակ տարբեր պատճառներով պաշտամունքի արգելքներ ենք ունենում: Մեր այս չխոսող բարեկամը հիշեցնում է, որ Աստծո մեծությունն ու վեհությունը կարող է հաղթահարել ցանկացած արգելք: «Օրհնեցե՛ք Տիրոջը նոր օրհներգով, օրհնեցե՛ք Տիրոջը, համայն աշխարհի մարդիկ» (Սաղմ. 95.2):

Ուզո՞ւմ ես պաշտամունք բարձրացնել: Սուրբ Գրքից կարդալով 95-րդ սաղմոսի նման մի հատված՝ մտածի՛ր, թե որքան մեծ է Աստված: Եվ դու կտեսնես, որ քո արգելքներն ու առարկությունները փառաբանություն կվերածվեն:

Աղոթք – Ո՛վ մեր մեծ Աստված, խոր ապշանքով եմ դիտում, ի՛նչ մեծ ես Դու: Ամեն:

Կարդա՛ր Սաղմոս 95

Մեծ է Տերն ու անչափ օրհնյալ, ահարկու է նա բոլոր կուռքերից ավելի:
Սաղմ. 95.4

Միշտ էլ արգելքներ կունենանք Աստծուն փառաբանելու գանգ առնելիս, սակայն փառաբանենք մեր Տիրոջը:

Կասկած ու հավատք

Մինչ Թեքն արթնացավ ուժեղ գլխացավից ու մտածեց, որ դարձյալ իր սովորական միզբեմնն է սրվել: Բայց երբ ուզեց անկողնուց վեր կենալ, վայր ընկավ: Նրան տեղափոխեցին հիվանդանոց, որտեղ պարզվեց, որ կաթված է ստացել: Չորս ամիս բուժում ստանալուց հետո թեև նա վերագտավ հիշողությունն ու սկսեց խոսել, սակայն քայլելը դեռ ցավոտ էր: Հաճախ էր հուսահատություն մեջ ընկնում, բայց մխիթարվում էր Հոբի գիրքը կարդալով:

Հորը մեկ օրում կորցրեց իր ամբողջ կարողությունն ու զավակներին: Այդուհանդերձ նա հույսով նայեց Աստծուն և փառավորեց Նրան՝ որպես ամեն բանի սկզբնաղբյուր: Ընդունեց Աստծո գերիշխող ձեռքը նույնիսկ արհավիրքի ժամանակ (Հոբ 1.22): Հիացմունքի արժանի է Հոբի մեծ հավատքը, բայց նա անցավ նաև մեծ հուսահատությունների միջով: Առողջությունը կորցնելուց հետո (2.7) նա անիծեց իր ծնված օրը (3.1): Անկեղծ էր իր բարեկամների և Աստծո հետ իր ցավերով: Ի վերջո ընդունեց, որ թե՛ բարին և թե՛ չարը գալիս են Աստծո ձեռքից (13,15, 19, 25-27):

Տառապանքների մեջ մենք էլ կարող ենք տատանվել հույսի ու հուսահատության, կասկածի ու հավատքի միջև: Աստված մեզանից չի պահանջում, որ անբարենպաստ պայմաններում պարապ մնանք: Ընդհակառակը՝ մեզ մեր խնդիրներով հրավիրում է Իր մոտ: Թեև երբեմն մեր հավատքը տկարանում է, բայց կարող ենք վստահ լինել, որ Աստված միշտ էլ հավատարիմ է:

Աղոթք – Սիրելի՛ Հայր, երբ կասկածներն ու վախերը ճնշեն ինձ, օգնի՛ր՝ հիշել, որ կարևոր եմ Քեզ համար: Որ Դու միշտ հսկում ես ինձ և հոգում իմ մասին: Ամեն:

Կասկածներ ու տարակուսանքներ միշտ էլ կունենանք, սակայն անհրաժեշտ է ապավինել Աստծուն ու աղոթքով դիմել Իրեն:

Կարդա՛ր
Յոբ 1. 20-22, 2. 7-10

Տերը տվեց, Տերն էլ
հետ առավ:
Թող օրինյալ լինի
Տիրոջ անունը:
Յոբ. 1.22

Յավերժ սեր

Տարիներ առաջ չորս տարեկան որդիս ինձ տվեց չրջանակի մեջ գրված փայտե մի սիրտ, որին ամրացրած մետաղյա թիթեղի վրա գրված էր «Ընդմիշտ»: «Մայրիկ, ես քեզ միշտ կսիրեմ», - ասաց տղաս: Ես ջերմորեն գրկեցի նրան ու շնորհակալություն հայտնեցի: Այդ անգին նվերը Աստծո անսպառ սիրո երաշխիք է դարձել ինձ համար: Դժվարին օրերիս Աստված գործածում է այդ քնքուշ նվերը՝ ինձ քաջալերելու, մխիթարելու համար՝ վստահեցնելով, որ ես խորապես սիրված եմ: Նվիրական չրջանակը նաև ինձ հիշեցնում է Աստծո հավիտենական սիրո մասին, ինչպես որ ներկայացված է Իր խոսքում և հաստատված Իր Հոգու միջոցով: Մենք կարող ենք վստահել Աստծո անսպառ սիրու թանձրությանն ու երգել շնորհակալական փառաբանություններ, որոնք հաստատում են Իր մնայուն սերը, ինչպես որ

սաղմոսերգուն է անում (Սաղմ. 135.1): Մենք կարող ենք Տիրոջը փառաբանել, քանզի հավերժ է նրա ողորմությունը (2-3), հավատալ նրա գործած հրաշքներին ու անսահման իմաստունությանը (4-5): Աստված մեզ սիրում է ընդմիշտ և Նա է երկնքի ու երկրի հոգատար Արարիչը, որ հսկում է ժամանակի վրա (Հմ.6-9): Մենք էլ կարող ենք ուրախանալ, որովհետև սաղմոսերգուի երգած հավիտենական սերը նույն շարունակական սերն է, որ մեր հզոր Արարիչն ու Պահպանողը լցնում է Իր որդիների կյանքի մեջ: Կարևոր չէ, թե մենք ինչ դժվարություններ ենք հաղթահարում, Նա, որ մեզ ստեղծեց, կմնա մեզ հետ ու կգորացնի՝ ցույց տալով որ Ինքը մեզ սիրում է անվերապահորեն ու ամբողջովին: Շնորհակալ եմ, Տե՛ր, Քո անհամար հիշեցումների ու կյանք փոխող սիրո համար:

Աղոթք – Յայր, խնդրում եմք՝ օգնիր մեզ, որ սիրենք Քեզ և ուրիշներին, որպեսզի ավելի վստահ լինենք մեր հանդեպ Քո անսպառ սիրո համար: Ամեն:

Աստված Իր սիրով մոտենում ու զորացնում է մեր հավատքը:

Կարդա՛ր
Սաղմոս 135. 1-9

Եվ մենք ճանաչեցինք սերն ու հավատացինք այն սիրուն, որ Աստված ունի մեր նկատմամբ. Աստված սեր է: Ա.Դովի. 4.16

Սովորել մանուկներից

Բարեկամիս հետ ճամփորդում էի Քենիայում: Մայրաքաղաք Նայրոբիի ծայրամասային, անմաքուր թաղամասերից մեկում անչափ հուզվեցինք՝ տեսնելով այդտեղի չքավորությունը: Այդ նույն միջավայրում, սակայն, ասես ջրի թարմ հոսանք լինեին մեր շուրջը վազվզող մանուկները, որոնք իրենց լեզվով կանչում էին. «Մչունգաջի, մչունգաջի»: Երբ «հովիվ» էր նշանակում: Նրանց ուրախությունն առիթն այն էր, որ մեր մեքենայում տեսան իրենց հոգևոր առաջնորդին, որը հայտնի է իր հոգատարությունը, և իրենց զվարթ ձայներով դիմավորեցին նրան:

Կարդա՛
Մատթեոս 21. 8-17

Մանուկների ու կաթնակերների բերանով օրհնություն կատարեցիր: Մատթ. 21.16

Երբ Հիսուսը ավանակին նստած հասավ Երուսաղեմ, դարձյալ երեխաները նրան ողջունողների մեջ էին: «Օվսաննա՛ Դավիթի որդուն, օրհնյա՛լ է Տիրոջ անունով եկողը» (Մատթ. 21. 9. 15): Սակայն այդտեղ միայն Տեր Հիսուսի փառաբանությունները չէին, որ լսվում էին: Կարելի էր լսել մատաղի համար կենդանիներ վաճառողի ձայնը, փող փոխողների աղմուկը, որոնց Հիսուսը վռնդեց (Հմ. 12,13): Նաև կրոնական առաջնորդների ձայները, որոնք, տեսնելով Նրա կատարած սքանչելիքները, ընդվզեցին (Հմ. 14-15), իրենց դժգոհությունն արտահայտեցին մանուկների փառաբանական ձայներին (Հմ.16)՝ այդպիսով ի ցույց դնելով իրենց հոգու աղքատությունը:

Հիսուսը լսում է մեր փառաբանությունն ու աղաղակները և ազատում է մեզ, երբ իրեն ենք մոտենում մանկական հավատքով:

Աղոթք - Տե՛ր Հիսուս, օգնի՛ր, որ կարողանամ տեսնել Քեզ, իմանամ, որ Դու ես իմ Տերն ու Փրկիչը: Ամեն:

Արժե լինել մանուկների նման ու սովորել նրանցից՝ տեսնելու համար իրեն՝ որպես մեր Տե՛րն ու Փրկի՛չը:

Բաց թևեր

Մյոզիի ընտանիքը «Բաց թևեր ու բաց տուն» փրկիսոփայության կրողն է: Իրենց տանը մարդիկ, հատկապես նեղության մեջ եղողները, միշտ սպասված են: Այդպիսի հյուրընկալ հարկի տակ է իր ինը քույր ու եղբայրների հետ մեծացել Սեյդին: «Մենք մեծացանք որպես մի համայնք՝ միմյանց սիրելով, ասում է նա, -յուրաքանչյուրս պատասխանատու էինք ամեն ինչի համար: Հայրս մեզ սովորեցրեց սիրել միմյանց, հոգ տանել ու պաշտպանել իրար»:

Երբ Դավիթ թագավորը կարիքի մեջ էր, Աստծո մեջ գտավ նման սեր և հոգատարություն: Բ. Թագավորաց 22-ը և Սաղմոս 17-ը արձանագրում են Դավթի փառաբանության երգը Աստծուն, որովհետև նա էր եղել իր ապաստանը ամբողջ կյանքում: Նա ասում է.« Իմ նեղության մեջ Տիրոջը պիտի դիմեմ, իմ Աստծուն աղաղակեմ, ու նա իր սուրբ տաճարից պիտի լսի իմ ձայնը, իմ աղաղակը նրա ականջին պիտի հասնի» (Բ. Թագ. 22.7):

Աստված բազմիցս փրկել էր Դավթին իր թշնամիներից, որոնցից մեկն էլ Սավուղն էր: Եվ նա փառաբանում էր Աստծուն՝ ասելով. «Տերն իմ վեմն է, ամբողջյունն ու փրկիչը» (Հմ. 2):

Հնարավոր է, որ մեր նեղությունն ու կարիքը փոքր թվա Դավթի տազնապի համեմատ, սակայն Աստված ընդունում է, երբ էլ որ դիմենք Իրեն ու ապաստան փնտրենք: Նրա թևերը միշտ բաց են: Ուստի մենք էլ «Իր անունը գովերգենք սաղմոսներում» (Հմ.50):

Աղոթք - Հայր, շնորհակալ եմ, որ միշտ եղել ես ու կլինես իմ ապահով ապաստանը: Ամեն:

Տագնապներ միշտ էլ կարող ենք ունենալ, բայց մեր կարևոր փափագն է լինելու դեպի Իր բաց թևերը վազելը:

Կարդա՛

Բ Թագ. 22. 1-7, 17-20

Իմ նեղության մեջ Տիրոջը պիտի դիմեմ, իմ աղաղակը նրա ականջին պիտի հասնի

Բ. Թագ. 22.7

Նախ Դիտուելը

Երբ հոգևոր հովիվը բավական դժվարին մի հարց ուղղեց մեր դասարանին, ես անմիջապես ձեռք բարձրացրի: Նոր էի կարդացել, հետևաբար պատասխանը գիտեի և ուղեցի ցույց տալ իմացությունս: Հաջորդ պահին, սակայն, զգացի, թե որքան ամոթալի է այլոց առջև փառավորվելը և ձեռքս իջեցրի: Այդ երևույթը ավելի լավ ցույց է տալիս Հովհաննես Մկրտիչը: Երբ նրա աշակերտները գանգատվում են, թե մարդիկ սկսել են իրեն լքել ու գնալ Հիսուսի հետևից, նա ասում է, որ ինքն ուրախ է դրա համար: «Ես Քրիստոսը չեմ, այլ նրա առջևից եմ ուղարկվել: Նա պետք է մեծանա, իսկ ես փոքրանամ» (3.28-30): Հովհաննեսն ասում է, որ ինքը գոյություն ունի Հիսուսի շնորհիվ: «Նա՛ է, որ գալիս է վերևից, իսկ վերևից եկողն ամենից վեր է» (Հմ.31): Դա երկնային Որդին է, որ իր կյանքը տվեց մեզ համար և Նա պետք է ստանա ամեն փառք ու համբավ:

**Կարդա՛ր
Դովհաննես 3. 26-36**

Նա պետք է մեծանա, իսկ ես փոքրանամ Դովհ. 3.30

Որևէ ուշադրություն, որ կենտրոնանում է մեզ վրա, մեզ շեղում է Տիրոջից: Որովհետև Նա մեր միակ փրկիչն ու աշխարհի հույսն է, և նրանից գողացված որևէ համբավ մեզ վնաս կհասցնի:

Որևէ ուշադրություն, որ կենտրոնանում է մեզ վրա, մեզ շեղում է Տիրոջից: Որովհետև Նա մեր միակ փրկիչն ու աշխարհի հույսն է, և նրանից գողացված որևէ համբավ մեզ վնաս կհասցնի:

Ուստի մարդկանց ուշադրությունը մեր վրայից Հիսուսին դարձնենք: Դա կլինի լավագույնը իր, աշխարհի ու մեզ համար:

Աղոթք - Երկնավոր Հայր, օգնի՛ր հասկանանաք, որ մեր պարտականությունն է մարդկանց ուշադրությունը Քո Որդուն դարձնելը, որպեսզի Ինքը լցնի ու ամբողջացնի պատկերը: Օգնի՛ր տեսնելու, որ մենք փոքրանալու, իսկ Ինքը մեծանալու է: Ամեն:

Մեր պարտականությունն է մարդկանց ուշադրությունը դարձնել ոչ թե մեզ, այլ Դիտուսի վրա:

Շինարարության մեջ

Երբ երթևեկությունը դանդաղեց, նկատեցի, որ բանվորները վերասալարիում են ճանապարհը: «Բայց նոր էին այն վերջացրել», - խորհեցի ես ու անդրադարձա այն իրողությունը, որ ճանապարհի շինարարությունը բնավ չի ավարտվում: Ես երբեք չեմ լսել, որ հայտարարվի, թե սալարիող ընկերությունն ամբողջությամբ ավարտել է աշխատանքը, վայելե՛ք պողոտան: Իմ հոգևոր կյանքում ևս նույն պատկերն է: Երբ նոր էի ունեցել հավատքի փորձառություն, պատկերացնում էի, որ մի օր հասնելու եմ կատարելության, երբ ամեն ինչ պիտի կարողանամ հասկանալ, և այդ ժամանակ ամեն ինչ «սահուն սալարկված» պիտի լինի:

Երեսուն տարի անց խոստովանում եմ, որ ես էլ դեռ «շինարարության մեջ եմ», նման ամեն օր իմ անցած ճանապարհներին: Եբրայեցիներին ուղղված նամակի 10.14-ում մի հիանալի խոստում կա, որն ասում է. «Որովհետև մեկ զոհով սրբվողներին հավիտյան կատարյալ դարձրեց»: Հիսուսի խաչելությունը արդեն մեզ ամբողջովին ու կատարելապես փրկել է: Աստծո աչքում մենք ամբողջապես նորոգված ենք: Սակայն իրականում գործողությունը չի կարող ավարտվել, քանի դեռ մենք երկրի վրա ենք: Մենք ձևավորվում ենք Իր նմանությամբ, ասել է, թե «մենք դեռ սրբվում ենք»: Մի օր Իրեն պետք է տեսնենք երես առ երես ու Իրեն նման պիտի լինենք (Ա. Հովհ. 3.2): Իսկ մինչ այդ օրը մենք դեռ «շինարարության մեջ ենք»: Այդ փառավոր օրը մեր մեջ եղած գործը իրապես կամբողջանա:

Աղոթք - Հայր, երբեմն հուսախաբվում եմ, որ իմ հոգևոր աճը դանդաղ է ընթանում: Օգնի՛ր՝ հիշել, որ Դու դեռ աշխատում ու ձևավորում ես ինձ, որպեսզի ավելի ու ավելի նմանվեմ Քեզ: Ամեն:

Տեսնելով մեր հոգևոր կյանքի դանդաղ աճը՝ հուսահատվում ենք: Բայց չնոռանանք, որ Տերը շարունակում է մեզ ձևավորել՝ մինչև հասնենք կատարելության:

Կարդա՛
Եբր. 10. 11-18
Որովհետև մեկ զոհով սրբվողներին հավիտյան կատարյալ դարձրեց:
Եբր. 10.14

Յոգու հետ ներդաշնակ

Երբ տեսա, որ մասնագետը շտկում էր շքեղ դաշնամուրի լարերը, մտաբերեցի այն ժամանակները, երբ այս նույն գործիքով հիանալիորեն հնչում էր «Վարչավայի կոնցերտն» ու «Ի՛նչ մեծ ես դու» երգի երաժշտությունը: Այժմ, սակայն այդ գործիքի ձայների ներդաշնակությունը խզվել էր: Դաշնամուր լարողի պարտականությունն էր վստահ լինել, որ յուրաքանչյուր նոտայի ձայն, միանալով մյուսներին, կստեղծեր հաճելի ներդաշնակություն:

Եկեղեցում մենք հանդիպում ենք սխալ հնչող նոտաների: Երբ մարդիկ իրար են միանում իրենց տարբեր ընդունակություններով ու ձայնային տվյալներով, կարող են անհաճո մթնոլորտ ստեղծել: Գաղատացիներին ուղղված նամակում Պողոսը հավատացյալներին աղերսում է հրաժարվել «երկպառակությունից, հակառակությունից, մրցակցությունից, նախանձից», որոնք քանդում են Աստծո և ուրիշների հարաբերությունը: Եվ շարունակում է քաջալերել մեզ, որ Հոգու պտուղներ տանք «Հոգու պտուղն է՝ սեր, ուրախություն, խաղաղություն, համբերատարություն, քաղցրություն, բարություն, հավատարմություն, հեղություն, ժուժկայություն: Այսպիսիների դեմ օրենք չկա» (Հմ.20, 22-23):

Աստծո օգնությամբ մեզանից յուրաքանչյուրը կարող է աճել շնորհքի ու միաբանության մեջ, երբ մեր սրտերը ներդաշնակ ենք իր հետ:

Աղոթք - Շնորհքի Աստված, սովորեցրու՛, թե ինչպես կարելի է Յոգու առաջնորդությամբ «ներդաշնակվել» և ներդաշնակ ապրել ուրիշների հետ: Ամեն:

Նույնիսկ ոչ ներդաշնակ վիճակներում Յոգու միջոցով կարելի է հասնել ներդաշնակության:

Կարդա՛
Գաղ. 5.16-20

Եթե Յոգով ենք ապրում, Յոգով վարվենք: Գաղ. 5.25

Մի պատմություն պատմի՛ր

«Ժամանակին կար, չկար», «Լինում է, չի լինում» այսպիսի գորավոր բառեր բոլորս ենք լսել մեր մանկություն տարիներին: Մի օր մայրս տուն եկավ՝ ձեռքին «Իմ բարի հովիվ Աստվածաշնչի պատմություն» խորագրով պատկերազարդ գիրքը: Ու դրանից հետո ամեն օր երեկոյան ես ու եղբայրս նստում ու անհամբերությամբ սպասում էինք, թե երբ է մայրս ընթերցելու հին օրերի հետաքրքիր մարդկանց ու իրենց սիրող Աստծո պատմությունները: Դրանք դարձել այն ոսպնյակը, որով մենք այսօր նայում ենք աշխարհին:

Կարդա՛ր
 Դուկաս 3. 23

Նրանց հետ առանց
 առակի չէր խոսում:
 Մարկ. 4.34

Անվիճելի է, որ մեծագույն պատմություն պատմողը Հիսուս Նազովրեցին է: Նա գիտեր, որ մենք պատմության հանդեպ բնածին սեր ունենք մեր մեջ: Իր բարի լուրը մարդկանց տալու համար Նա հաճախ էր գործածում այդ միջոցը: Եվ ասում էր. «Ժամանակին մի մարդ հողի մեջ սերմ գցեց» (Մարկ. 4.26): «Մանանեխի մի հատիկ կար» (31) և այլն: Մարկոսի Ավետարանը հստակ մատնանշում է, որ Հիսուսը պատմություններն օգտագործել է որպես մարդկանց հետ հաղորդակցվելու միջոց (34), որպեսզի նրանք ավելի հըստակ կարողանան տեսնել աշխարհը և ավելի լավ հասկանան իրենց սիրող Աստծուն:

Պատմություն պատմելը իմաստություն է, եթե ուզում ենք Աստծո բարի լուրը բաժանել ուրիշներին:

Աղոթք - Տե՛ր, Դու ես սքանչելի խորհրդակիցը և հզոր ու մեծ Աստվածը: Տու՛ր մեզ ստեղծագործ միտք, որպեսզի կարողանանք Քո սերը բաժանել աշխարհին: Ամեն:

**Այսօր փորձի՛ր մեկնումեկին որևէ պատմություն պատմել՝
 ցույց տալու Աստծո շնորհքն ու ողորմությունը:**

Ի՞նչ կա անվան մեջ

Մեր որդին՝ Քոֆին, ծնվեց ուրբաթ օրը , որը հենց իր անվան իմաստն է՝ ուրբաթ օրը ծնված: Նրան այդպես կոչեցինք ի պատիվ մեր հոգևոր հովվի, միակ որդու, որը մահացել էր: Նա միշտ աղոթում է մեր որդու համար, և դա մեզ համար մեծ պատիվ է:

Դյուրին է անտեսել անվան նշանակությունը, եթե չզիտես դրա հտեում թաքնված պատմությունը: Ղուկաս 3-ի՝ Հովսեփի ազգատոհմում հետաքրքիր մանրամասնություններ գտնում մի անվան մասին: Ծագումնաբանությունը Հովսեփի սերունդը հասցնում է մինչև Ադամ ու նույնիսկ Աստված (Հմ.38): 31-րդ համարում կարդում ենք. «Նաթանի որդին, Դավթի որդին»: Ո՞վ է այդ Նաթանը: Ա. Մնացորդաց 3. 5-ից իմանում ենք, որ Նաթանը Բեթսաբեից է ծնվել:

Կարդա՛ Ղուկ. 3. 31
Ա Մնաց. 3. 4-9

Ինչպես կարծվում էր, որդին էր Յովսեփի: Ղուկ. 3.23

Ձուգադիպությունն է, որ Դավիթը Բեթսաբեի ծնած որդուն Նաթան կոչեց: Հիշենք պատմությունը: Բեթսաբեն Դավթի կինը չէր: Մեկ այլ Նաթան, որը մարգարե էր, քաջաբար առճակատեց թագավորին, որը չարաշահել էր իր հեղինակությունը՝ Բեթսաբեին շահագործելով ու նրա ամուսնուն սպանելով (տե՛ս Գ. Թագ. 12): Դավիթն ընդունեց մարգարեի սաստիկ կշտամբանքը և ապաշխարեց իր սարսափելի մեղքը: Ժամանակ հետո նա իր որդուն կոչեց Նաթան: Որքա՛ն պատշաճ էր, որ նա Բեթսաբեի որդին էր և նա՛ պիտի դառնար Հովսեփի նախնիներից, Հիսուսի երկրային հայրերից մեկը (Ղուկ. 2.23):

Մենք շարունակ Աստվածաշնչում գտնում ենք Աստծո շնորհքը ամեն բանի, նույնիսկ անպարկեշտ անվան հետ հյուսված: Ասել է, թե Աստծո շնորհքն ամենուր է:

Աղոթք - Յայր, օգնի՛ր, որ ուր նայենք, Քո շնորհքը գտնենք: Ամեն:

Կարելի է ամեն տեղ ու ամեն բանի մեջ տեսնել Աստծո շնորհքը, նույնիսկ անսպասելի տեղերում ու անուսմերում:

Խաղաղության պարզևր

Միացյալ Նահանգների նախկին նախագահ Ջորջ Բուշի կինը՝ Բարբարա Բուշը, մահից առաջ որդուն ասաց. «Հավատում եմ Հիսուսին, Նա իմ Փրկիչն է, ու ես չեմ վախենում մահից»: Այս հայտարարությունը հզոր ու հաստատ հավատքի իսկական օրինակ է: Հիսուսին ճանաչելու շնորհիվ նույնիսկ մահվան մահճում նա ստացավ Աստծո խաղաղության պարզևր: Առաջին դարում երուսաղեմում ապրող մի մարդ՝ Միմեոն անունով, նույնպես Հիսուսի շնորհիվ ունեցավ խաղաղության խոր փորճառություն: Սուրբ Հոգուց մղված՝ նա գնաց տաճար, երբ Մարիամն ու Հովսեփը Հիսուս մանկանը բերեցին տաճար, որպեսզի, օրենքի համաճայն, թլպատեն: Շատ բան չգիտենք Միմեոնի մասին, բայց Ղուկասի նկարագրությունից կարելի է եզրակացնել, որ նա Աստծո մարզն է՝ արդար, նվիրյալ, հավատարմորեն Փրկչի գալստյանն սպասող «եվ Սուրբ Հոգի կար նրա վրա» (Ղուկ. 2.25): Սուրբ Հոգին նրան պատգամ էր հայտնել, որ մահ չի տեսնելու, մինչև որ Տիրոջ Օճյալին չտեսնի: Երբ նա գրկեց մանուկ Հիսուսին, Աստծուն օրհնեց ու ասաց. «Հիմա, ո՛վ Տեր, քո խոստման համաճայն խաղաղությամբ արճակում ես քո ծառային: Որովհետև իմ աչքերը տեսան քո փրկությունը, որ պատրաստեցիր բոլոր ժողովուրդների առաջ» (Հմ.29-31): Նա խաղաղվեց, որովհետև ամբողջ աշխարհի ապագայի հույսը կանխատեսեց: Երբ տոնում ենք Հիսուսի կյանքը, մահն ու հարությունը և սպասում Փրկչի խոստացյալ գալստյանը, ցնճանք Աստծո խաղաղության համար:

Կարդա՛ր Ղուկաս 2. 25-35

Հիմա, ո՛վ Տեր, քո խոստման համաճայն խաղաղությամբ արճակում ես քո ծառային: Որովհետև իմ աչքերը տեսան քո փրկությունը:
Ղուկ. 2.29-30

Աղոթք - Սիրելի՛ Հայր, շնորհակալ եմ Հիսուսի՝ խաղաղության Քո պարզևրի համար: Ամեն:

Եթե ուզում ես խաղաղության պարզևն ունենալ, նայի՛ր Տեր Հիսուսին՝ մեր Փրկչին ու մեր Բարեխոսին:

Ո՞ր եմ տանում մեր ընտրությունները

Առանց քարտեզի ու բլջային հեռախոսի՝ մենք միայն մեր մտքում ունենինք այն քարտեզը, որ տեսել էինք տեղեկատվական կենտրոնում: Մեկ ժամից ավելի թափառելուց հետո վերջապես կարողացանք անտառից դուրս գալ, որովհետև շեղվել էինք մեր արշավի երթուղուց:

Կյանքում էլ կարող է այդպես պատահել: Մենք ոչ թե պետք է հարցնենք՝ այս բանը ճի՞շտ է, կամ սխալ, այլ թե ո՞ր է տանում այն մեզ: Սաղմոս 1-ը համեմատում է երկու կենսակերպի մարդկանց. արդարներ, որոնք Աստվածասեր են և ամբարիշտներ, որոնք առաջինների թշնամիներն են: Արդարները ծառերի նման

ծաղկում են, իսկ ամբարիշտները հողմափոշու նման հոսում են երկրի երեսին (Հմ. 3-4): Այս սաղմոսը բացահայտում է, թե որն է իրական ճշմարտությունը: Մարդը, որ Աստծո օրենքներով է շարժվում կյանքի ու նորոգությունից համար է ապրում: Սաղմոս 1-ը նաև խնդրում է հեռու մնալ կործանարար հարաբերություններից, վատ սովորություններից և ուրախանալ Աստծո տված պատվիրաններով (Հմ.2): Ի վերջո մեր ծաղկումը կախված է Աստծո ուշադրությունից, «Տերը գիտե արդարների ճանապարհները» (Հմ.6):

Ճանապարհը հանձնի՛ր Աստծուն, թող Նա ճշտի քո ուղին և արտոնի, որ Աստծո խոսքը դառնա այն գետը, որը կանուցի քո սրտի արմատների ցանցը:

Աղոթք - Սիրելի՛ Տեր, տու՛ր շնորհք, որ կարողանամ ետ դառնալ կորստաբեր ուղուց: Առաջնորդի՛ր ինձ դեպի Քո ներկայության հորդահոս գետը և սնուցիր ինձ Քո խոսքով: Կյանքս դարձրու հավատարիմ ու պտղատու՝ Քո փառքի համար: Ամեն:

Միշտ էլ ընտրության առջև եմք լինելու: Կարևորը ծիշտն ու բարին ընտրելն է:

Կարդա՛ր
Սաղմոս 1

Տերը գիտե
արդարների
ճանապարհները:
Սաղմ . 1.6

Ժպտացող Հիսուսը

Բրյուս Մարչիանոն 1993-ին ստանձնեց Հիսուսի դերը և սկսեց լրջորեն մտածել, թե ինչպես է մոտենալու այդ կերպարին: Գիտակցում էր, որ դա մեծ պատասխանատվություն է, որովհետև միլիոնավոր կինոդիտողներ Հիսուսի մասին պատկերացում են կազմելու իր կերտած կերպարով: Հետևաբար պետք էր հնարավորինս ճիշտ ներկայացնել Քրիստոսին: Նա ծունկի իջավ և աղոթեց Հիսուսին, որ ինքը լավ «Հիսուս» լինի:

Բրյուսը ներշնչվել էր Եբրայեցիների գրքի առաջին գլխով, որտեղ հեղինակն ասում է, թե ինչպես Հայր Աստվածը առանձնացրեց Իր Որդուն՝ «Նրան օծելով ուրախության յուզով» (1.9): Հոր հետ կապված լինելու ուրախությունը միշտ կար Հիսուսի սրտում: Ինչպես եբրայեցիներին ուղղված նամակի 12. 2-ն է նկարագրում. «Իր առջև դրված ուրախության փոխարեն խաչը հանձն առավ և ամոթն արհամարհելով՝ Աստծու աթոռի աջ կողմը նստեց»:

Սուրբգրային այս արտահայտություններից ներշնչված՝ Բրյուսը ներկայացրեց Փրկչի՝ ուրախությամբ լի յուրահատուկ կերպարը: Արդյունքում ստացվեց «Ժպտացող Հիսուս»: Մենք էլ կարող ենք ծունկի իջնել ու «Հիսուսին պաղատել Հիսուսի համար»: Թող Ի՛նքը մեզ լցնի Իր նկարագրով ու մեր շուրջը գտնվող մարդիկ մեր մեջ տեսնեն Նրա սիրո արտահայտությունը:

Աղոթք - Սիրելի՛ Տեր, Քեզ թախանձում եմք Քեզ համար: Թող ուրիշները մեր մեջ տեսնեն Քո սիրտը և մենք մեր բոլոր արածների ու ասածների մեջ վառ գույներով արտացոլենք Քո ուրախությունը: Ամեն:

Կարդա՛
Եբրայեցիներ 1.8-12
 Քո Աստվածը քեզ ուրախության յուզով օծեց ավելի, քան քո ընկերներին:
 Եբր. 1.9

**Թող մարդիկ մեր դեմքի վրա տեսնեն մեր Տիրոջ՝
 Հիսուսի քաղցր ժպիտը:**

Դաշույն հրեշտակը

Երբ Միացյալ Թագավորությունում դաշույնով ոճիր կատարվեց, Բրիտանիայի երկաթե իրերի կենտրոնը հանդես եկավ մի մտահղացմամբ: Գործակցելով տեղի ոստիկանության հետ՝ պատրաստեց ու երկրում տեղադրեց 200 երկաթե արկղեր և հայտարարեց, որ կներվեն բոլոր նրանք, ովքեր կամավոր կհանձնեն իրենց դաշույնները: Այդ արկղերը լցվեցին հարյուր հազարավոր դանակներով, սրերով ու դաշույններով, որոնք ուղարկվեցին արվեստագետ Ալֆ Բրեդլիին: Վերջինը բթացրեց դրանք, ապա մակագրեց դաշունահարված ու զոհված երիտասարդների անունները, ինչպես նաև անցյալի ոճրագործությունների զղջումի խոսքեր: Հետո այդ բոլոր սառը զենքերը իրար միացնելով՝ ստեղծեց 27 ոտք բարձրությամբ, շողացող մետաղյա թևերով մի կոթող՝ «Դաշույն հրեշտակը» անունով: Կանգնած այդ կոթողի մոտ մտածում էի, որ հազարավոր հանցանքներ ու արյունահեղություններ են կանխվել այս ստեղծագործության շնորհիվ: Նաև մտածեցի Եսայի մարգարեի «Նոր երկիրք ու Նոր երկիր» տեսիլքի մասին (Ես. 65. 17): «Այնտեղ չի լինելու մանկահասակ և կամ ծեր, որ լցրած չլինի իր կյանքի ժամանակը» (Հմ.20), դաշույնի հանցանքներ չեն լինելու, որովհետև բոլոր դաշույնները վերափոխվելու են ավելի գեղեցիկ նպատակի ծառայելու գործիքների (2.4):

Կարդա՛
 Եսայի 2. 1-4

Ազգ ազգի վրա սուր չպիտի բարձրացնի, և նրանք այլևս չեն սովորելու պատերազմել: Ես. 2.4

Նոր երկիրը դեռ իրականություն չէ, սակայն մենք ազդեցելու և ծառայելու ենք՝ մինչև որ դառնա (Մատթ. 6.10)

Աղոթք - Տե՛ր Հիսուս, չենք կարող սպասել, մինչև որ աշխարհը խաղաղ լինի Քո իշխանության ներքո: Քո Հոգու միջոցով մեզ ուղղորդի՛ր, որ տեսնենք Քո թագավորության գալուստը մեր մեջ: Ամեն:

Չարը միշտ էլ կհարձակվի մեզ վրա: Հարկավոր է ամեն գնով պայքարել նրա դեմ:

Արցունքների տա՛ր Աստծուն

Անցյալ ամառ թեյլքուա տեսակի կետածուկը ձագ ունեցավ: Այս ձկները բնության մեջ վտանգված են, և նոր ծնունդը նաև նոր հույս դարձավ: Սակայն այդ հույսը ընդամենը մեկ ժամի կյանք էլ չունեցավ: Աշխարհով մեկ ցուցադրվեց այն տեսարանը, երբ մայր կետածուկը տասնյոթ օր շարունակ Խաղաղ օվկիանոսի ջրերում օրորում էր իր մեռած ձագին:

Երբեմն Հիսուսին հավատացողներն էլ ցավի ու վշտի մեջ չգիտեն՝ ինչ անել: Գուցե վախենում են, որ վշտի իրենց արտահայտումը դիտվի որպես հուսահատություն: Սակայն Աստվածաշունչը Աստված կանչող մարդկանց շատ օրինակներ է տալիս: Ողբն ու հույսը կարող են դառնալ հավատքով տրված կոչի պատասխան:

Երեմիայի ողբի մեջ կա 5 ոտանավոր, որոնք նկարագրում են իրենց տունը կորցրած մարդկանց ցավը: Թշնամիները հալածել են նրանց, հասցրել մահվան դուռը (Յ. 52-54) և նրանք ողբում ու Աստված են կանչում, որպեսզի արդարություն բերի (Հմ. 64): Աստծուն են դիմում ոչ թե նրա համար, որ կորցրել են իրենց հույսը, այլ որովհետև հավատում են, որ Աստված լսում է իրենց: Ու երբ կանչեն նրան, նա կմոտենա (Հմ. 57):

Մխալ չէ մեր կյանքում ունեցած կորուստների համար ողբալը: Աստված միշտ հետևում է, և դու կարող ես վստահ լինել, որ Աստված երկնքից միշտ կնայի ու կտեսնի քեզ:

Աղոթք - Սիրո՛ղ Աստված, օգնի՛ր մեզ՝ հիշել, որ սխալների համար ողբալը ճիշտ է, որպեսզի հնարավոր լինի փոփոխություն առաջացնել: Ամեն:

Ցավեր ու կորուստներ կուցենանք, սակայն կարելի է մեր ողբը Աստծուն հասցնել:

Կարդա՛

Ողբ Երեմիա 3. 49-66

Իմ աչքերը լցվեցին արցունքով, բայց ես չեմ լռի և ականջ չեմ դնի, մինչև որ երկնքից չհայտնվի և չտեսնի Տերը:
Ողբ Եր. 3.49-50

Լույսի պահակները

Միացյալ Նահանգների Հյուսիսային Կարոլինայի ծովեզերքին՝ Հաթերաս կղզու փարոսի մոտ մի հուշակոթող է կանգնեցված 1803-ից ի վեր այդ փարոսի լույսը վառ պահողների հիշատակին: Երբ անհրաժեշտություն առաջացավ այդ կառույցը ծովից մի փոքր տեղափոխել, լույսը պահպանողների անունները փորագրեցին հին հիմնաքարերի վրա ու դրանք ամֆիթատրոնի ձևով շարեցին հուշակոթողի նոր տեղում: Ինչպես այնտեղ դրված ցուցանակն է հուշում, այդպիսով այսօրվա այցելուները հետևում են այդ մարդկանց պատմական հետքերին և միաժամանակ «դիտում» փարոսը: Հիսու՛սն է գերազույն լույս տվողը: Նա ասում է. «Ես եմ աշխարհի լույսը. ով իմ հետևից գա, նա խավարի մեջ չի գնա, այլ կյանքի լույսը կրնա գտնի» (Հովհ. 8.12): Սա ամենախիզախ ու հիմնական հայտարարությունն է: Հիսուսն այն ասաց երկնավոր Աստծո հետ իր ունեցած հարաբերությունը հաստատելու համար: Երբ Հիսուսին ենք նայում փրկության համար և հետևում ենք իր ուսուցումներին, մենք նորոգում ենք Աստծո հետ մեր ունեցած հարաբերությունը, որը մեզ նոր ուժ ու նպատակ է պարգևում: Նրա փոխակերպվող կյանքն ու սերն է «մարդկանց լույսը» (Հովհ. 1.4), որը մեր մեջ ու մեր միջոցով փայլում է դեպի դրսի խավար ու երբեմն էլ վտանգավոր աշխարհ: Որպես Հիսուսի հետևորդներ՝ մենք դառնում ենք «լույս պահպանողներ»: Թող որ ուրիշները տեսնեն մեզնից արտացոլվող լույսը և գտնեն կյանքն ու հույսը, որ միայն Ինքը կարող է պարգևել:

Կարդա՛ր
Դովհ. 8. 12-16
 Աստված, որ ասաց, թե խավարից լույս ծագի...
 Բ Կորնթ. 4.6

Աղոթք - Տե՛ր Դիսուս, փառավորում եմ Քեզ՝ Քո լույսի ու սիրո համար: Օգնիր, որ կարողանամ փայլել Քեզ համար: Ամեն:

Դիսուսն է աշխարհի լույսը, ու մենք հրավիրված ենք Նրա լույսը արտացոլելու այս խավար աշխարհում:

Խոսող սեղաններ

Մարդեկային բարեկեցության մեծագույն սպառնալիքներից է մենակությունը, որն ազդում է մեր առողջության, հասարակական կյանքում մեր վարվելակերպի, սննդի սպառման և շատ այլ հարցերի վրա: Ուսումնասիրությունները ցույց են տվել, որ մարդկանց մոտավորապես երկու երրորդը, անկախ սեռից ու տարիքից, իրենց մենակ են զգում: Անգլիական պարենային մի ընկերություն իր ցանցի խանութների սրճարաններում ստեղծել է «խոսող սեղաններ», որպեսզի կապ ստեղծի մարդկանց միջև: Մարդկանց հետ շփվելու ցանկություն ունեցողները նստում են այդ սեղանների մոտ՝ միմյանց ուրիշներին, կամ ցույց տալով, որ կամենում են այլոց ընկերակցությունը: Այդպիսով մարդիկ հաղորդակցվում են:

Կարդա՛

Գործք 2. 42-47

Ամեն օր միաբանությանը տաճարում էին լինում: Գործք 2.46

Առաջին եկեղեցու անդամները միտում ունեին հաղորդակցվելու իրենց շրջապատողների հետ, որովհետև առանց դրա նրանք մենակ էին զգալու իրենց հավատքն արտահայտելիս, որը դեռ նորություն էր աշխարհում: Նրանք ոչ թե միայն «հետևում էին առաքյալների ուսմունքին»՝ սովորելու համար, թե ինչ է նշանակում Հիսուսին հետևելը, այլև «ամեն օր միաբանություն մտադրում էին լինում և տներում հաց էին կտրում»՝ միմյանց քաջալերելու և հաղորդակցվելու համար (Գործք. 2.42, 46): Մենք մարդեկային հարաբերությունների կարիք ունենք, Աստված մեզ այդպես է ստեղծել: Առաջին դարի եկեղեցու անդամների նման մեզ համար ևս կարևոր է ստեղծել մարդեկային ընկերակցություն՝ հանուն մեր բարեկեցության և այն առաջարկել մեր շուրջը եղողներին:

Աղոթք - Սիրելի՛ Հայր, օգնի՛ր մեզ, որ կարողանանք մեր և այլոց բարիքի համար կապեր փնտրել: Ամեն:

Ուրիշների հետ կապ ստեղծելու և բարեկամություն սկսելու համար հարկավոր է զորացնել մեր կապերը:

ՅԻՉԵՂ

Հիշատակի օրը սկզբում հիշում եմ բանակում ծառայողներին, հատկապես հորս ու հորեղբայրներին, որոնք ծառայել են Երկրորդ համաշխարհային պատերազմի ժամանակ: Չնայած նրանք ողջ- առողջ վերադարձել են, բայց այդ պատերազմում հարյուր հազարավոր ընտանիքներ կորցրին իրենց սիրելիներին: Այդ օրերի բոլոր բանակայիններն ասում են, որ պատրաստ էին իրենց կյանքը տալու հանուն իրենց սիրելիների և հաստատ մնալու այն գաղափարներին, որոնց հավատում էին: Երբ մեկը մեռնում է իր երկիրը պաշտպանելու նպատակով, հուղարկավորություն ժամանակ նրան պատվելու համար առհասարակ ասվում է Հովհ. 15.13-ը. «Ոչ ոք ավելի մեծ սեր չունի նրանից, քան այս, եթե մեկն իր կյանքն է տալիս իր բարեկամների համար»: Իսկ ի՞նչ է գալիս դրանից հետո:

Կարդա՛ր
Յովհ. 15. 9-17

Ոչ ոք ավելի մեծ սեր չունի նրանից, քան այս, եթե մեկն իր կյանքն է տալիս իր բարեկամների համար: Յովհ. 15.13

Երբ Հիսուս վերջին ընթրիքի ժամանակ այդ խոսքն ասաց, իր մահը մոտ էր: Աշակերտներից մեկը՝ Հուդան, գնացել էր նրան մատնելու (13.18-30): Հիսուսն, այդ ամենը իմանալով հանդերձ, որոշեց զոհել կյանքը իր բարեկամների ու թշնամիների համար: Նա պատրաստ էր մեռնել նրանց համար, ովքեր մի օր պիտի հավատային իրեն և նույնիսկ իր թշնամիների համար (Հռոմ. 5.10): Իր զոհաբերությունից փոխարեն նա աշակերտներին խնդրում է, որ «սիրեն իրար», ինչպես ինքն էր սիրում (Հովհ.15.12): Իր մեծ սերը պարտադրում է մեզ, որ անձնուրաց սիրով սիրենք իրար՝ առանց տարբերակելու բարեկամ ու թշնամի:

Աղոթք - Տե՛ր Հիսուս, որքա՛ն երախտապարտ եմք Քեզ, որ պատրաստ եղար մեզ համար մեռնելու: Ամեն:

Յիսուսը մեռավ մեզ համար, երբ մենք տակավին իր թշնամիներն էինք: Ուստի հիշենք իրեն ու հանուն մեզ իր կատարած զոհողությունը:

Մեղրից անուշ

Թեև թեման «Ազգային լարվածությունն» էր, բայց բանախոսի ելույթը հանդարտ ու լուռ էր: Ունկնդիրների մեծ բանակի առաջ կանգնած նա խոսեց համարձակ, բայց նաև թեթև, ազնիվ ու նույնիսկ մի փոքր հումորով: Շուտով լարված մթնոլորտը հանդարտվեց, ունկնդիրները դասախոսի հետ սկսեցին նույնիսկ կատակի տալ իրենց կասկածներն ու միասին որոնել խնդիրների լուծման ուղիներ: Ահա թե ինչպես կարելի է դառը նյութը քաղցր ձևով ներկայացնել: Սողոմոն թագավորը այս նույն մտեցումն է ցուցաբերում, երբ ասում է. «Բարի խոսքը մեղրի խորիսխ է, և հոգու բժշկություն է նրա քաղցրությունը» (Առ. 16. 24): Այս ձևով «Իմաստունի սիրտը գիտե իր բերանի խոսքը, և նա իր շուրթերով իրավադատություն է խորհում» (Հմ. 23): Ինչու՞ պետք է Սողոմոնի նման հզոր թագավորը ժամանակ տրամադրեր խոսելու ձևին: Որովհետև խոսքը վճռորոշ ուժ ունի: Սողոմոնի ժամանակներում թագավորները իրենց ժողովրդի մասին տեղեկություն ստանալու համար ունեին վատահելի պատգամաբերներ: Իսկ այդ գործում մեծապես գնահատված էին հանդարտ ու ծանրակշիռ խոսք ունեցողները, որոնք օգտագործում էին իմաստուն բառեր, ունեին տրամաբանված լեզու, բոլոր պարագաներում թեման կարողանում էին տեղ հասցնել հանգիստ ու անխռով:

Մենք էլ կարող ենք օգտվել դրանից, երբ մեր կարծիքն ու խորհուրդները աստվածային շնորհքով արտահայտենք: Սողոմոնի բառերով՝ «Ինչ որ մարդ դրել է սրտում՝ վերաբերում է իրեն, բայց Տիրոջից է նրա լեզվի պատասխանը» (Հմ.1):

Աղոթք - Մեր Սուրբ Աստված, փափկացրո՛ւ մեր սրտերը և լցրո՛ւ՛ բո քաղցր Յոգով, երբ դժվար նյութերի մասին ենք խոսում: Ամեն:

Մեր կյանքում առիթներ կլինեն թե՛ ու տարակարծություն առաջացնող թեմաներից խոսելու: Այդ պահերին արտոնենք Սուրբ Յոգուն, որ մեր սրտերը քաղցրացնի:

Կարդա՛

Առակ. 16.1-2, 21-24

Բարի խոսքը մեղրի խորիսխ է, և հոգու բժշկություն է նրա քաղցրությունը: Առ. 16.24

Ինչու՞ ես

Հավանականություն զրքի համաձայն՝ միլիոնից մեկը կայծակնահար է լինում, 25 հազարից մեկին կոտորված սրտի համախտանիշ է սպառնում: Այսպես բազում հավանականություններին մասին կարդալիս մտածում ես. «Իսկ եթե ե՞ս եմ այդ մեկը»:

Հոբի պատմությունը ժխտումն է այդ հավանականությունների: Աստված նրա մասին ասաց. «Նրա նման անարատ, ճշմարտախոս, աստվածապաշտ, ամեն տեսակի չար գործերից հեռու մնացող մարդ չկա երկրի վրա» (Հոբ. 1.8): Հոբն եղավ այն մարդը, որը կորուստների մի ամբողջ շարք ունեցավ՝ հակառակ ամեն տեսակի հավանականության: Թերևս աշխարհում ապրող մարդկանցից ամենաշատը նա կարող էր հարցնել. «Ինչու՞ ես»:

Հոբի պատմությունը հնարավորություն է տալիս որպես պատասխան ընկալել ցավի ու չարի անբացատրելի խորհուրդը: Նկարագրելով տառապանքը և Աստծո բարությունը և ողորմության լավագույն օրինակների շփոթը (գլ. 25) մեզ տրվում է անսխալ ցանելու և քաղելու մեկ այլ կարելիություն (4. 7-8): Մեզ տալով սատանայական քավության հետադարձ մի պատմություն (գլ.1) և Աստծո եզրափակիչ խոսքը (42. 7-17), թե մի օր արտոնելու է Իր Որդուն, որ կրի մեր մեղքերը, Հոբի պատմությունը մեզ համար դառնում է ոչ թե երևույթով, այլ հավատքով ապրելու պատճառ:

Կարդա՛ր
Հոբ 7. 12-21

Ինչու՞ ես ինձ դարձրել քեզ ոսոխ, որ լինեմ քեզ համար ես մի բեռ: Հոբ 7. 20

Աղոթք - Կյանք ու ստեղծագործություն տվող Աստված մեր Տեր Հիսուսի Հայր, խնդրում ենք՝ օգնի՛ր մեզ, որ մեր աչքից ու սրտից ավելի Քե՛զ վստահենք: Ամեն:

Աստված երբեմն թույլ է տալիս, որ մենք ցավ ու տառապանք կրենք, բայց և միաժամանակ Հոբի օրինակով մեզ հույս է ներշնչում:

Լավ չափանիշ

Գազալցակայանում Մթեյսը հանդիպեց մի կնոջ, որն իր բանկային քարտը տանն էր մոռացել, և նորածին երեխան գրկին՝ շփոթված չգիտեր ինչ անել: Չնայած Մթեյսն այդ օրերին անգործ էր, սակայն 15 դոլարի գազ լցրեց անծանոթ կնոջ մեքենայի մեջ: Օրեր անց տուն գալով՝ նա խաղալիքներով և այլ նվերներով լի մի զամբյուղ տեսավ դռան մոտ: Անծանոթի բարեկամները, որպես Մթեյսի ազնվություն փոխհատուցում, 15 դոլարը վերածել էին նրա ընտանիքի համար հիշարժան տոնի:

Կարդա՛ր
Ղուկաս 6. 32-38

Տվե՛ք, և կտրվի ձեզ
Ղուկ. 6.38

Սիրտ ջերմացնող այս պատմությունը լավ օրինակ է Հիսուսի ասածի. «Տվե՛ք, և կտրվի ձեզ. լա՛վ չափով, թափ տրված-չարժված, լեփ-լեցուն կտան ձեր գիրկը, որովհետև ինչ չափով որ չափեք, նույնով էլ ձեզ կչափվի» (Ղուկ. 6.38):

Այսինքն՝ փորձություն է մտածել, թե ի՞նչ ենք ստանում՝ ուրիշին տալով: Որովհետև դրանով Հիսուսի պատվերն ենք անտեսում: Հիսուսն իր այդ խոսքից առաջ ասել էր. «Միբեցե՛ք ձեր թշնամիներին, բարի՛ք գործեցեք և ոչինչ չակնկալելո՛վ փոխ տվեք, ու ձեր վարձը շատ կլինի և Բարձրալի որդիներ կլինեք, որովհետև նա գթառատ է ապերախտների ու չարերի նկատմամբ» (Հմ.35):

Մենք չենք տալիս ստանալու համար: Տալիս ենք, որովհետև Աստված հրճվում է մեր տալով: Ուրիշների հանդեպ մեր սերը արտացոլում է Աստծո սիրող սիրտը մեր հանդեպ:

Աղոթք - Շնորհքի աստված, օգնի՛ր, որ առատորեն տամ ուրիշներին, որովհետև Դու շատ ողորմած ու գթառատ ես եղել: Ամեն:

Աստված առատորեն տալիս է մեզ:
Մենք պատրա՞ստ ենք ուրիշներին տալ:

Լուսնի ստեղծողը

Տիեզերագնացները «Արծիվ»-ով հաջող վայրէջք կատարեցին Լուսնի՝ Հանդարտություն ծովի վրա և Նիլ Արմսթրոնգն ասաց. «Սա մի փոքր քայլ է մարդու, բայց հսկայական ուսյուն է մարդկության համար»: Արմսթրոնգն առաջին մարդն էր, որ ոտք դրեց Լուսնի վրա: Հետո նրան հետևողներ եղան, որոնցից մեկն էլ «Ապոլոն» տիեզերանավի հրամանատար Ջին Քարնընն էր, որն ասել է. «Ահա ես այստեղ եմ, դու՝ այնտեղ: Զգողական ու հիանալի երկիր: Ես զգացի, թե որքան գեղեցիկ էս դու, և անհնար է, որ պատահական լինի քո գոյությունը: Պետք է որ քեզնից ու ինձնից ավելի մեծ մեկը լինի»: Այս մարդիկ հասկացել էին վիթխարի տիեզերքի համեմատ իրենց փոքր լինելը: Երեմիա մարգարեն նույնպես նկատի ուներ Աստծո մեծությունը՝ որպես Արարիչ և երկրի Պահպանիչ: Ամենաստեղծ Աստվածը խոստացավ իր մասին հայտնել՝ մտերմաբար տալով իր սերը, ներումն ու հույսը (Եր. 31. 33-34): Երեմիան հաստատում է Աստծո մեծությունը՝ որպես մեկը, որ « արևը հաստատեց ցերեկվա լուսավորության, իսկ լուսինն ու աստղերը՝ գիշերվա լուսավորության համար» (Հմ.35): «Եթե իմ աչքի առաջ այս օրենքները դադարեն գործելուց, ապա Իսրայելի ազգն էլ, - ասում է Տերը, - իմ աչքի առաջ ընդամիշտ պիտի դադարի ազգ լինելուց: Եթե անգամ երկինքը դեպի վեր բարձրանա, իսկ երկրի հատակները դեպի վար խոնարհվեն, ես դարձյալ չեմ անտեսի համայն Իսրայելի ազգին այն ամենի համար, որ նա կատարեց» (Հմ.36-37): Մենք բնավ չենք կարողանա ամբողջովին ըմբռնել երկնքի ու երկրի խոր հիմքերի անչափելի մեծությունը: Սակայն կարող ենք հիանալ տիեզերքի բարդությամբ և վստահել լուսինն ու մնացած ամեն բան ստեղծողին:

Կարդա՛ր Երեմիա 31. 33-37

Նրանց համար
Աստված եմ լինելու,
իսկ նրանք ինձ
համար լինելու եմ
ժողովուրդ:
Եր. 31.33

Աղոթք - Ստեղծի՛չ Աստված, շնորհակալ եմք, որ մեզ հրավիրում ես Թեզ ճանաչելու և հասկանալու այսօր և հավիտյան: Ամեն:

Մեր Աստվածը մեծ է ու հզոր: Ստեղծող ու պահող Աստված է: Ուստի արժե՛ նրան վստահել ու ապավինել:

Արա՛ ամեն ինչ

Վերջերս նկարահանված մի կինոնկարում ինքնակոչ «մի իմաստուն», խոսելով այս աշխարհի սարսափի, թոհուբոհի, անտարբերության ու աղքատության մասին, հայտարարում է, որ կյանքը անաստված ու անհեթեթ է: Նման մտածելակերպը անսովոր չէ այժմյան կինոնկարներում, սակայն հետաքրքիր է, թե որն է դրանց նպատակը: Ֆիլմի ավարտին գլխավոր հերոսը հորդորում է ամեն ինչ անել ուրախություն գտնելու համար: Նրա համար այդ «ամեն ինչը» ավանդական բարոյականությունից հրաժարվելն է: Սակայն արդյո՞ք պետք է հաջողվի այդ «արա՛ ամեն ինչ»-ը: Դիմագրավելով իր անձնական հուսահատությունը՝ Ժողովողի գրքի հեղինակը ժամանակին հաճույքի մեջ ուրախություն փնտրելու մի փորձ արեց (Ժող. 2.1, 10), մեծ ծրագրերով (Հմ. 4-6), հարստությամբ (Հմ. 7-9) և փրկսոփայական հետազոտությամբ (Հմ. 12-16): Ու ո՞րն եղավ արդյունքը: «Ամեն ինչ ունայնություն է և հոգու տանջանք» (Հմ. 17): «Նրա բոլոր օրերը խավար են ու սուգ և անցնում են շատ հոգսերի, հիվանդությունների և բարկության մեջ» (5.13-17): Միայն մեկ բան է Ժողովողի հեղինակին ետ բերում հուսահատությունից: Հակառակ կյանքի դժվարություններին՝ մենք գոհացում կարող ենք զգալ, երբ Աստված մասնակցի մեր կյանքին ու գործին: «Քանզի ո՞վ կարող է ուտել և խմել առանց Նրա» (2.25): Հաճախ կարող է կյանքը անիմաստ թվալ, բայց «Հիշի՛ր քո Արարչին» (12.1): Քեզ մի՛ հոգնեցրու հասկանալու համար, թե ինչ է կյանքը, բայց «վախեցի՛ր Աստծուց և պահի՛ր նրա պատվիրանները» (12.13):

Աղոթք - Տե՛ր, Քեզ եմ տալիս կյանքիս, գործերիս և ուրախությանս կենտրոնական տեղը, որովհետև առանց Քեզ ոչինչ իմաստ չի ունենա և ինձ գոհացում չի տա: Ամեն:

Հաճույք մի՛ փնտրիր այն բաների մեջ, որոնք մնայուն չեն:

Հարության հույսով նայի՛ր Աստծո զավակ լինելու

փառավոր ազատությանը:

Կարդա՛
Ժողովող 2. 17-25

Քանզի ո՞վ կարող է ուտել և խմել առանց Նրա: Ժող. 2.25

ԴՅՈՒՐԻՆ ԿԼԻՆԻ

Հայրս ու ես երկու հոգու համար նախատեսված սղոցով ծառերն էինք կտրում: Երիտասարդ ու աշխույժ լինելով՝ ես ամեն անգամ փորձում էի մեծ ուժով մյուս կողմ հրել սղոցը դեպի ինձ քաշելուց հետո: Հայրս ասում էր. «Դյուրին կլինի, եթե թողնես, որ սղոցն իր գործն անի»:

Մտածում եմ փրկիպեցիներին ուղղված նամակում Պողոսի ասածը «Որովհետև Աստված է որ ձեր մեջ ներգործում է» (2.13): Դյուրին կլինի: Թող որ Ինքն անի մեզ փոխելու գործը:

Ք.Ս.Լուիսն ասել է, թե աճելն ավելի լավ է, քան Քրիստոսի ասածները կարգալն ու դրանք կատարելը: Դա բացատրում էր հետևյալ կերպ. «Ճշմարիտ մի անձ... մեզ համար բաներ է անում... աստիճանաբար քեզ դարձնելու ավելի հիմնավորապես... մի նոր փոքր Քրիստոս, մի էակ, որը... կկիսվի իր զորությամբ, ուրախությամբ, գիտությամբ ու հավիտենականությամբ»:

Աստված այս աշխատանքի մեջ է այսօր: Նստի՛ր Հիսուսի ոտքերի մոտ ու լսի՛ր, թե Նա ինչ է ասում: Աղոթի՛ր: «Զեր անձերը Աստծու սիրո մեջ պահեք» (Հուդա 1.21), ամբողջ օրը ինքդ քեզ հիշեցնելով, որ դու Իրենն ես, վստահ եղի՛ր, որ Նա աստիճանաբար կփոխի քեզ: Կհարցնես. «Պետք չէ՞ որ հանուն արդարության քաղցած ու ծարավ մնանք»: Պատկերացրո՛ւ՝ երեխայի, որը փայլող աչքերով փորձում է բարձր դարակին դրված նվերը վերցնել: Ի՞նչ կանի նրա հայրը. տեսնելով մանկան փափազը՝ նա նվերը կիջեցնի ու կտա որդուն:

Աղոթք - Հայր, շնորհակալ եմ, որ սիրտս ու արարքներս փոխում ես, որպեսզի ինձ Հիսուսին նմանեցնես: Խնդրում եմ տու՛ր ինձ խոնարհ միտք ու հոգի՝ Քեզնից սովորելու համար: Ամեն:

Աստված պատրաստ է Քո մեջ գործելու: Թույլ տու՛ր, որ Նա անի իր գործը: Դա է դյուրինը:

Կարդա՛
Փիլիպ. 2. 12-18

Աստված է որ ձեր մեջ ներգործում է. կանենալն էլ, անելն էլ իր հաճությամբ պես:
Փիլիպ. 2.13

Իր առաջնորդության կարիքը

Քեննեթ Բեյլիի համար քեռի Ձեկին ավելին էր, քան սովորական բարեկամը: Նա հռչակավոր աստվածաբան էր և իր վստահելի առաջնորդը վտանգներով լի Սահարա անապատում ճամփորդելիս: Բեյլին ասում է, որ ոչ միայն ինքը, այլև իր հետ եղող խումբը անվերապահորեն հավատում ու վստահում էր Ձեկին: Նրանք չգիտեին՝ ուր են գնում և եթե մոլորվեին, բոլորի կյանքն էր վտանգված լինելու:

Հոգնություն ու սրտի ցավի պահին Դավիթը նայեց՝ մարդկային առաջնորդից այնկողմ՝ իր ծառայած Աստծուց խնդրելով առաջնորդություն : Սաղմոս 60.3-4-ում կարդում ենք. «Երկրի ծայրերից ես քեզ կանչեցի, երբ սիրտս հոգնեց: Ժայռից բարձր պահեցիր ինձ, առաջնորդեցիր ինձ ու եղար իմ հույսը, և թշնամու դեմ հզոր աշտարակ դարձար ինձ համար»: Նա ցանկություն հայտնեց Աստծո ներկայության ապահովությունն զգալ և Նրա առաջնորդության հանգստությունը (Հմ.5):

Աստվածաշունչը հուսահատ և Աստծո առաջնորդության կարիքն ունեցողներին անվանում է «մոլորված ոչխարներ» (Ես. 53.6): Մենակ մնալով՝ մենք անհույս կկորչենք կոտրված աշխարհի անապատում:

Բայց մենք մենակ չենք: Ունենք մի Հովիվ, որը «Դալար վայրերում ինձ բնակեցրեց և հանդարտ ջրերի մոտ ինձ անուցեց: Նա կենդանացրեց ինձ, հանուն իր անվան առաջնորդեց ինձ արդարության ճանապարհներով» (Սաղմ. 22. 3-4): Որտե՞ղ ես և ի՞նչ գործի մեջ ունես Իր առաջնորդության կարիքը : Կանչի՞ր Իրեն: Նա քեզ բնավ մենակ չի թողնի:

Աղոթք - Սիրող Հայր, շնորհակալ եմ, որ Հովիվս ու առաջնորդս ես: Օգնի՛ր, որ կարողանամ Քեզ վստահել և Քո իմաստության մեջ հանգստանալ: Ամեն:

Կորսված ես զգում քեզ: Վստահի՛ր Աստծուն, որ քեզ հովվի նման առաջնորդի:

Կարդա՛
Սաղմոս 60
Երկրի ծայրերից
ես քեզ կանչեցի
Սաղմ. 60.3

ՆԵՐԵՂՈՒ ԽԱՄԱՐ Է ԸՆՏՐՎԱԾ

Պատրիկ Այրլենդը, որպես միջնակարգ դպրոցի աշակերտ, առաջին անգամ զգաց, որ Աստված իրեն ընտրել է կոնկրետ մի բանի համար: Բայց ինչի՞: Հետո, երբ Կոլորադոյի Կոլումբայն բարձրագույն դպրոցում տեղի ունեցած դեպքի հետևանքով 13 հոգի սպանվեցին, 24-ը վիրավորվեցին, որոնցից մեկն էլ ինքն էր, Պատրիկը սկսեց կռահել այդ հարցի պատասխանը: Երկարատև բուժման օրերին նա հասկացավ, որ դառը մտքերից կառչելը ավելի է վիրավորում ու հոգին ծանրացնում: Աստված Պատրիկին ցույց տվեց, որ ներման բանալին այն է, երբ դադարում ես ուրիշների՝ քեզ արածների վրա կենտրոնանալուց և ուշադրություն ես դարձնում այն բաներին, որ Տեր Հիսուսն է անում քեզ համար: Քրիստոսի ասած այն խոսքը, թե «Հա՛յր, ների՛ր նրանց, որովհետև չգիտեն, թե ի՛նչ են անում» (Ղուկ. 23.34) Հիսուսի ներումի մասին Զաքարիա քահանայի մարգարեություն իրականացումն է (Ղուկ. 1.77): Ավելին, Նրա օրինակը Պատրիկի համար դարձավ նպատակ, և պատահած ողբերգությունից 20 տարի անց նա հայտարարեց. «Թերևս ես ընտրված էի ներելու համար»: Մեզանից շատերին չի վիճակվի դիմակայել այնպիսի արհավիրքների, ինչպիսին Կոլումբայնի ոճիրն էր, սակայն բոլորս էլ ինչ-որ սխալներ անում ենք: Մեկը ամուսնուն է դավաճանում, մյուսի որդին է ըմբոստանում: Գործատուն է շահագործում: Մենք ինչպե՞ս պիտի առաջ դնանք: Հետևենք Հիսուսի օրինակին: Մերժումի ու դաժանություն դիմաց Նա ներեց: Նրա ներումի շնորհիվ է, որ մենք փրկություն ենք գտնում, որը ներառում է նաև ուրիշներին ներելը: Թողնենք դառնությունն ու մեր սրտերը բացենք ներելու՛հ համար:

Կարդա՛ր
Ղուկաս 1. 76-79

Հայր, Երի՛ր
Նրանց, որովհետև
չգիտեն, թե ի՛նչ են
անում: Ղուկ. 23.34

Աղոթք - Սիրելի՛ Հայր, ցույց տո՛ւր թե ում ներեմ այսօր: Ամէն:

Բա՛ց սիրող ներելու Խամար, որպեսզի զգաս Հիսուսի մահով եղած փրկության արժեքը, առաջ գնա՛ ու պատրաստ եղիր ուրիշներին ներելու:

Սուրբ հավաք

Բարեկամների մի խմբով շաբաթվա վերջին հավաքվեցինք մի գեղեցիկ լճի ափին: Օրերն անցան ջրային խաղերով ու միասին ճաշելով, բայց անմոռաց էին հատկապես երեկոյան մեր զրույցները: Մուլթն ընկնելուն պես մեր սրտերն ասես բացվում էին անսովոր խորությունքով և մենք սկսում էինք քննարկել ամուսնալուծության հետևանքով մեր երեխաների կրած դժվարությունները: Այդ հավաքների շնորհիվ մենք հասկացանք, որ նման դժվարությունների պարագայում մեզ իրապես կօգնի Տերը և Նրա հանդեպ հավատարմությունը:

Կարդա՛
Ղևտ. 23. 33-36, 39-44
Տիրոջ առաջ յոթ օր
ուրախանաք:
Ղև. 23.40

Պատկերացնում եմ, որ այդ հավաքների նախատիպերը կային դեռ այն ժամանակներում, երբ Աստված Իր ժողովրդին հորդորում էր ամեն տարի տաղավար տոներին հավաքվել: Այդ խնջույքի համար Նա հրեա ժողովրդից պահանջեց զնալ Երուսաղեմ: Այնտեղ հասնելուց հետո Աստված թելադրեց, որ պաշտամունքի համար հավաքվեն մեկտեղ և մոտ մեկ շաբաթ տևողությամբ «ոչ մի առտնին գործ չանեն» (Ղև. 23 .25): Տաղավարների տոնը հռչակեց Աստծո նախատեսություն և հիշատակեց Եգիպտոսը թողնելուց հետո անապատում նրանց անցկացրած ժամանակը (Հմ. 42-43):

Այդ հավաքը ձևավորեց հրեաների՝ որպես Աստծո ժողովրդի ինքնագիտակցությունը և հռչակեց Նրա բարությունը՝ հակառակ նրանց հավաքական և անսահման դժվարություններին: Երբ մենք էլ մեր մտերիմների հետ հավաքվենք ու հիշենք Աստծո նախատեսությունն ու ներկայությունը մեր կյանքում, մենք էլ կգորանանք մեր հավատքի մեջ:

Աղոթք - Սիրելի՛ Հայր, շնորհակալ եմ այն մարդկանց համար, որոնց դրել ես իմ կյանքում: Օգնի՛ր, որ քաջալերենք միմյանց: Ամեն:

Մեկտեղ հավաքվենք Աստծուն պաշտելու և միմյանց քաջալերելու համար: Այդպիսով կամրապնդենք ուրիշների հետ մեր ունեցած կապը:

Հորս զավակը

Երեխաներս, մերթ ընդ մերթ նայելով ինձ ու հորս, զարմացած ասացին. «Հայրի՛կ, շատ նման ես պապիկին, երբ նա երիտասարդ էր»: Ես ու հայրս ժպտացինք, որովհետև գիտեինք, որ իրոք շատ նման ենք: Տարբեր մարդիկ ենք, իհարկե, սակայն ինձ տեսնողը լիովին կարող է պատկերացնել հորս՝ երիտասարդ տարիքում. բարձրահասակ, նիհար, սև մազերով, մեծ քթով ու մեծ ականջներով: Ո՛չ, ես հայրս չեմ, բայց վստահաբար հորս որդին եմ:

Կարդա՛ր
Հովվի. 14. 8-14

Ինձ տեսնողը Հորը
տեսավ: Հովվի. 14.9

Հիսուսի հետևորդներից մեկը՝ Փիլիպոս անունով մի օր ասաց. «Տե՛ր, ցու՛յց տուր մեզ Հորը» (Հովհ.14.8): Թեև առաջին անգամ չէր, որ Հիսուսն այդ բանը նշում էր, բայց նրա պատասխանը զարմանք հարուցեց. «Ինձ տեսնողը Հորը տեսավ» (Հմ.9): Խոսքը միայն ֆիզիկական նմանություն մասին չէ, իհարկե: «Ձե՞ս հավատում, որ ես Հոր մեջ եմ, և Հայրն իմ մեջ է» (Հմ.10): Նրա ամբողջ էությունն ու նկարագիրը նույնն էին՝ Հոր նման:

Այս ասելով Հիսուսն իր սիրելի աշակերտներին բացահայտեց իր՝ Հոր հետ մեկ լինելու ճշմարտությունը և այսօր էլ մեզ է ասում. «Եթե ուզում եք իմանալ, թե Աստված ինչ տեսք ունի, Ի՛նձ նայեք»:

Աղոթք - Տե՛ր, երբ ամեն ինչ ճնշող է թվում, հիշեցրու՛ ինձ, որ Քեզ տեսնելը հավասարազոր է Հորը տեսնելուն: Օգնի՛ր, որ հայացքս Քեզ վրա կենտրոնացնեմ: Ամեն:

Հիսուսի ու Հոր նույն նկարագիրը արտացոլում է մեր պատկերը:

Օգտակար փորձություն

15-րդ դարի վանական Թոմաս Քեմպիսն իր «Հիսուսի նմանությունը» խորագրով գրքում փորձության մասին մի տեսակետ է հայտնում, որը մի փոքր զարմանալի կարող է թվալ: Ցավի ու դժվարությունների վրա կենտրոնանալու փոխարեն նա առաջարկում է. «Փորձություններն օգտակար են, որովհետև մեզ դարձնում են խոնարհ, մաքրում են ու սովորեցնում»: Ապա բացատրում է, որ «Հաղթանակի բանալին ճշմարիտ հեզությունն ու համբերությունն են, դրանցով ենք մենք հաղթում թշնամուն»:

Հեզություն ու համբերություն: Որքան տարբեր կլինի Քրիստոսի հետ իմ քայլվածքը, եթե դա լինի ինձ հանդիպած փորձության բնական պատասխանը: Հաճախ ամոթով, հուսախաբությունք ու անհամբերությամբ եմ վարվում պայքարից ազատվելու համար: Սակայն ինչպես Հակ. 1-ն է սովորեցնում, անպայման չէ, որ մեր դիմազրաված փորձություններն ու խաբկանքները աննպատակ լինեն: Թեև փորձությանը տեղի տալը սրտի ցավ է պատճառում (Հմ.13-15), բայց երբ խոնարհ սրտով դառնանք Աստծուն ու խնդրենք իր իմաստությունն ու շնորհքը, կտեսնենք, որ Նա «բոլորին առատությամբ տալիս է ու չի նախատում»(Հմ.5): Մեր մեջ եղած իր գործությամբ մեր փորձություններն ու մեղքին դիմազրավելու պայքարը կձևավորեն համբերություն, «որպեսզի կատարյալ ու ամբողջ լինենք և ոչ մի բանի պակաս չունենանք»(Հմ.4): Եթե վստահում ենք Հիսուսին, պատճառ չունենք վախի մեջ ապրելու:

Աղոթք - Տե՛ր, տխրում եմ, երբ անդրադառնում եմ, թե որքան հաճախ եմ ուզում կյանքի փորձությունները մենակ հաղթահարել, կարծես Քո կարիքը չունենամ: Շնորհակալ եմ Քո անվախճան սիրո ու համբերության համար: Ամեն:

Փորձությունների ու պայքարի պակաս չի լինի մեր կյանքում, ուստի խոնարհությամբ ու համբերությամբ հաղթահարենք դրանք:

Կարդա՛ Հակոբոս
1. 2-5, 12-21

Խոնարհությամբ
ընդունեցեք ձեր մեջ
սերմանված խոսքը,
որ կարող է ձեր
հոգիները փրկել:
Հակ. 1.21

Գտնված եզերքները

Շարժիչավոր հեծանիվների ցուցադրության ժամանակ հեծանվորդներն այնպիսի հնարքներ էին ցույց տալիս, որ մարդու շունչ էր կտրվում: Որպեսզի այդ ամենը տեսնեի, պետք է կանգնեի ոտքերիս ծայրերին: Հանկարծ նկատեցի, որ երեք երեխա բարձրացել էին ծառը ու շատ հանգիստ դիտում էին:

Նայելով այդ փոքրիկներին՝ Զաքեոսին հիշեցի, որին Ղուկասը ներկայացնում է որպես մի հարուստ մաքսավոր (Ղուկ. 19.2): Հրեաները Հռոմեական իշխանության համար գործող մաքսավորներին դիտարկում էին դավաճաններ, քանի որ նրանք իրենց ազգակիցներից հարկեր հավաքելիս հաճախ ավելին էին պահանջում իրենց անձնական հարստության համար: Հետևաբար Զաքեոսը նույնպես ամաչեց իր գաղութից:

Երբ Հիսուսը մտավ Երիքով, բազմությունը նրան շրջապատեց: Զաքեոսը ցանկացավ նրան տեսնել, սակայն կարճ հասակի պատճառով չէր կարող: Ուստի նա բարձրացավ մի ժանտաթզենու վրա: Երբ Հիսուսը մոտեցավ այդ ծառին, վերև նայեց ու ասաց. «Զաքեո՛ս, շուտ արա իջի՛ր, որովհետև այսօր պետք է քո տանը լինեմ» (Հմ.5):

Այս պատմությունը մեզ հիշեցնում է, որ «Հիսուսը եկել է կորածին փնտրելու և գտնելու» (Հմ.9-10)՝ առաջ արկելով Իր բարեկամությունն ու փրկությունը:

Աղոթք - Տե՛ր, շնորհակալ եմք, որ ուղղակի քայլելով չես անցնում, երբ մենք կարիքի մեջ եմք, այլ կանգնում ու մեզ հրավիրում ես Քեզ հետ բարեկամություն անելու: Ամեն:

Հնարավոր է, որ դուրս գետվածի կամ լքվածի զգացում ունենանք: Սակայն Հիսուսը մեզ փնտրում է ու գտնում:

Կարդա՛ր
Ղուկաս 19.1-10

Որովհետև Մարդու Որդին եկել է, որ կորածին փնտրի ու փրկի:
Ղուկ. 19.10

Փրկության կարիք

Դեռահաս Ալլդին միայնակ աշխատում էր իր ձկնորսական խորհրթում, որը խարսխված էր ինդոնեզական Սուլավես կղզուց 125 կմ հեռու : Հանկարծ ուժեղ քամի բարձրացավ ու խորտակեց նրա խարխսխներն ու նետեց ծովը: Քառասունինը օր Ալլդին մնաց օվկիանոսի ջրերի վրա: Ամեն անգամ, երբ նավ էր տեսնում, վառում էր իր լապտերը, որ ուշադրություն գրավի, բայց միշտ հուսախաբ էր լինում: Մոտ տասը նավ անցավ հյուսիսից պատանու կողքով մինչև նրա փրկվելը: Հիսուսը մի առակ է պատմել մի «օրենսգետի» մասին, որը հավիտենական կյանք ունենալու ուղին էր հարցրել Իրեն (Ղուկ. 10.25) : Ինքը հիշել էր այն քահանային ու դևտացուն, որոնք, տեսնելով վիրավոր մարդուն, չէին օգնել, այլ փոխել էին ճամփան (Հմ.31-32): Պատմությունն ասում է, որ նրանք երկուսն էլ կրոնականներ էին և պետք է, որ ծանոթ լինեին դրացուն սիրելու մասին Աստծո օրենքին (Ղև. 19.17-18): Հնարավոր է՝ նրանք մտածեցին, թե վտանգավոր է, կամ չուզեցին խախտել հրեական այն օրենքը, որի համաձայն՝ մեռած մարմիններին դիպչողները պիղծ են դիտվում և գրկվում են տաճարում ծառայություն մատուցելու իրավունքից: Ի հակառակ դրան՝ մի սամարացի, որն արհամարհված էր հրեաների կողմից, ցուցաբերեց ազնիվ վերաբերմունք, տեսավ կարիքավոր մարդուն և անձնուրացորեն հոգ տարավ նրա մասին: Հիսուսն իր պատմությունը եզրափակեց այն պատվիրանով, որ Իր հետևորդները « նան ու այդպես անեն» (Ղուկ. 10.37):

Կարդա՛ր
Ղուկաս 10. 30-37

Մի սամարացի էլ, որ ճանապարհորդում էր, այդտեղ եկավ, նրան տեսնելով գթաց:
Ղուկ. 10.33

Աղոթք - Հայր, բաց աչքերս իմ շուրջը եղող կարիքավորների համար և տուր ինձ ուրիշների հանդեպ կարեկից սիրտ: Ամեն:
Տերը մեր առջև դրել է կարիքավոր մարդկանց և ակնկալում է, որ պատրաստ լինենք նրանց օգնության ձեռք մեկնելու:

Իրապես խոնարհ, իրապես մեծ

Երբ Ամերիկյան հեղափոխությունն ավարտվեց Անգլիայի անձնատուր լինելով, շատ քաղաքագետներ ու գինվորական առաջնորդներ խորհուրդ արեցին և բանակի գլխավոր հրամանատար, գեներալ Ջորջ Վաշինգտոնին դարձրին երկրի ղեկավար: Աշխարհը տեսնում էր, որ նոր միապետը, ամբողջական իշխանություն ունենալով էլ, հավատարիմ է մնում ազատության իր իդեալին: Մինչդեռ Անգլիայի թագավոր Ջորջ Գ-ն այլ իրականություն էր տեսնում: Նա համոզված էր, որ եթե Վաշինգտոնը դիմադրեր փառքի ձգողական ուժին ու վերադառնար Վիրջինիայի իր կալվածքը, նա կդառնար «աշխարհի մեծագույն մարդը»:

**Կարդա՛ր
Փիլիպ. 2. 1-11**

Ապա (Հիսուս Քրիստոս) իր անձնունայնացրեց Փիլիպ. 2.7

Թագավորը համոզված էր, որ իսկական ազնվականությունը ուժի գործադրմամբ իշխանության հասնելը է: Պողոսը ևս գիտեր այս ճշմարտությունը և մեզ քաջալերեց հետևելու Քրիստոսի խոնարհ ճամփին: Հակառակ այն բանի, որ « Աստծու բնությունն ունենալով՝ Աստծուն հավասար լինելը հափշտակություն չհամարեց: Այլ իր անձն ունայնացրեց և ծառայի կերպարանք առնելով, մարդկանց նման լինելով ու կերպարանքով մարդու պես գտնվելով՝ Իրեն խոնարհեցրեց ու հնազանդ եղավ մինչև մահ, այն էլ՝ խաչի մահվան» (Փիլիպ. 2. 6-8): Նա, որ իր ձեռքում ուներ ամեն զորություն, հանուն սիրո հանձնեց ամեն բան: Հիսուսը, որ կարող էր մեզնից փառաբանություն պահանջել կամ պարտադրել, որ հնազանդ լինենք, Իր զորությունը վայր դրեց մի անբացատրելի արարքով, որով գրավեց մեր նվիրումն ու պաշտամունքը: Նա ցույց տվեց ճշմարիտ մեծությունը:

Աղոթք - Տե՛ր, շնորհակալ եմք, որ Քո ամենադաժան պահին անգամ մեզ ցույց տվեցիր Քո իսկական զորությունն ու մեծությունը: Ամեն:

Մեր Տերն ու Փրկիչը Իր անձը խոնարհեցրեց, ուստի արժե մեծության մեր իմացած սահմանումը խմբագրել:

Մեր ուրախության պատճառները

Երբ դպրոցական տարեշրջանն սկսվեց, տասնչորս տարեկան Բ.Ք. Յ-ն ամեն կեսօրից հետո դուրս էր թռչում ու սկսում էր պարել: Մայրը ոգևորում էր նրան և տեսաերիզի վրա վերցնում դպրոցից հետո որդու զվարճանքը: Նա պարում էր, որովհետև կյանքը հաճելի էր իր համար և ինքն էլ իր շարժումներով «ուրախացնում էր մարդկանց»: Մի օր էլ երկու աղբահավաքներ դադարեցրին իրենց գործն ու միանալով տղային՝ սկսեցին ճոճվել ու ցատկոտել: Այս երրորդությունը ցույց է տալիս անկեղծ ու վարակիչ ուրախության ուժը:

149-րդ սաղմոսի հեղինակը նկարագրում է Աստծո մնայուն ու անփերապահ ուրախության աղբյուրը: Սաղմոսերգուն քաջալերում է Աստծո ժողովրդին, որպեսզի իրար միանան ու «Օրհնեն Տիրոջը նոր օրհնությունը», Իսրայելին հրավիրում է «ուրախանալ իր Արարչով և ցնծալ իրենց թագավորով» (Հմ.2): Նա մեզ հրավիրում է Իրեն պաշտելու «պարով ու թմբուկով (Հմ.1-3): Ինչու՞: Որովհետև «Տերը սիրում է իր սուրբ ժողովրդին և փառավորում հեզբերին փրկությունը» (Հմ.4):

Մեր պաշտելի Հայրը ստեղծեց մեզ ու պահում է ամբողջ տիեզերքը: Նա գոհանում է մեզնով, որովհետև մենք իր սիրելի զավակներն ենք: Նա է ձևավորել մեզ, ճանաչում է մեզ և հրավիրում իր հետ անձնական փոխհարաբերություն ունենալու: Ի՞նչ մեծ պատիվ: Մեր սիրող ու ապրող Աստվածը պատճառն է մեր հավիտենական ուրախության: Մենք կարող ենք ցնծալ իր մնայուն ներկայության պարգևով և երախտապարտ լինել մեր Արարչին՝ մեզ տված յուրաքանչյուր օրվա համար:

Աղոթք -Հայր, շնորհակալ եմք, որ ճանաչում ու սիրում ես մեզ: Ամեն:

Եթե Աստծո ներկայությունը քեզ ուրախացնում է, հակառակ կյանքի բոլոր պայմաններին, ուրախությունդ հայտնի՛ր:

Կարդա՛ր
Սաղմոս 149. 1-5

Իսրայելյն ուրախացավ իր Արարչով, Սիոնի որդիները թող ցնծան իրենց Թագավորով:
Սաղմ. 149.2

«Աստծո գործերը»

Մայքի գործընկերների մեծ մասը շատ քիչ բան գիտեին քրիստոնեությունից մասին, ոչ էլ մտահոգվում էին դրա համար: Բայց գիտեին, որ Մայքը սիրում էր իրենց:

Հարուստի տոնն էր մոտենում, և նրանցից մեկն ասաց, որ լսել է, թե Հարուստունը կապ ունի Պասեքի հետ, և ինքը կուզենար իմանալ այդ մասին: Եվ դիմեց Մայքին.

«Հե՛յ, Մայք: Դու գիտես Աստծո գործերի մասին, ի՞նչ է պասեքը»:

Մայքը բացատրեց, թե ինչպես Աստված խորայելցիներին ազատեց Եգիպտոսի գերությունից: Նրանց պատմեց տասը հարվածների ու անդրանիկ զավակների մահվան մասին: Բացատրեց, թե ինչպես մահվան հրեշտակն այն տների վրայով անցավ, որոնց դրանդիքներն ու վերին սեմը ծածկվել էր մորթված գառան արյունով: Հետո պատմեց, թե ինչպես Հիսուսը խաչվեց պասեքի օրերին՝ որպես մեկ անգամ զոհաբերվող գառնուկ: Այս ասելով՝ Մայքը բացականչեց. «Հե՛յ, ես վկայում եմ»: Պետրոս առաքյալը խրատեց Աստված չիմացող մշակույթի մեջ գոյություն ունեցող եկեղեցուն և ասաց. «Միշտ պատրաստ եղեք հեզությունից և երկյուղածությունից պատասխան տալու ամեն մեկին, ով ձեր մեջ եղած հույսի պատճառը հարցնի» (Ա. Պետ. 3.15):

Մենք էլ Մայքի նման կարող ենք Աստծո Սուրբ Հոգու աջակցությամբ պարզ բառերով բացատրել, թե որն է կարևորը կյանքում, այսինքն՝ «Աստծո գործերը»:

Աղոթք - Հա՛յր, օգնի՛ր ինձ, որ պատրաստ լինեմ բացատրելու այն հույսն ու նպատակը, որ Դու կարող ես տալ մեր կյանքին: Ամեն:

Եթե հավատում ես Աստծուն, պատրաստ եղի՛ր խոնարհությամբ ու երկյուղածությամբ այն բաժնեկցելու ուրիշների հետ:

Կարդա՛ր Ա Պետրոս 3. 13-18

Պատրաստ եղեք հեզությամբ և երկյուղածությամբ պատասխան տալու ամեն մեկին, ով ձեր մեջ եղած հույսի պատճառը հարցնի: Ա. Պետ. 3. 15

Յեռանկար ի վերուստ

11970-ական թթ, երբ Փիթեր Ուելչը պատանի էր, նրա համար մե-
 տաղորտիչ գործիքի գործածությունը ուղղակի հաճելի զբաղ-
 մունք էր: 1990-ականներից ի վեր, սակայն, նա ուղեկցում է աշ-
 խարհի տարբեր կողերից մետաղ հայտնաբերելու եկող խմբերին:
 Արդեն գտել են հազարավոր մետաղյա իրեր. սրեր, հին զարդեր
 և մետաղադրամներ: «Գուզլ երկիր» հա-
 մակարգչային ծրագրի օգնությամբ
 նրանք ուսումնասիրում են Միացյալ Թա-
 գավորության դաշտերի արբանյակային
 լուսանկարները և իմանում, թե դարեր
 առաջ որտե՞ղ են եղել փողոցները, շենքե-
 րը և այլ կառույցներ: Փիթերն ասում է. «Ի

Կարդա՛
Եսայի 48. 2, 5-11, 17
 Ես իմ փառքը
 ուրիշին չեմ տա:
 Ես. 48.11

վերուստ հեռանկար ունենալը բոլորովին նոր աշխարհ է բացում
 մեր առջև»: Եսայի ժամանակներում էլ Աստծո ժողովուրդը նման
 «ի վերուստ հեռանկարի» կարիք ուներ: Նրանք հպարտանում
 էին իր ժողովուրդը լինելու համար, միաժամանակ անհնազանդու-
 թյուն ցուցաբերեցին և մերժեցին հրաժարվել իրենց կուռքերից:
 Աստված ուրիշ հեռանկար ուներ իրենց համար: Հակառակ նրանց
 ապստամբելուն՝ ազատելու էր նրանց Բաբելոնի գերությունից:
 Ինչու՞: «Իմ անվան համար արեցի այդ, որպեսզի իմ անունը չհայ-
 հոյվի. ես իմ փառքը ուրիշին չեմ տա» (Ես. 48.11): Աստծո՞ ի
 վերուստ ունեցած հեռանկարը այն կյանքն է, որ իր փառքի ու
 նպատակի համար է, ոչ թե մեր: Մեր ուշադրությունը պետք է
 իրեն ու իր ծրագրերին բեռենք, ինչպես նաև ուրիշների ուշադ-
 րությունը հրավիրենք իր վրա: Որպես մեր կյանքի հեռանկար՝
 Աստծո փառքն ունենալը բոլորովին նոր աշխարհ է բացում: Աստ-
 ված մեզ կսովորեցնի, թե ինչն է մեզ համար բարի ու մեզ ցույց
 կտա այն ճանապարհը, որով գնալու ենք (Հմ. 17):

Աղոթք - Սիրելի՛ Յայր, ուզում եմ, որ կյանքս Քո մասին լի-
 ցի, ոչ թե իմ: Սովորեցրո՛ւ և փոխի՛ր ինձ: Ամեն:

**Երբ «ի վերուստ հեռանկար» ունենանք, մեր դիրքը
 կփոխվի ու ամեն ինչ Աստծո համար կլինի:**

Միասին շահում ենք

Կեսգիշերին հովիվ Սամուելը զանգ ստացավ, որով նրան խնդրում էին եկեղեցականներից մեկի տուն գնալ: Երբ տեղ հասավ, տեսավ, որ տունն այրվում է: Ընտանիքի հայրը մտել էր տուն՝ երեխային կրակների միջից ազատելու: Քիչ անց նա դուրս եկավ՝ ուշագնաց աղջկան գրկած: Ուզանդայի այդ գյուղական վայրում հիվանդանոցը տասը կիլոմետր հեռու էր, փոխադրամիջոց էլ չկար: Հովիվն ու հայրը՝ մանուկը գրկին, սկսեցին վազել դեպի հիվանդանոց: Երբ մեկը հոգնեց, մյուսը գրկեց վիրավոր աղջկան: Այսպիսով կարողացան նրան հասցնել հիվանդանոց, որտեղ հայրն ու դուստրը բուժում ստացան ու լիովին ապաքինվեցին:

**Կարդա՛
ելք 17. 8-13**

Երկու հոգով ավելի լավ է, քան մեկ, որովհետև ավելի վարձ կա նրանց վաստակի համար: Ժող. 4.9

Ելք 17.8-13-ում Տերը կազմակերպեց ու ղեկավարեց մի հաղթանակ, որում մեծ ավանդ ունեին Հեսուն, որը առաջնորդում էր պատերազմողներին և Մովսեսը, որը ձեռքերը բարձրացրած՝ բռնել էր Աստծո գավազանը: Երբ Մովսեսի ձեռքերը հոգնեցին, Ահարոնն ու Ովրը օգնեցին, յուրաքանչյուրը մեկ ձեռքը վեր բռնելով, մինչև որ արևը մայր մտավ ու թշնամին պարտվեց:

Իրարից կախված լինելը չի կարելի թերագնահատել: Աստված Իր բարությամբ հոգում է մարդկանց կարիքները և նրանց տալիս փոխադարձ բարիքի շնորհք:

Աղոթք - Հայր, շնորհակալ եմ նրանց համար, որոնց դրել ես իմ կյանքի մեջ և նրանց համար, որոնց հետ կարող եմ կյանքը կիսել՝ մեր փոխադարձ բարիքի ու Քո փառքի համար: Ամեն:

Մարդկանց քաջալերանքի և օգնության կարիքն ունենք:
Բայց կան մարդիկ, որոնք մե՛ր օգնությանն ու կարեկցանքին են կարոտ:

Նա ինձ փոխեց

Երբ Լոնդոնի ամենամեծ անառականոցի տնօրեն Ջոնին Բանտարկում էին, նա ասաց. «Բայց ես բարի մարդ եմ»: Բանտարկված ժամանակ սուրճի ու կարկանդակի համար որոշեց մասնակցել Աստվածաշնչի դասընթացին և շատ զարմացավ տեսնելով մյուս բանտարկյալների ուրախությունը: Առաջին իսկ երգի ժամանակ նա սկսեց լաց լինել, հետո մի Աստվածաշունչ ստացավ: Երբ կարդաց Եզեկիել մարգարեի գրքից մի հատված, նրա կյանքը փոխվեց: Նա ասես շանթահարվեց, երբ կարդաց. «Իսկ եթե անօրենը հետ կանգնի իր անօրենությունից, օրենքներս կատարի, արդարություն անի, ինքն իր հոգին փրկելու է, որովհետև տեսել ու հետ է դարձել իր կատարած բոլոր ամբարշտություններից: Ապրելով ապրելու է ու չի մեռնելու» (Եզ. 27-28): Աստծո խոսքը կենդանացավ նրա մեջ և նա մտածեց. «Ես բարի մեկը չէի ... ամբարիշտ էի և պետք է փոխվեմ»: Իսկ երբ աղոթում էր հովվի հետ, ասաց. «Ես Հիսուսին գտա, և նա ինձ փոխեց»: Եզեկիելի այս խոսքերն ուղղված էին Աստծո ժողովրդին, երբ նրանք աքսորված էին: Թեև նրանք Աստծուց հեռացել էին, Նա ուզեց, որ հրաժարվեն իրենց հանցանքներից և «մի նոր սիրտ ու նոր հոգի ստանան» (Հմ.31): Այդ բառերն օգնեցին Ջոնին, որ «դարձյալ գա ու ապրի» (Հմ.32) և հետևի Տեր Հիսուսին, Նրան, Ով մեղավորներին հրավիրեց ապաշխարության (Ղուկ. 5.32): Թող որ մենք նույնպես պատասխանենք Հոգուն, որը մեզ համոզում է գիտակցել մեր մեղքը, որպեսզի մենք էլ ներում ու ազատություն վայելենք:

Աղոթք - Հայր, շնորհակալ եմ, որ Քո Սուրբ Հոգու միջոցով ինձ տալիս ես մեղքիս գիտակցումը: Փափկացրու՝ սիրտս, որ ապաշխարի ու Քո ներումն ստանա: Ամեն:

Կարծում եմք, թե բարի եմք՝ մոռանալով, որ բոլորը մեղք գործեցին ու զրկվեցին Աստծո փառքից: Խնդրե՛նք Աստծո ողորմությունը, շնորհքն ու ներումը:

Կարդա՛
Եզեկիել 18 . 25-32

Իսկ եթե անօրենը ... օրենքներս կատարի, արդարություն անի, ինքն իր հոգին փրկելու է: Եզ. 18.27

Միմյանց համար ստեղծված

Մերըն ու Ստեղծան ամուսնացած են արդեն 79 տարի, և առանց իրար չեն պատկերացնում իրենց կյանքը: Միասին ուրախանում են, միասին՝ տխրում: Նույնիսկ երբ ամուսինը գնաց հանգստյան տուն, կինը նրան շուտ ետ բերեց: Մերըն 101 տարեկան է, Ստեղծան՝ 95: Թեև նա քայլելիս հենարանի կարիք ունի, սակայն սիրով ամուսնու համար ճաշ է պատրաստում: Իհարկե, նրան օգնում են թոռնիկներն ու զբաղիները:

Այս զույգի համատեղ կյանքը լավ օրինակ է Ծննդ. 2-ի, որտեղ Աստված ասաց. «Լավ չէ, որ մարդը միայնակ լինի: Նրա նմանությունը մի օգնական ստեղծենք նրա համար»: Եվ միայն Եվան, որ ստեղծված էր Ադամի կողոսկրից, հարմար օգնական եղավ նրա համար (Հմ. 19-24):

Եվան Ադամի համար կատարյալ զուգընկեր էր, նրանց միջոցով էր, որ Աստված հիմնեց ամուսնությունը: Սա միայն անհատների փոխօգնության համար չէր, այլ ընտանիք սկսելու և հոգ տանելու ստեղծագործության, որն իր մեջ այլ մարդիկ է պարունակում (1.28): Այդ առաջին ընտանիքից առաջացավ մի համայնք, որպեսզի ամուսնացած, թե ոչ, ծեր, թե երիտասարդ, մեզանից ոչ մեկը մենակ չլինի: Որպես համայնք՝ Աստված մեզ տվել է «իրար բե՛ռը վերցնելու» առանձնահատկությունը (Գաղ. 6.2):

Աղոթք - Սիրելի՛ Հայր, շնորհակալ եմք, որ այրն ու կինը ստեղծեցիր միմյանց համար, որպեսզի համայնքը հաստատվի, և մեզանից ոչ մեկը մենակ չլինի: Ամեն:

Որպես Քրիստոսի մարմնի անդամներ՝ մենք երբեք մենակ չպիտի լինենք: Այդ է մեր Երկնավոր Հոր՝ Աստծո ծրագիրը:

Կարդա՛ր Ծննդոց 2. 18-24

Լավ չէ, որ մարդը միայնակ լինի: Նրա նմանությունը մի օգնական ստեղծենք նրա համար: Ծննդ. 2.18

ԻՆչպե՞ս վերաշինել

Գիշեր էր, երբ առաջնորդը իր ձիով դուրս ելավ՝ անելիք-ները ճշտելու: Պատվեց իր շուրջը եղած ավերակներում, տեսավ քաղաքի քանդված պատերն ու այրված դռները: Որոշ տեղերում քարերն այնպես էին թափված, որ ձիով անցնելը շատ դժվար էր: Նա տխուր վերադարձավ տուն: Երբ պահը եկավ, որ քաղաքի պաշտոնյաներին պետք է հայտնեի այդ վիճակի մասին, նա այսպես սկսեց. «Տես՛ք այն չարիքները, որոնց մեջ ենք այժմ» (Նէ. 2.17): Պատմեց իր տեսած ավերածությունների, նաև այն մասին, որ իր Աստծո ձեռքը միշտ իր վրա է եղել: Եվ առաջարկեց շինել Երուսաղեմի պարիսպները, որ այլևս նախատինքի մեջ չլինեն: Ժողովուրդը պատասխանեց. «Այժմ եկե՛ք ելնենք և վերաշինենք պարիսպը»: Եվ նրանց ձեռքերը գորացան այդ բարի գործերի համար» (Հմ. 18.19): Ու այդպես էլ արեցին:

Կարդա՛ր ՆԵՆՃԻ 2. 11-18

Նրանք էլ ասին .«Այժմ եկե՛ք ելնենք և վերաշինենք պարիսպը»: Եվ նրանց ձեռքերը գորացան այդ բարի գործերի համար: Նէ. 2.18.19

Աստծո հանդեպ հավատով ու անխտիր բուրբի ջանքերով, Երուսաղեմի ժողովուրդը Նէեմիայի գլխավորությամբ 52 օրում վերակառուցեց պարիսպը (6.15): Նայիր քո գործերին, կա՞ր արդյոք մի բան, որ անհնար է թվում, բայց դու գիտես, որ Աստված ուզում է, որ կատարես: Օրինակ մի մեղք, որ չես կարողանում թողնել, հարաբերություններում եղած մի բացթողում, կամ դժվարին թվացող մեկ այլ բան: Աստուծու առաջնորդություն խնդրի՛ր (2.4-5), վերլուծի՛ր խնդիրը (Հմ.11-15), նկատի առ իր մասնակցությունը (Հմ. 18) ու նոր սկսիր կառուցել:

Աղոթք - Հայր, Քո օգնության կարիքն ունեմ: Այս հարցերը չեմ կարող մենակ լուծել: Օգնի՛ր՝ հասկանամ դրությունը: Խնդրում եմ Քո աջակցությունն ու առաջնորդությունը, որպեսզի հաղթահարեմ մարտահրավերները: Ամեն:

**Վստահաբար ունենք քանդված պատերի նման
իրավիճակներ, որոնցից մենք նեղվում ենք: Աղոթքով
խնդրենք Աստծո գորությունը:**

Հակառակ պարագայի կուռքեր

Մեծ օրական երկու անգամ ստուգում էր իր կենսաթոշակի հաշիվը: Արժեթղթերի բարձրացման շնորհիվ նրա երեսուն տարվա խնայողությունները զգալիորեն ավելացել էին ու նա կարող էր իրեն թույլ տալ հանգստի անցնել: Քանի դեռ արժեթղթերը կայուն են, Սեմը որևէ մտավախություն չի ունենա:

Երեմիան այս մասին էր հայտարարում, երբ ասում էր. «Քո աստվածները, Յուդայի՛ երկիր, թվով այնքան էին, որքան քո քաղաքները, և ըստ Երուսաղեմի փողոցների թվի, ամոթի բազիններ ու սեղաններ կանգնեցրիք՝ Բահադին խունկ ծխելու համար» (11.13):

Կարդա՛
Երեմիա 11. 9-13

Նրանք գնում են օտար աստվածների հետևից: Եր. 11.10

Հուդայի կռապաշտությունը ուշագրավ է: Նրանք շատ լավ գիտեին, որ Տերը Աստվածն է: Ինչպե՞ս կարող էին ուրիշ բան պաշտել: Նրանք երկակի խաղ էին խաղում. մի կողմից Տիրոջ կարիքն ունեին մահից հետո, որովհետև միայն ճշմարիտ Աստվածը կարող է նրանց հարուծելու տալ: Ինչ վերաբերում է ներկային, հեթանոսական աստվածները խոստացել էին առողջություն, հարստություն և պտղաբերություն: Ուստի ինչու՞ չաղոթել նաև նրանց:

Տեսնու՞մ ես, որ Հուդայի կռապաշտությունը ուսանելի է մեզ համար: Լավ է ունենալ կրթություն, տաղանդ, դիրք ու փող: Բայց եթե ուշադրությունը թուլացնենք, կարող ենք միայն նրանց վստահել: Գիտենք, որ մեռնելու ժամանակ Աստծո կարիքը կունենանք, հիմա էլ պիտի խնդրենք, որ օրհնի մեզ: Դու ու՞մ ես վստահում: Կուռքերին մի՛ վստահիր: Հավատոք ամբողջովին Իր վրա դի՛ր:

Աղոթք - Հայր, հույսս միայն Դու ես: Օգնի՛ր, որ միայն Քեզ վստահեմ և ոչ թե իմ կարողություններին և ունեցածներին: Ամեն:

Երբ փորձենք կուռքեր սարքել և նրանց վստահել, լսե՛նք Աստծո խոսքը և դառնանք դեպի Իրեն:

Տիրոջ առջև պարել

Տարիներ առաջ ես ու տիկինս՝ Քերոլայնը, այցելեցինք մի ֆորքը եկեղեցի, որտեղ պաշտամունքի ժամանակ մի կին սկսեց պարել: Շուտով նրան միացան ուրիշներ ևս: Ես ու կինս նայեցինք իրար և առանց խոսքի հասկացանք, որ դա մեզ համար է: Մեր եկեղեցական ավանդույթներին անհարիր են նմանատիպ պաշտամունքները:

Սակայն Մարկոսի պատմությունը Մարիամի արած «վատնումի» մասին ցույց է տալիս, որ Հիսուսի հանդեպ մեր սերը երբեմն կարող է այնպես արտահայտվել, որ անհանդստություն պատճառի ուրիշներին (Մարկ. 14.1-9): Մարիամի շուայած օծանելիքի գնով կարելի էր աղքատներին օգնել, ռժգոհում էին այդ «անմիտ» արարքից վրդովված աշակերտները: Մարիամը կարող էր մտավախություն ունենալ, թե Հիսուսը ինչպես կարձագանքի իր արարքին, բայց Նա գնահատեց կնոջ ցուցաբերած սիրո արտահայտությունը և պաշտպանեց նրան՝ չնայած որ շատերը այն սխալ էին համարում: Հիսուսն ասաց. «Ինչո՞ւ եք նեղություն տալիս դրան. նա ինձ համար մի բարի բան արեց» (Հմ.6):

Մեր սերը Հիսուսի հանդեպ արտահայտվում է ամենատարբեր ձևերով. պաշտոնական, անպաշտոն, լուռ կամ բարձրաձայն: Նա արժանի է ամեն պաշտամունքի, որ գալիս է սիրով լի սրտից:

Աղոթք - Ամենակարող Աստված, խոնարհվում եմ Քո առջև ու պաշտում եմ Քեզ: Դու արժանի ես ամենաբարձր փառաբանության ու պաշտամունքի: Ամեն:

Կարդա՛ր Մարկոս 14. 1-9

Բայց մարդիկ կային, որ իրենց մեջ նեղացան՝ ասելով. «Յուզի այս կորուստն ինչու եղավ»: Մարկ. 14.4

Մեր հանգիստ գոտուց դուրս էլ պաշտամունքի զանազան ձևեր կան: Կարևորը մեր կեցվածքն է Աստծո հանդեպ և սիրո արտահայտությունը:

Ուղիղ գծով առաջ գնալ

Հողագործի ամուր ձեռք և սուր աչք է պետք ունենալ Հորակտոր վարելու և համահավասար ափոսներ բանալու համար: Սակայն նույնիսկ այդ դեպքում հնարավոր է, որ ափոսներն անհավասար լինեն և օրվա վերջում ամենաուժեղ ձեռքերն էլ հոգնեն: Իսկ ժամանակակից GPS համակարգով աշխատող ավտոմատ մեքենաները հողը հերկում ու ցանում են ամենայն ճշգրտությամբ: Այսինքն առանց ջանք գործադրելու ավելի արդյունավետ է ստացվում այդ աշխատանքը: Պատկերացրու, որ նստես մեքենա և փոխանակ դեկը բռնելու՝ կարողանաս սենդվիչ ուտել: Հիանալի մի գործիք, որն օգնում է, որ ճիշտ ուղով առաջ գնաս:

Կարդա՛ր
Դ. Թագ. 22. 1-2, 8-13

Նա հավատարիմ գտնվեց Տիրոջ առջև... աջ կամ ձախ չխոտորվեց: Դ. Թագ. 22.2

Երևի հիշում ես Հոսիա անունը: Նա Հուդայի թագավոր դարձավ, երբ ընդամենը «ութ տարեկան էր» (Դ. Թագ. 22.1): Տարիներ անց, երբ Հոսիան արդեն 26 տարեկան էր, Քեղկիա քահանայապետը «Տիրոջ տանը օրենքի գիրք գտավ» (Հմ.8), և այն կարդացին երիտասարդ թագավորին: Նա շատ վշտացավ, որ իր նախնիները անհնազանդ են եղել, պատուեց իր հագուստները և որոշեց անել այն, ինչը «Տիրոջ առջև ուղիղ է» (Հմ.2): Օրենքի գիրքը ժողովրդին առաջնորդելու ուղեցույց եղավ, որպեսզի հնարավոր չլինի աջ կամ ձախ խոտորվել: Գրքում տրված էին ամեն ինչ շտկելու Աստծո ցուցումները:

Աստվածաշունչը մի հիանալի գործիք է: Եթե հետևենք նրա պատգամներին, այն մեզ կուղղի և առաջ կտանի ուղիղ ճանապարհով:

Աղոթք - Հա՛յր, Քո խոսքը պարգև է, որ մեր կյանքին տալիս է ճշմարտություն և ազատություն: Օգնի՛ր, որ ծարավ լինեմ Քո խոսքին: Ամեն:

Աստծո խոսքը լավագույն գործիքն է, որը կարող է մեր կյանքը ճիշտ ճանապարհով տանել:

Ճոխ կյանք

17-րդ դարի փիլիսոփա Թոմաս Հոպսը գրում է, թե մարդկային կյանքը իր բնական վիճակի մեջ «միայնակ, աղքատ, զգվելի, դաժան ու կարճ է»: Նա պնդում էր, որ մարդկային բնագրը ավելի շատ պայքարի կողմն է ձգում՝ նպատակ ունենալով իշխել ուրիշներին: Ուստի կարգ ու կանոն հաստատելու համար անհրաժեշտ է ղեկավարության միջամտությունը: Մարդկության հանդեպ այս մռայլ տեսակետը կարծես Հիսուսի նկարագրած իրավիճակը լինի, երբ նա ասում է. «Բողորը, ուլբեր եկել են ինձանից առաջ, գողեր են ու ավազակներ, և ոչխարներն էլ նրանց չեն լսել» (Հովհ. 10. 8): Բայց Հիսուսը այդ հուսահատության մեջ հույսի շող է առաջարկում. «Գողը գալիս է միայն գողանալու, սպանելու և կորցնելու. ես եկա, որ կյանք ունենան և է՛լ ավելին ունենան» (Հ.10): Հովվի՝ մեզ տված ճոխ կյանքի թարմացնող մի պատկեր է նկարագրում 22-րդ սաղմոսը. «Ինձ ոչինչ չի պակասի» (Հմ.1) և մենք պիտի վերանորոգվենք: Իր անվան համար մեզ առաջնորդում է արդարության արահետներով, որպեսզի նույնիսկ խավար ժամանակները հաղթահարելիս չերկյուղենք, որովհետև Նա ներկա է մեզ մխիթարելու և հանդարտեցնելու համար (Հմ. 3-4): Նա մեզ օգնում է հաղթահարել հակառակությունները և լցնել մեր հոգին օրհնություններով (Հմ.5): Նրա բարօրությունն ու կարեկցանքը մեզ կուղեկցեն ամբողջ կյանքում, և մենք իր ներկայության զգացողությունը կունենանք մեր կյանքի բոլոր օրերին (Հմ.7): Թող որ մենք Բարի Հովվի կոչին պատասխանենք և ունենանք իր պարգևած ճոխ կյանքը:

Աղոթք - Տե՛ր, Դու ես ճշմարիտ, ճոխ և օրհնություններով լի կյանքի աղբյուրը: Օգնի՛ր, որ մեր գոհացումը փնտրենք միմիայն Քո մեջ : Ամեն:

Հիսուսն եկավ մեզ կյանք տալու: Ու տվեց՝ իր կյանքը զոհաբերելով: Մենք էլ մեր կյանքը բաժնեկցենք ուրիշների հետ:

Կարդա՛

Հովհաննես 10. 7-10

Ես եկա, որ կյանք ունենան և է՛լ ավելին ունենան: Ես եմ Բարի հովվիվը
Հովհ. 10.10-11

Աստված այնտե՞ղ է

Լեւան տառապում էր քաղցկեղով, և նրա ամուսին Թիմը-
թինն չէր հասկանում, թե ինչու՞ է սիրող Աստվածը թույլ
տալիս, որ իր տիկինը չարչարվի: Չէ՞ որ ինքը հավատարմորեն
ծառայել էր՝ որպես Աստվածաշնչի ուսուցիչ ու խորհրդատու
և այս դժվարին պահին դարձյալ շարունակում էր Աստծո հետ
քայլել: Եվ ես անկեղծորեն նրան հարց-
րի, թե ինչու՞ է շարունակում հավատալ
Աստծուն, և ի՞նչն է խանգարում, որ
հեռանա Աստծուց:

Թիմըթին պատասխանեց. «Անցյա-
լում պատահածի պատճառով»: Նա
հիշեց այն ժամանակները, երբ ինքը դեռ
Աստծուն չէր ճանաչում, և Աստված
պաշտպանել ու օգնել է իրեն: «Գիտեմ, որ Աստվածը, որին
հավատում եմ, կգա՝ Իր ձեռով»:

Թիմըթիի խոսքերը Եսայի 8.17-ում Եսայիի վստահության
արձագանքն են: Նույնիսկ այն պահին, երբ նա չէր զգում
Աստծո ներկայությունը, թշնամու կողմից իր ժողովրդի կրած
ներդրությունների ժամանակ նա «Տիրոջ վրա հույս դրեց», վըս-
տահեց Աստծո կողմից Իր մնայուն ներկայության մասին
նշաններին (Հմ.18):

Մեր կրած դժվարությունների ժամանակ, երբ զգանք, որ
Աստված մեզ հետ չէ, նայենք մեր կյանքում Նրա արած գոր-
ծերին: Դրանք կլինեն անտեսանելի Աստծո մասին տեսանելի
հուշարարներ: Աստծո, որ միշտ մեզ հետ է ու միշտ պատաս-
խանում է մեզ Իր ժամանակի մեջ և Իր ձեռով:

Աղոթք - Հայր, շնորհակալ եմք, որ միշտ մեզ հետ ես: Տու՛ր
ինձ ուժ, որ վստահեմ Քեզ նույնիսկ այն ժամանակ, երբ չեմ
կարող հասկանալ պատահածը: Ամեն:

**Աստված շատ բան է արել և անում մեր կյանքում: Կարևոր
է տեսնել դրանք հույսով ու հավատքով:**

Կարդա՛
Եսայի 8. 16-18

Կմնամ ու կսպասեմ
Աստծուն... հույս կդ-
նեմ նրա վրա:
Ես. 8.17

Առաջին կարգի աթոռին նստող մարդը

Քելսեյը իր տասնմեկ ամսական աղջնակի հետ, որին միաց-
ված էր թթվածնային բարձիկը, անցավ ինքնաթիռի նեղ
սրահով ու նստեց իր տեղում: Նա թռքախտով տառապող երե-
խային՝ Լյուսին, տանում էր բուժման: Նրանք նոր էին նս-
տել, երբ մոտեցավ ուղեկցորդուհին և ասաց, որ առաջին կար-
գում նստած ուղևորներից մեկը առա-
ջարկում է իր տեղը: Քելսեյը երախտա-
գիտությունից հուզվեց և տեղափոխ-
վեց ավելի լայն ու հարմար աթոռին:

Քելսեյի բարերարը մարմնավորեց
առատաձեռնություն այն տեսակը, որով
Պողոսը քաջալերում է Տիմոթեոսին
գրած նամակում: Պողոսը նրան պատ-
վիրում է իր հոգածություն տակ եղող-
ներին հրահանգել, որ «Բարիք գործեն,
բարի գործերով հարստանան, առատա-
ձեռն լինեն ու կարոտյալներին հաղորդակից» (Ա. Տիմ. 6.18):
Փորձություն են, -ասում է Պողոսը, -ամբարտավանությունն ու
աշխարհի հարստությունների վրա հույս դնելը: Դրանց փո-
խարեն նա առաջարկում է կենտրոնանալ առատաձեռնու-
թյամբ ապրելու և ուրիշներին ծառայելու վրա, առաջին կար-
գի աթոռին նստած մարդու նման բարի գործերով «հարստա-
նալու» համար: Տարբերությունն չկա՝ մենք ճոխություն, թե կա-
րիքի մեջ ենք ապրում, բոլորս էլ առատաձեռնություն պետք
է ցուցաբերենք, մեր ունեցածը կիսենք ուրիշների հետ: Պողոսն
ասում է, որ երբ սա կատարենք, մենք «ձեռք կբերենք հավի-
տենական կյանք» (Հմ.19):

Աղոթք - Հայր, երբ նորոգում եմ Քո հանդեպ իմ ունեցած
հույսը, խնդրում եմ՝ տուր ինձ առատաձեռն հոգի: Ամեն:

Աստված շատ բարիքներ է տվել մեզ:

Պատրա՞ստ ենք դրանք ուրիշների հետ բաժանելու:

Կարդա՛

Ա Տիմոթեոս 6. 17-19

Բարիք գործեն, բա-
րի գործերով հարս-
տանան,
առատաձեռն լինեն
ու կարոտյալներին
հաղորդակից:
Ա.Տիմ. 6. 18

Հավիտենական աչքեր

Ընկերուհիս՝ Մադլենը, աղոթում էր, որ իր զավակներն ու թոռները հավիտենական աչքեր ունենան: Նրա ընտանիքն անցել էր խռովալից ժամանակների միջով, որն ավարտվեց աղջկա մահով: Երբ ընտանիքը սգում էր այդ սարսափելի կորուստը, Մադլենը խնդրում էր, որ նրանք պակաս կարճատես լինեն՝ այս աշխարհի ցավերից սպառված, այլ ընդհակառակը ավելի ու ավելի հեռատես լինեն՝ մեր սիրող Աստծո հույսով լցված:

Պողոս առաքյալը և իր գործընկերները իրենց հալածողների կողմից մեծ չարչարանքներ կրեցին: Այնուամենայնիվ նրանք հայացքը հառեցին դեպի հավիտենություն: Պողոսը համարձակորեն ասաց. «Քանի որ այս երևացող բաներին չենք նայում, այլ աներևույթներին, որովհետև երևացողները ժամանակավոր են, իսկ աներևույթները՝ հավիտենական» (Բ. Կորնթ. 4.18):

Թեև նրանք Աստծո գործն էին անում, սակայն ապրեցին «ամեն բանում նեղված», «ճնշված», «հալածված» ու «վայր ընկած» (Հմ. 8-9): Աստված նրանց չէ՞ր ազատելու այդ տառապանքներից: Սակայն Պողոսը հուսախաբվելու փոխարեն հույսը դրեց «հավիտենական փառքի» վրա, որը գերազանցում է վայրկենական նեղությունը (Հմ. 17): Երբ մեր շուրջը եղող աշխարհը երերուն թվա, մեր աչքերը դարձնենք Աստծուն՝ հավիտենական Վեմին, որը բնավ չի սասանվի:

Կարդա՛
Բ Կորնթ. 4.7-18

Քանի որ մենք երևացող բաներին չենք նայում, այլ աներևույթներին:

Բ. Կորնթ. 4.18

Աղոթք - Ո՛վ Աստված, այսօր աչքերս դեպի Քեզ եմ դարձնում: Ապահովությանս մասին մի նշույլ ցույց տու՛ր ինձ: Ամեն:

Անկասկած, նեղություններ, ցավեր ու հալածանքներ կունենանք, բայց կարևորը Աստծո հավատարմությանը վստահելն է:

Հասկանանանք ինքներս մեզ

Մի երիտասարդ մարզիկ իր խմբի ղեկավար նշանակվեց: Մեղմ բնավորությամբ այդ տղան առաջնորդելու էր պրոֆեսիոնալ մարզիկների խումբը: Առաջին հարցազրույցի ժամանակ նա, դիմելով մարզչին ու խաղընկերներին, ինչ-որ խոսքեր մրթմրթաց իր պարտականությունների մասին: Այդ տարի խումբը լավ արդյունք չտվեց և երիտասարդ խմբապետին փոխարինեցին: Նա չկարողացավ հասկանալ, որ իրեն ղեկավար էին ընտրել առաջնորդելու համար կամ էլ չհավատաց իր ուժերին: Իր ձախողությունների համար Սավուղը իր «աչքին փոքր էր երևում» (Ա.Թագ. 15.17): Ծիծաղելի է նման բան ասել մեկի մասին, որը ներկայացված է որպես բարձրահասակ ու թիկնեղ: Նա տառացիորեն բոլորից մի գլուխ բարձր էր (9.2), բայց ինքը իրեն այդպիսին չէր զգում: Իրականության մեջ նրա արարքները, որոնց մասին կարդում ենք, ցույց են տալիս, որ նա փորձում է ապահովել ժողովրդի գոյությունը: Պարզապես ինքը լավ չէր ըմբռնել, որ իրեն ոչ թե ժողովուրդը, այլ Աստված է ընտրել ու տվել այդ առաքելությունը: Սավուղի սխալը յուրաքանչյուր մարդու ձախողման իսկական օրինակ է: Եթե մենք մոռանանք, որ ստեղծված ենք Աստծո պատկերով՝ իր օրենքը գործադրելու համար և մեր հեղինակությունը սխալ կերպով գործածենք, աշխարհում ավերածություն կտարածենք: Դա կանխելու համար դառնանք Աստծուն, որպեսզի նա լցնի մեզ իր Հոգով և արտոնենք Հիսուսին, որ մեզ ուղարկի աշխարհ:

Աղոթք - Սիրելի՛ Հայր, տու՛ր ինձ աչքեր, որ կարողանամ ինքս ինձ տեսնել, ինչպես Դու ես տեսնում, և տու՛ր շնորհք, որպեսզի կարողանամ հնազանդվել տվածդ կոչին: Ամեն:

Աստված յուրաքանչյուրիս պարտականություններ է տվել:
Չմտածենք, թե ի զորու չենք դրանք կատարելու:

Կարդա՛

Ա. Թագ. 15. 10-18

Սամուելն ասաց Սավուղին. «Չէ՞ որ դու փոքր էիր, երբ Իսրայելի ազգատոհմերի գորավար դարձար, և Տերը քեզ Իսրայելի վրա թագավոր օծեց: Ա. Թագ. 15.17

Պարտքի մարում

Երբ Ջորջիա նահանգի Ատլանտայի Մորհատուս քուեջի 2019-տարարեց, որ ինքն ու իր ընտանիքը միլիոնավոր դոլարներ են նվիրելու, որպեսզի մարվեն շրջանավարտ դասարանի բոլոր աշակերտների պարտքերը, բոլորն ապշել էին: Որովհետև այդ դասարանում մինչև 100 հազար դոլար պարտք ունեցող կար:

Մեզանից շատերն այս կամ այն ձևի պարտքեր ունեն. տան, կրթություն, ավտոմեքենայի, բժշկություն կամ այլ բաների համար: Եվ գիտենք, թե ինչ հիանալի զգացում է, երբ անդորրագիր ես ստանում, որ ամեն ինչ վճարված է:

Հիսուսին որպես «հավատարիմ վկա, մեռելներից անդրանիկը և երկրի թագավորների իշխան» հայտարարելով՝ Հովհաննեսը փառաբանություն մե հայտարարում է, որ նա մարել է պարտքերը. «Նրան, որ մեզ սիրեց ու մեր մեղքերից լվաց մեզ իր արյունով» (1.5): Հայտարարությունը պարզ է և խորիմաստ: Մորհատուսի շրջանավարտների պարտքերը մարելու մասին հայտարարությունից ավելի լավը այն բարի լուրն է, թե Հիսուսի մահը (խաչի վրա իր արյունը թափելը) մեզ ազատում է մեր մեղավոր պահվածքի, ցանկությունների ու գործերի համար արժանի «տուգանքից»: Որովհետև այդ պարտքը վճարված է, և նրանք, ովքեր հավատում են Հիսուսին, ներված են ու մաս են կազմում Աստծո թագավորության ընտանիքի (Հմ.6): Այս ավետիսը լավագույն լուրն է:

Կարդա՛ր Հայտնություն 1. 4-7

Հիսուս Քրիստոս մեզ սիրեց ու մեր մեղքերից լվաց մեզ իր արյունով: Հայտն. 1.5

Աղոթք - Տե՛ր, շնորհակալ եմ Քո մահվան համար, որ ջնջեց իմ պարտքերը: Ամեն:

Տերն առաջարկում է ձրի ներում և պատրաստ է սրբելու մեր բոլոր պարտքերը:

Խորարմատ հավատք

Ավելի քան վեց հարյուր տարի Նյու Ջերսիի Բեսքինկ Ռիչ Երեցական եկեղեցու կողքին կանգուն էր Սուրբ կաղնին: Ծառի երիտասարդ օրերին նրա փարթամ ճյուղերը տարածված էին բարձր ու լայն: Զով քամին խշշացնում էր ծառի տերևներն ու կաղիները, իսկ արևը, տերևների միջով անցնելով, ստեղծում էր լույսի պարող շողեր:

Սակայն այս տեսանելի պատկերից զատ, գետնի մակերեսի տակ նրա արմատների հսկայական համակարգն է տարածվում: Կաղնու հիմնական արմատն աճում է ուղղահայաց՝ ապահովելով սննդի անխափան մատակարարում: Նրանից բազմաթիվ արմատներ տարածվում են հորիզոնական ուղղություններով և խոնավություն ու սնունդ են տալիս հսկա ծառին: Արմատների այս բարդ համակարգը հաճախ ավելի մեծ է լինում, քան ծառը և ծառայում է որպես կյանքի ուղեգիր՝ ու խարխիս:

Այս հզոր կաղնու նման մեր կյանքի աճը նույնպես պայմանավորված է արմատներով: Երբ Հիսուսը բացատրեց Սերմնացանի առակը, շեշտեց հաստատապես ցանված լինելու, Հորհետ հարաբերությունն ունենալու կարևորությունը: Երբ աճում ենք Աստծո գիտությունը, ինչպես ասվում է Աստծո Խոսքում, մեր հավատքի արմատները պահվում են Իր Հոգու զորությունը: Աստված օգնում է իրեն հետևողներին, որ բարգավաճեն փորձությունների, հալածանքների ու մտահոգությունների ժամանակ (Մատթ. 13.16-23):

Աղոթք - Սիրող Յայր, խնդրում եմք փոխիր մեզ ներսից ու դրսից, խարսխիր մեզ այն հավատքին, որն արմատացած է Քո անփոփոխ խոսքի մեջ: Ամեն:

Մեր սրտերը Աստծո խոսքի կարիքն ունեն: Սնվենք Նրանով և մեր խորարմատ հավատքի պտուղները թող հայտնվեն:

Կարդա՛
Մատթեոս 13. 18-23

Բարի հողի մեջ սերմանվածը նա է, որ խոսքը լսում և հասկանում է: Մատթ. 13.23

Դարձյալ տրոփի՛ր

2⁰¹² Թվականին Ֆիլիպսը, Քրեյգն ու Դինը հրապարակեցին «Ասա՛ քո սրտին, որ կրկին տրոփի» վերնագրով երգը: Նրանք ներշնչվել էին սրտի մի վիրաբույժի իրական պատմությամբ: Հիվանդի սիրտը բուժելու համար նա կրծքավանդակից հանել էր սիրտը, մերսել ու դրել տեղը՝ շարունակելով բաց մերսման գործողությունը: Սակայն սիրտը չէր աշխատում: Այդժամ վիրաբույժը ծունկի էր իջել անգիտակից հիվանդի մոտ և ասել. «Տիկի՛ն Զոնսոն, սա քո վիրաբույժն է: Վիրահատությունը հաջող ավարտվեց, սիրտդ արդեն առողջ է: Հիմա ասա՛ նրան, որ սկսի տրոփել»: Եվ սիրտն սկսել է աշխատել:

Կարդա՛ր
Դատավորներ 5.19-21

Թող ես կոխտունմ նրանց, թող իմ ոտքը զորանա: Դատ. 5.21

Մեր ֆիզիկական սրտին մի բան ասելու գաղափարը կարող է տարօրինակ թվալ, սակայն այն ունի հոգևոր զուգահեռ պատկերներ: Սաղմոսերգուն ինքն իրեն ասում է. «Ինչո՞ւ ես տրամում, հոգի՛ իմ, կամ ինչո՞ւ ես ինձ խռովեցնում» (Սաղմ. 42.5): Մեկ ուրիշն ասում է. «Դարձի՛ր, հոգի՛դ իմ, դեպի հանգիստը քո, քանզի Տերն օգնեց քեզ» (114. 7): Իսրայելի թշնամիներին հաղթելուց հետո Դեբորա դատավորը հայտնեց, որ պատերազմի ժամանակ ինքն էլ է խոսել իր սրտի հետ. «Թող ես կոխտունմ նրանց, թող իմ ոտքը զորանա» (Դատ. 5.21), որովհետև Տերը հաղթանակ էր խոստացել (4. 6-7):

Մեր ամենակարող վիրաբույժը բուժում է մեր սրտերը (Սաղ. 102.3): Ուստի երբ վախ, հուսահատություն կամ դատապարտում գա մեզ վրա, մենք էլ խոսենք մեր հոգիների հետ և ասենք. «Գնա՛ առաջ: Զորացի՛ր: Տկար սիրտ, դարձյալ տրոփի՛ր»:

Աղոթք - Հայր, շնորհակալ եմ, որ ինձ հետ ես բոլոր պարագաներում: Քո ներկայության խոստման համար սրտիս պիտի ասեմ, որ քաջությամբ գործի: Ամեն

Նեղությունների ու դժվարությունների ժամանակ մեր սիրտը կարող է թուլանալ: Նրան ասենք. «Ով սի՛րտ, դարձյալ տրոփի՛ր»:

Փոխանցված սերը

Աղջիկս հիացած է Նենսի Դըյուուով: Երեք շաբաթում 10-12 վեպ կարդաց, որոնք մի հետախույզ աղջկա մասին են: Անկեղծ ասած՝ աղջկաս սերը դետեկտիվ պատմությունների հանդեպ ժառանգական է: Ես էլ էի կարդացել կապույտ կազմով այդ գրքերը, որ դրված էին մորս գրապահարանում:

Տեսնելով այդ սիրո փոխանցումը՝ մտածում եմ, թե էլ ինչ փոխանցեմ հաջորդ սերնդին: Տիմոթեոսին ուղղված իր երկրորդ նամակում Պողոսը գրում է, թե նրան մտաբերելիս հիշում է, որ նրա «անկեղծ սերը» կար նաև նրա մոր ու տատի մեջ: Խորհում եմ, որ խորհրդավոր պատմությունների հանդեպ սիրո հետ դատերս անցած լինի նաև իմ հավատքը, և նա «ծառայի», ինչպես իր ծնողները, աղոթի ու կառչի «կյանքի խոստմանը, որ Քրիստոս Հիսուսով է» (Բ.Տիմ. 1.1):

Իսկ նրանց համար, ովքեր չունեն Քրիստոսին ճանաչող ծնողներ ու նախնիներ, դարձյալ հույս կա: Թեև Տիմոթեոսի հայրը հիշատակված չէ, Պողոսը Տիմոթեոսին անվանում է «սիրելի գավակ» (Հմ.2): Նրանք, ովքեր չունեն ընտանիք, որոնց հավատքը ժառանգեն, այն կարող են գտնել եկեղեցում: Այդ մարդիկ կարող են օգնել՝ իմանալու, թե ինչպես ապրել «սուրբ կյանք» և սիրով ընդունել Աստծո տված «զորության, սիրո և զգաստության» (Հմ.7) պարգևները:

Աղոթք - Երկնավոր Հայր, շնորհակալ եմ, որ ինձ ազատում ես Հիսուսի հանդեպ ունեցած հավատքով: Օգնի՛ր, որ կարողանամ հաջորդ սերնդին փոխանցել ստացածս պարգևներն ու ավետարանի ճշմարտությունը: Ամեն:

Սեր ծնողներից մեզ փոխանցված անկեղծ հավատքը փոխանցենք մեր զավակներին:

Կարդա՛ր
Բ Տիմ. 1.1-8, 13-14

Միտքս բերելով այն անկեղծ հավատը, որ քո մեջ է, որ մախ քո Լոիդա տատի ու քո Եվնիկե մոր մեջ բնակվեց. համոզված եմ, որ այն քեզանում էլ է. Բ.Տիմ. 1.5

Հատուցման հույսը

ԹՎում էր, թե այդ մարդը շատ հեռու էր հատուցում տալուց, նրա գործած հանցանքները բազմաթիվ էին. ութ հրացանաձգություն, վեց սպանություն, 155 հրդեհ, որոնք 1970-ականներին ահաբեկել էին Նյու Յորքը: Նա նամակներ էր թողնում իր հանցանքի վայրերում՝ հեգնելով ոստիկանությունը, սակայն ի վերջո ձերբակալվեց և յուրաքանչյուր հանցանքի համար 25 տարվա ազատազրկում ստացավ:

Աստված խղճաց այս մարդուն, և նա հիմա հավատում է Քրիստոսին ու ժամանակ տրամադրում Աստվածաշունչ կարդալուն: Նա խոր ափսոսանք է հայտնում իր զոհերի ընտանիքներին և շարունակում աղոթել նրանց համար: Չնայած արդեն քառասուն տարի նստել է, և դեռ երկար ժամանակ է անցկացնելու կալանավայրում, հատուցման նրա հույսը դեռ հեռու է: Նա Աստծո մեջ է գտնում իր հույսը և հայտարարում. «Իմ ազատությունը մեկ բառի մեջ է՝ Հիսուս»: Աստծո խոսքում դարձի մեկ այլ պատմություն կա: Դամասկոսի ճանապարհին, Հարուցյալ Քրիստոսին հանդիպելուց առաջ, Սողոսը (որ հետո Պողոս դարձավ), «սպառնալիք ու մահ շնչելով, եկավ քահանայապետի մոտ» (Գործք. 9.1): Պողոսի սիրտն ու կյանքը վերափոխվեցին Հիսուսի միջոցով (Հմ. 17-18) և նա դարձավ պատմության մեջ Նրա ամենահզոր վկաններից մեկը: Նա, որ ծրագրել էր քրիստոնյաների մահը, իր կյանքը նվիրեց ավետարանի հույսը տարածելու գործին: Շատ պատմություններ կան, որ թատերական են թվում, սակայն դրանց ետևում թաքնված ճշմարտությունը նույնն է: Մեզանից ոչ մեկը արժանի չէ Աստծո ներումին, բայց Հիսուսը հզոր Փրկիչ է, նա «լիովին կարող է փրկել նրանց, ովքեր իրենով մոտենում են Աստծուն» (Եբ. 7.25):

Աղոթք - Սիրելի՛ Հիսուս, շնորհակալ եմք մեզ շատ սիրելուդ համար: Դու մեռար, որպեսզի մեզ հաշտեցնես Քեզ հետ: Ամեն:

**Որքան էլ դժվար թվա մեր հատուցումը, մեր փրկությունը
Տեր Հիսուսի միջոցով անհնար չէ:**

Կարդա՛ր
Գործք 9.1-4, 10-18

Ամեն ոք, ով Տիրոջ
անունը կանչի, կփրկվի:
Գործք. 2.21

Մի պարզ խնդրանք

Բժիշկներն ասացին, որ կնոջ աչքի ցանցաթաղանթը պոկվել է և այլևս հնարավոր չէ վերականգնել: Տասնհինգ տարի առանց տեսողության ապրելուց, բրայլյան գրերը սովորելուց ու ձեռնափայտով քայլելուց հետո նրա կյանքը արմատապես փոխվեց, երբ ամուսինը մեկ այլ մասնագետի հարցրեց, թե արդյոք կարելի՞ է նրան օգնել: Բժիշկը խոստացավ բուժել, երբ պարզվեց, որ մոնտանացի այդ կնոջ մոտ սովորական կատարակտ էր: Երկու աչքն էլ վիրահատելուց հետո կինը սկսեց լիարժեք տեսնել:

Կարդա՛

Գ. Թագ. 5. 9-14

Դեռ նրանք ձայն չտված՝ պիտի լսեմ նրանց: Ես. 65.24

Մեկ այլ պարզ հարցում էլ քաջ ռազմիկ Նէեմանի կյանքը փոխեց: Նա տառապում էր բորոտությամբ և զայրացավ, երբ «Եղիսէեն մարդ ուղարկելով նրա մօտ՝ ասաց. «Գնա՛ յոթ անգամ լվացվի՛ր Հորդանան գետում, քո մարմինը կբուժվի, և դու կը մաքրվես»: Եվ Նէեման քաջին ծառաները մի պարզ հարց ուղղեցին. «Հա՛յր, եթե մարգարեն դժվար բան խնդրեք, չպե՞տք է կատարելիք» (Հմ. 13): Համոզվելով, որ ճիշտ են ասում՝. «Նէեմանն իջավ ու յոթն անգամ թաթախվեց Հորդանան գետի մեջ, ինչպես Եղիսէեն էր ասել, և նրա մարմինը դարձավ մատղաշ երեխայի մարմնի նման. նա մաքրվեց (Հմ.14):

Մեր կյանքում էլ երբեմն խնդիրներ ենք հաղթահարում, որովհետև չենք հարցնում Աստծուն, թե «Կօզնե՞ս», «Կառաջնորդե՞ս ինձ», «Գնա՞մ»: Մեզ օգնելու համար Նա բարդ հարցեր չի պահանջում : Աստված խոստացավ Իր ժողովրդին. «Դեռ նրանք ձայն չտված՝ պիտի լսեմ նրանց» (Ես. 65.24):

Աղոթք - Սիրելի՛ Երկնավոր Հայր, երբ կյանքը կթվա բարդ ու դժվարին, շնորհակալ եմ մեր պարզ հարցերը լսելու Քո խոստման համար: Ամեն:

Բարդ աղոթքներ մատուցելու կարիք չկա:
Աստված լսում է ու պատասխանում:

Նավարկել կյանքի հորձանքներում

«Ամենքդ դեպի ձախ: Երեք անգամ թիավարեք դեպի իմ կողմը», - գոռաց մեր լաստանավի առաջնորդը, և ձախ կողմում եղողները սկսեցին շատ արագ նավարկել, որպեսզի լաստանավը հեռացնեին սաստիկ հորձանքից: Այսպես մի քանի ժամ սովորեցինք առաջնորդի ցուցումներին հետևելու կարևորություն մասին: Նրա հանդարտ ու ազդեցիկ ձայնը հնարավոր դարձրեց, որ նույնիսկ նավարկության շատ քիչ փորձ ունեցող վեց հոգին կարողանան հետևել կատաղի դահավիժող ջրերին և լավ արդյունք ցույց տան: Կյանքն էլ ունի իր բազում հորձանքները: Մի պահ սահուն ընթացք է, հաջորդ ակնթարթին անհրաժեշտ է լինում թիավարել խենթի նման՝ խուսափելու պտտվող հորձանքներից: Այդ լարված պահերը ընդգծում են մեր կողքին կարող առաջնորդ ունենալու անհրաժեշտությունը: Մի վստահելի ձայն, որը կողմի մեզ փոթորիկների մեջ նավարկելիս: 31-րդ սաղմոսում Աստված խոստանում է այդ ձայնը լինել, երբ ասում է. «Քեզ կիմաստնացնեմ ու խելամիտ կդարձնեմ քո ընթացած ճանապարհին» (Հմ.8): Իսկ մինչ այդ տեսնում ենք, որ մեր մեղքերը խոստովանելն (Հմ.5) ու աղոթքով Նրան խնդրելը (Հմ.6) կարևոր դեր են խաղում, որ Ինքը լսի մեր կարիքների մասին: Ես մխիթարվում եմ այն իրողությունամբ, որ Աստված խոստանում է. «Քեզ կիմաստնացնեմ ու խելամիտ կդարձնեմ և աչքերս վրադ կպահեմ» (Հմ.8): Սա մի հիշեցում է, թե Իր առաջնորդությունը հոսում է Իր սիրուց: Աստված խոստացել է առաջնորդել մեզ նույնիսկ կյանքի խուժերում:

Աղոթք - Հայր, շնորհակալ եմ մեզ առաջնորդ լինելու Քո խոստման համար: Օգնիր, որ Քեզ խնդրեմ ու նայեմ, թե ինչպես ես ուղղում կյանքիս ընթացքը: Ամեն:

Մեր կյանքի իրավիճակները կարող են հորձանքների նման լինել: Բայց կարելի է անսալ Աստծո հզոր ձայնին, որը մեզ առաջնորդում է:

Կարդա՛ր Սաղմոս 32. 5-11

«Քեզ կիմաստնացնեմ ու խելամիտ կդարձնեմ քո ընթացած ճանապարհին և աչքերս վրադ կպահեմ»: Սաղ. 31.8

Նյութերի ցանկ

Աղոթք	Ապր. 11,29, մայ. 7, Հուն. 29
Ամուսնութիւն.....	Հուն. 14
Ապաշխարութիւն.....	Ապր. 21, Հուն. 13
Առանձնութիւն.....	Մայ. 24
Աստվածաշունչ.....	Ապր. 14,16,19, Հուն. 18
Աստծու հետ հաղորդակցութիւն.....	Ապր. 13, Հուն. 9
Աստծու հոգածութիւնը.....	Ապր. 17,18,22,27
Աստծուն մեծարանք.....	Մայ. 29
Աստծու սերը	Ապր. 11,15,17,26, մայ. 3,10
Աստծուն վստահել.....	Ապր. 18,20,25, մայ. 1,9,11,14,27 Հուն. 1,16,20,22,26,30
Ավետարանչութիւն.....	Ապր. 8,11, մայ.11, Հուն. 10
Բարեկամութիւն.....	Ապր. 15, Հուն. 2
Գոհունակութիւն.....	Ապր. 4., Հուն. 16
Դրախտ.....	Մայ. 21
Եկեղեցական կյանք.....	Հուն. 14
Երջանկութիւն.....	Ապր. 12,16, մայ. 20,30, Հուն. 9,19
Ինքնապատկեր.....	Հուն. 23
Խոնարհութիւն.....	Մայ. 13, Հուն. 5,6
Խորհրդատվութիւն.....	Հուն. 27
Ծառայութիւն.....	Հուն. 21
Կասկած.....	Մայ. 9
Կյանքի պայքարներ.....	Ապր. 18,20,25, մայ. 1,14, Հուն. 30
Կռապաշտութիւն.....	Հուն. 16
Հալածանք.....	Ապր. 10,24, Հուն. 22
Հանգիստ.....	Ապր. 21, Հուն. 13
Հավատք.....	Մայ. 11, 23
Հավիտենական կյանք.....	Ապր. 3
Հնազանդութիւն.....	Մայ. 3,23
Հոգեկան բարեփոխութիւն.....	Հուն. 15
Հոգեկան կարգապահութիւններ.....	Հուն. 18

Հոգեկան աճում.....	Հուն. 25
Հույս.....	Մայ. 4, 23
Հուսահատություն.....	Ապր. 27
Ուրախություն.....	Մայ. 30
Ուրիշ հավատացյալների հետ ապրել.....	Ապր. 23, Հուն. 3
Ուրիշներին ներել.....	Մայ. 6, Հուն. 2
Պաշտամունք.....	Ապր. 28, մայ. 8, Հուն. 17
Սեր ուրիշների հանդեպ.....	Մայ. 25, Հուն. 7,14,21
Սխալ ուսուցմունք.....	Ապր. 19
Սուգ.....	Ապր. 12, մայ. 22
Սուրբ Հոգի.....	Ապր. 13, մայ. 15,31, Հուն. 25
Ստեղծագործություն.....	Ապր. 22, մայ. 29
Վախ.....	Մայ. 1,15, Հուն. 26
Տալ.....	Ապր. 2, մայ. 28, Հուն. 21
Տանջանք.....	Ապր. 27, մայ. 9,27
Տերունական ընթրիք.....	Մայ. 2
Փորձություն.....	Հուն. 5
Փրկություն.....	Ապր. 6,7,8,10,30, մայ. 11,18,23,25, Հուն. 6,13,19,24,28
Քաջակերություն.....	Ապր. 14,23, Հուն. 3,12
Քրիստոսի կյանքն ու ուսուցմունքը.....	Հուն. 4,8
Քրիստոս՝ Փրկիչ.....	Ապր. 5
Քրիստոսի Աստվածությունը.....	Հուն. 4
Քրիստոսի մահը.....	Մայ. 25
Քրիստոսի համար ապրել.....	Ապր. 7,9, մայ. 22,26,30
Քրիստոսի հարությունը.....	Ապր. 12
Քրիստոսի վերադարձը.....	Մայ. 21
Քրիստոնեական կյանք.....	Մայ. 19

Կարևոր ազդ

Հարգելի՛ բարեկամ

Եթե գիտեք մարդկանց, ովքեր ուզում են ունենալ այս գրքույկի հաջորդ համարները, կարող եք նրանց անունները գրել ներքևի կտրոնի վրա և ուղարկել հետևյալ հասցեով.

Ամերիկայի Հայ Ավետարանչական Ընկերակցության
Հայաստանի մասնաճյուղ

0019, Երևան, Մարշալ Բաղրամյան 18
Հեռախոս՝ (010) 54-35-76, (010) 54-35-78
Էլփոստ՝ amaa.armenia@amaa.am
Կայքէջ՝ www.amaa.am

Արցախ

ք. Ստեփանակերտ

Ալեք Մանուկյան 7^ա

Հեռ. (374) 94 52 75, 95 02 95

Անուն, ազգանուն

Հասցե.....

Հեռախոս.....



Գրքույկը ստանալու համար դիմել Ամերիկայի Հայ
Ավետարանչական Ընկերակցության Հայաստանի և
Արցախի մասնաճյուղերին

0019, Երևան, Մարշալ Բաղրամյան 18
Հեռ.՝ (010) 54-35-76; (010) 54-35-78
Էլփոստ՝ amaa.armenia@amaa.am
Էլկայք՝ www.amaa.am

Արցախ
375000 ք. Ստեփանակերտ, Ալեք Մանուկյան 7ա
Հեռ. (+374) 94 52 75, (+374) 95 02 95